

ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԵՐՏԵՐԵԱՆ

Spiritual

*Փռնիզ և
Բարոյակերպ*

Հարություն ԺԳ.

Spiritual Reflections

*Փռնիզ և Բարոյակերպ
Spiritual Reflections*



WESTERN DIOCESE OF THE ARMENIAN CHURCH
OF NORTH AMERICA

3325 N. GLENOAKS BLVD., BURBANK, CA 91504
TEL.: (818) 558-7474 FAX: (818) 558-6333
EMAIL: info@armenianchurchwd.com
www.armenianchurchwd.com

PRINTED BY: DIOCESAN PRESS 2017

2017

ՅՈՎՆԱՆ ԱՐԺ. ՏԵՐՏԵՐԵԱՆ

*Փռնիզ մը
Քարոյնէն*

Հարոյր ԴԳ.

Spiritual Reflections

2017

Արեւմտեան Թեմի հաստատման
90-ամեակի առիթով



On the occasion of the 90th Anniversary
of the establishment of the Western Diocese
of the Armenian Church of North America

Ի ՆԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ**

ԱԶՆԻԻ ՄԵԿԵՆԱՍՈՒԹԵԱՄԲ՝
ՊԵՐՃ ՌԻՉԱՐԴՏ ՍՎԱԶԼԵԱՆԻ

Ի Յիշատակ իր սիրեցեալ մօր
ՌԵԲԵԿԱ ՍՎԱԶԼԵԱՆԻ



This publication was made possible
through the generous contribution of

BERJ RICHARD SVAZLIAN

In Loving Memory of his mother

REBECCA SVAZLIAN

*«Օրհնէ Տէրը, ով իմ անձս,
էւ մի՛ մոռնար անոր բոլոր բարիքները»:*

(Մաղմոս 103:1)



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Էջ
Յառաջաբան	7
Հոգեւորականաց ուղղուած պատգամ	12
Նոր Տարւոյ եւ Սուրբ Ծննդեան պատգամ	14
Յիսուսի Ծնունդը առանցքը մեր հաւատքի կեանքին	17
Նոր Տարւոյ շեմին	19
Համայնքի Տարի	22
Գործակիցներ Աստուծոյ սուրբ գործին	23
Հոգեւոր վերածնունդ	26
Դէպի Աստուած տանող ճանապարհ	28
Աստուածային եւ երկնային շնորհին ընդառաջ	30
Աստուծոյ նորած սպասաւորը	32
Մեզի վստահուած է կեանքի տնտեսութիւնը	35
Ի՞նչ է խորհուրդը Աւագ Շաբթուան	37
Ճանապարհորդութիւն Աստուծոյ հետ	39
Աստուած մեզի հետ է	42
Խաչի ճանապարհը` Լոյսի ճանապարհ	45
ԶՍուրբ Թաղումն Քո Մեծացուցանեմք	47
Անմահին Թագաւոր	48
Տուք աւետիք եթէ Փեսայն քո յարուցեալ Յաղթեաց մահու Իշխանութեամբ	50
Դէպի առաւել կեանք	52

Ծաղկագարդ	54
Աւագ Շաբաթ	57
Մբ. Զատիկ տօն Յարութեան	62
Արցախի կանչը	65
Ապրիլեան խորհրդածութիւններ	68
Քրիստոսի Համբարձումը Եկեղեցու ծնունդն է	72
Ասիկա Աստուծոյ Դուռն է	74
Յաւերժութեան եւ ամբութեան ժայռը	76
Տօն Սուրբ Էջմիածնի	79
Մեր Թեմի նոր Հարսը	81
Աստուածածնի տօնը հայելին է մեր կեանքին	84
Ի՞նչ է Եկեղեցւոյ սպասաւորութիւնը	86
ՀԵՀԵՄ-ը՝ առանցքն է Եկեղեցւոյ առաքելութեան մէջ	92
Դառնանք պատկերը Հայաստանի	94
Քրիստոնէական ինքնութիւն	96
Մեծ մարտիկը	109
Հրաշակերտ եւ զօրեղ Փայտ Խաչի	111
Նմանինք Մանուկներու	113
Միայն հաւատայ	115
Ապրինք խոնարհ կեանքով	117
Սրբալոյս Միւռնը	119
Տէրունական Աղօթքը	121
Մամուլին դերն ու ազդեցութիւնը	128

ԱՌԱՋԱԲԱՆ

Ահա եւ մի նոր “ծնունդ” Մայր Եկեղեցու հազարամյա գրական անդաստանում, որի հեղինակը Հայց. Առաքելական Սուրբ Եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի Արեւմտյան Թեմի Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Հովնան Արքեպիսկոպոս Տերտերյանն է:

Առաջնորդ Սրբազան հոր թվով 13-րդ քարոզգիրքը, յուրահատուկ մի ուղեցույց է՝ միտված լույս սփռելու մեզ հուզող հարցադրումերին ու խնդիրներին:

Գաղտնիք չէ, որ մեզանից յուրաքանչյուրը կամա թե ակամա բախվում է կյանքի կարեւորագույն խնդիրներին եւ վերջիններս հաղթահարելու եւ լուծումներ գտնելու ակնկալիքով՝ բախում է բազում դռներ, որոնք, մասնավորաբար մեր օրերում, հաճախ օտար եւ անհարազատ են լինում: Ներկա հավաքածուն մեզ է փոխանցում Հայ հոգեւորականի հարուստ ներաշխարհն արտացոլող գրություններ, որոնցով հազարամյակներ շարունակ սնվել եւ կրթվել է հայ մարդը՝ ծնելով հոգու եւ մտքի հանճարներ: Ուստի, խիստ խրախուսելի է, որ մինչեւ օտար վայրերում սնունդ փնտրելը, հայ մարդն այն փնտրի իրեն հոգեհարազատ քարոզների այս հավաքածուի մեջ:

Սույն քարոզգրքում խորհրդանշորեն առանձնացրել եմ յոթ մասնավոր գաղափարներ, որոնք, կարծեք, միաձուլում են գրքի չորս տասնյակից ավելի քարոզները:

Վերջիններն են՝

Ա. Աստված

Բ. Մարդ

Գ. Ազգ

Դ. Եկեղեցի

Ե. Երիտասարդություն

Զ. Հոգեկան հանգստություն

Է. Ազատություն

Ա. Աստված

Աստված մեր *“հոգու ճարտարապետն”* է, ով մեզ ստեղծել է Իր Պատկերով եւ հնարավորություն ընձեռել, որ մեր կյանքով նմանվենք Իրեն՝ լինենք կատարյալ ինչպես, որ Ինքն է Կատարյալ (Մատթ. 5:48): Աստված լոկ վերացական ուժ կամ գործություն չէ, Նա Անձ է եւ ցանկանում է անձնական կապ հաստատել Իր արարածների հետ, մասնավորաբար նրանց հետ, ովքեր Իր Որդուն ընդունելով՝ որդեգրության պատիվ են ստացել եւ իրավասու դարձել Աստծուն *“Հայր”* կոչել (Հռոմ. 8:15):

Բ. Մարդ

Մարդ արարածը ստեղծված լինելով Աստծո Պատկերով (Ծննդ. 1:27)՝ հաճախ աղավաղում է այդ սուրբ Պատկերը՝ իր անգործության եւ տկարությունների պատճառով: Երանելի են այն մարդիկ ովքեր չեն նստում անգործության խավարում, այլ հավատի գործերով տոգորված՝ դառնում են *“Աստծոյ ձեռքերը”*: Այլ խոսքով՝ այնպես են ապրում, *“որ ուրիշի կեանքին մեջ բացուեն որպէս նոր կեանք”*:

Գ. Ազգ

“Մարդն իր ինքնութիւնը բնորոշող երկու գլխաւոր յատկանիշներ ունի. մեկն իր անունն է, միւսը՝ պատկանելիութիւնը”: Հայի պատկանելիությունը սրբազան պարգէւ է՝ շնորհված Ամենակարողի կողմից, պարգէւ, որը հազարամյակներ շարունակ կերտվել է սրբու-

թյամբ պահվել է մեր նախնիների կողմից: Ուստի, եթե ցանկանում ենք ինքներս մեզ խորապես ճանաչել եւ հասկանալ մեր հարատեւության գաղտնիքը, ապա, ամեն բանից առաջ, պատասխանը պետք է փնտրենք *“Հայոց աւանդութեանց նկատմամբ մեր խոնարհումին մէջ”*:

Դ. Եկեղեցի

Եկեղեցին Աստծո Տունն է՝ օծված եւ նվիրագործված Մբ. Հոգու ներկայությամբ, որի քարեղէն պատերի ներքո կառուցվում է *“հոգւոր ու ապրող Եկեղեցին”*, *“ստեղծագործող Եկեղեցին”*, *“որ Աստուծոյ սիրովն ու իմաստութեամբ կ’առաջնորդուի դէպի նոր կեանք”*: Ուստի, Եկեղեցին նոր կյանքի հնոցն է, որի մաքրագործող հրի մէջ զտվելով՝ այլակերպվում եւ դառնում ենք *“Նոր Մարդ”*, *“ստուածահաճոյ մարդ”*:

Ե. Երիտասարդություն

“Առհասարակ սովոր ենք կրկնել ժողովրդական այս խօսքը, որ երիտասարդութիւնը ապագան է, առանց սակայն անդրադառնալու, այն ճշմարտութեան, որ երիտասարդութիւնը ներկայութիւն է մեր կեանքին մէջ”: Այս “ներկայության” պականս այսօր խիստ զգալի է իսկ այն լրացնելն՝ առավել քան կենսական: Նույն երիտասարդը սակայն՝ *“ամէն բանէ առաջ իր մէջ պիտի զարգացնէ կարգապահութեան օրէնքը”*, *“Դառնայ Հայ Եկեղեցւոյ տանտէրը”* եւ *“Գիտնա գոհուիլ ի սէր Հայ եկեղեցւոյ”*:

Զ. Հոգեկան հանգստություն

Մարդուս կյանքը հարատեւ փնտրտութիւն է վաղեմի հոգեկան հանգստությունը եւ ներքին խաղաղությունը վերագտնելու համար: Հետաքրքրականը սակայն այն

է, որ մենք հոգեկան հանգստության կորստի պատճառը փնտրում ենք արտաքին ազդակների կամ ուրշների մեջ, բայց՝ ոչ ինքներս մեր: Սրբազան Հայրը մեզ հիշեցնում է, որ մեր խնդիրների արմատը նախ մեր մեջ պետք է փնտրել, եւ առաջնորդվել ներողամտության ոգով, քանզի՝ *“Մշտապէս խռովեալ եւ ալեկոծ յոյգերով կ’ապրի այն անձն ով դժուարութիւն ունի ներելու: Այսպիսին շատ հեռու է Աստուծմէ եւ հոգեւին անհանգիստ”*:

Է. Ազատություն

Ազատությունը մարդկության թերեւս ամենից ցանկալի վիճակն է, որի համար միլիոնավորներ, պատմության առաջին իսկ օրերից սկսած, զոհել են իրենց ամենաթանկ պարգեւը՝ կյանքը: Քչերս ենք սակայն անդրադառնում, որ մեր Տիրոջ խաչի զոհողությունը նույնպէս կատարվեց ազատության համար՝ կատարվեց մեղքի եւ մահվան ճիրաններից ազատվելու, կատարվեց համայն մարդկության համար: Հարության խորհուրդը վերջնական հաստատումն է այդ բաղձալի Ազատության: Ահա թե ինչու. *“Չատկական Տոնին խորհուրդը կարելի է ամփոփել մէկ բառին մէջ, “Ազատութիւն”*:

Սրբազան Հայրը վերոհիշյալ յոթ խորհուրդները միաձուլում է միմյանց՝ մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի անձով, Ով իմաստավորում է Աստված – Մարդ փոխհարաբերությունը, Եկեղեցու գոյությունը, Հայ Ազգի կեցության իմաստը, հոգու հանգստության ու խաղաղության ձեռքբերումը եւ մեղքից ազատվելու առհավատչյան, քանզի մարդուս միակ ճանապարհը *“կեանքն ի Քրիստոս ուղղորդելն է”*:

Եկեք ուրեմն, մեր Տիրոջ եւ Փրկչի կենսատու լոյսն իբրեւ ճրագ (Սաղմոս 119:105) ունենալով, մոտենանք Սրբազան Հոր այս հոգեպարար քարոզգրքին եւ լուսավորվելով՝ մենք էլ մեր հերթին լուսավորենք մեր շրջապատը, քանզի արդարեւ դրան ենք կոչված իբրեւ Քրիստոնյաներ (Մատթ. 5:14):

Որդիական Ակնածանոք՝
Հայկ Մադոյան

Օգոստոս 28, 2017

ՀՈԳԵԻՈՐԱԿԱՆԱՑ ՈՒՂՂՈՒԱԾ ՊԱՏԳԱՄ

«Ո՛չ գիտեք եթե փոքր մի խմոր զամենայն զանգուածն խմորէ»:

(Մ. Կորնթ. 5:6)

Միքեղեալ Եղբայր ի Քրիստոս,

Աւանդութիւն ենք դարձուցած Թեմիս հոգեւորականաց յէլ մասնայատուկ պատգամ Նոր Տարուոյ եւ Մր. Ծննդեան Տօներու նախօրէին: Այս տարի ձեզի հետ կ'ուզենք բաժնել մեր մտածումները հիմք ունենալով Պօղոս Առաքեալի Կորնթացոց ուղղուած վերոյիշեալ խօսքը, որն իրօք մտածել կու տայ իւրաքանչիւրիս, որ հոգեւորականը իր կոչումով փոքր խմորն է, որ Աստուծոյ կանչին պատասխանելով իրմով կը խմորէ զանգուածը, որը մեզի վստահուած հաւատաւոր ժողովուրդն է: Ուրեմն, սա ինչ առանձնաշնորհում է, որ մեր ծառայական կեանքով մենք դառնանք Աստուծոյ խօսքին հրաւերը ժողովուրդի կեանքին մէջ:

Մեր կոչն է Թեմիս բոլոր հոգեւորականներուն, որպէսզի Նոր Տարին՝ Քրիստոսի Մր. Ծնունդովը հրաշագործուած մեր քահանայական կեանքին մէջ վերածենք օրհնեալ տարիի մը, ոչ միայն մեր անձերուն համար, այլեւ՝ եկեղեցոյ հաւատացեալներուն համար:

Մեր աղօթքն է առ բարին Աստուած, որ ձեզի պարգեւէ կենաց քաջառողջ տարիներ, որպէսզի շարունակէք ծառայել Աստուծոյ եւ միասնաբար ի Քրիստոս նոր կեանքին առաջնորդենք մեր ժողովուրդի զաւակները:

Կեանքն ապրինք այնպիսի ոճով մը, որ ուրիշի կեանքին մէջ բացուինք որպէս նոր կեանք: Մեր խորհրդածութիւնը կ'աւարտենք մեծ մտածողին հետեւեալ խօսքով.

«Մեծ անհատականութիւններու կեանքը կը թելադրէ մերը եւս դարձնելու ազնիւ ու վսեմ, ու հեռանալով կեանքէն՝ ոտնահետքեր դրոշմել ժամանակի աւագութիւն վրայ» (Հ. Լօնկֆելօ):

Մնամք աղօթակից՝
Առաջնորդ

ՆՈՐ ՏԱՐԻՈՅ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՄ

«Եւ զգենուլ զՆոր Մարդն որ ըստ Աստուծոյն հաստատեալ է արդարութեամբ եւ սրբութեամբ ճշմարտութեանն»:

(Եփես. 4:24)

Նոր Տարին եւ Սբ. Ծնունդը երկու հազարամեակ շարունակ մարդուն կեանքը բարձրացուցած են նոր մակարդակի մը, հոգեւոր եւ բարոյական պատուանդանի մը վրայ, որ կ'առաջնորդէ մարդս առ բարձրեալն Աստուած: Եթէ հաստատօրէն վճռենք վերափոխել մեր կեանքին ընթացքը՝ հաստատելով զայն Քրիստոս Աստուածորդու վրայ, անպայմանօրէն մեր էութեանը մէջ պիտի զգանք նոր մարդուն ծնունդը: Որովհետեւ, եթէ անհատին եւ հաւաքականութեան կեանքը մնայունօրէն չպիտի առաջնորդուի դէպի նոր մակարդակ, ապա մարդուն կեանքը չի կրնար ինքզինք գերազանցել եւ բարձրանալ առ Աստուած:

Աստուծոյ կամքին արտայայտութիւնն է արդարութիւնը, սրբութիւնը եւ ճշմարտութիւնը: Կամայ թէ ակամայ հեռացած ըլլալով Աստուծմէ, եթէ մենք մերժենք վերոյիշեալ գերագոյն արժէքները, մեր կեանքը առաջնորդած պիտի ըլլանք դէպի խաւար ու կործանում, դէպի պատերազմ եւ մարդկային զանգուածներու աղքատութիւն ու տնտեսական դրոյթներու խախտում: Միակ այլընտրանքը մեր կեանքը ի Քրիստոս ուղղորդելն է՝ զայն հաստատելու աստուածային սկզբունքներուն՝ արդարութեան, սրբութեան եւ ճշմարտութեան վեմին վրայ:

Նոր Տարին մեր Տիրոջ եւ Փրկչին Յիսուսի հրաշալի ծնունդով նուիրագործուած է։ Այս իմաստով դժուար է զատել մէկը միւսէն։ Նոր Տարին կը բերէ Յիսուս Փրկչի ծննդեան սքանչելի աւետիսը, որով կը նորոգուի մարդուս կեանքը եւ անոր մէջ կը գերակայէ աստուածայինը։ Եւ շատ բնական է, որ մարդը, որ կ'ըմբռնուի Նոր Տարին եւ Սբ. Ծնունդը իր հոգեւոր աշխարհին մէջ կ'ապրի ուրախութիւն եւ տօնական տրամադրութիւն։ Ինչպէս մանուկի մը ծնունդը ուրախութիւն կը բերէ ընտանիքէն ներս, այդպէս ալ՝ ուրախ է այն մարդը, որ իր էութեանը մէջ կ'ապրի նոր կեանքի ծնունդը, նոր մարդուն ծնունդը։

2015 թուականը մեր ժողովուրդին համար չափազանց յատկանշական է, որովհետեւ ազգովին պիտի նշենք Հայոց Ցեղասպանութեան 100 ամեակը, մեր խոնարհումը ու յարգանքը մատուցանելով նահատակներու յիշատակին, նաեւ՝ ուխտելով պահել - պահպանել մեր նախնեաց կողմէ մեզի որպէս հոգեւոր ժառանգութիւն վստահուած Հայրենիքը, Սբ. Էջմիածինը, մեր ազգային սրբազան ասանդները։ Սբ. Ծնունդը կու գայ մեզի լեցնելու գալիքի սպասումներով, լաւատեսութեամբ, յոսով, աստուածային զօրութեամբ, հաւատքի եռանդով եւ տեսիլքի գիտակցութեամբ՝ նոր ժամանակը ապրելու համար ստեղծագործ կեանքով։ Ստեղծագործ կեանքը բարոյական մեծագոյն յաղթանակն է։ Ստեղծագործել կը նշանակէ պահել Աստուծոյ տուածը եւ աւելին՝ գործակից դառնալ Աստուծոյ։ “Աճեցէք, բազմացէք եւ երկիրը լեցուցէք եւ տիրեցէք անոր” (Ծննդ. 1:28)։

2015-ը, մեր Թեմական կառոյցէն ներս պիտի ըլլայ նաեւ Երիտասարդութեանը նուիրուած տարի։ Մենք կը հաւատանք, որ Հայոց Ցեղասպանութեան 100 ամ-

եակի ոգեկոչումները իսկապէս կ'իմաստաւորուին, երբ մեր երիտասարդները նոր ձեռքբերումներ կ'արձանագրեն, կը յառաջդիմեն կեանքի զանազան մարզերէն ներս, բարձրունքներ կը նուաճեն գիտութեան, մշակոյթի եւ այլ ոլորտներու մէջ՝ անպայմանօրէն Մայր Հայրենիքին եւ Սբ. Էջմիածնին պատկանելու հոգեւոր գիտակցութեամբ: Այսպիսով կրնանք երաշխաւորել յաւերժականութիւնը մեր ազգի ու Եկեղեցւոյ: Գալիք տարին մեր Թեմական կեանքին մէջ պիտի ըլլայ լուսաւոր տարի մը, որովհետեւ հայ երիտասարդութեան վերագարթօնքով է պայմանաւորուած նաեւ մեր ազգի կեանքին մէջ լոյսի ճանապարհը: Մեր հոգու պարտքը պիտի ըլլայ առաջնորդել հայ երիտասարդը դէպի Աստուած, դէպի քրիստոնէական հաւատքի կեանք, դէպի Հայաստան, դէպի Սբ. Էջմիածին, դէպի հոգեւոր ու բարոյական արժէքներով հարուստ կեանք՝ Աստուծոյ փառքին համար, մեր բազմաչարչար ժողովուրդի միւլթարութեան համար: Երիտասարդութիւնն է մեր յոյսի ու լոյսի փարոսը, որ փառաւոր գալիքի խոստում կը ցոլացնէ անցեալի հորիզոնին վրայ:

Միբեյլի՛ հաւատաւոր եւ նուիրեալ զաւակներ մեր Սբ. Եկեղեցւոյ, ձեզի կը մաղթենք քաջառողջ երկար կեանք, բեղմնաւոր գործունէութիւն, եւ յարատեւ յաջողութիւն ձեր բոլոր առաքինի գործերու մէջ: Կը հայցենք Ամենակալէն, որ Ինք ըլլայ ամենքիս օգնական եւ առաջնորդ գալիք 2015-ին՝ մեր կեանքին մակոյկը ապահով հասցնելով դէպի բարի ու խաղաղ նաւահանգիստ:

*«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ,
Օրհնեալ է Յայտնութիւնն Քրիստոսի»:*

ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ ԱՌԱՆՅՔԸ ՄԵՐ ՀԱԻԱՏՔԻ ԿԵԱՆՔԻՆ

«Մարմին առանց հոգւոյ մեռեալ է, սոյնպէս եւ հաւատն առանց գործոց մեռեալ են»:

(Յակոբոս 2:10)

Ծնունդ է այսօր մեր Սբ. Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն: Ծննդեան ոգին կ'ապրէր քրիստոնեայ աշխարհը անցնող մի քանի շաբաթներու ընթացքին: Հոգեւորապէս նախապատրաստուելով տօնելու համար Քրիստոսի Ծնունդը, երբ ընտանիքներ ու հարազատներ քով-քովի գալով առաւել եւս կ'ամրապնդէին իրենց հոգեւոր կապը՝ Յիսուսի Ծնունդը դարձնելով առանցքը իրենց հաւատքի կեանքին: Յիսուսի Ծննդեան տօնը հրաշալի խորհուրդներ կը բովանդակէ իր մէջ մեր հոգեւոր կեանքը հարստացնելու եւ անոր նպատակ հաղորդելու տեսանկիւնէն դիտուած: Անոր հրաշալի Ծնունդը կը դարձնենք հայելին մեր ներաշխարհին, որպէսզի յստակութեամբ տեսնենք անցեալն իր առաւելութիւններով ու թերիւններով, եւ, մանաւանդ, կատարենք նոր խոստումը, տրուած կեանքը իմաստաւորելու գիտակցութեամբ:

Այս տարի մեր ծննդեան տնօրհնէքի աւանդական այս հաւաքին առիթով պատրաստուած մեր մտածումները հաստատեցինք Յակոբոս Առաքեալի հետեւեալ պատգամին վրայ. «Մարմին առանց հոգւոյ մեռեալ է, սոյնպէս եւ հաւատք առանց գործոց մեռեալ են»: Այս խօսքը էական նշանակութիւն ունի քրիստոնեային համար, որովհետեւ մեր հաւատքը կ'արդարանայ գործերով: Ինչպէս Աստուծոյ սէրը մարմնաւորուեցաւ Աստուածորդու Մարդեղութեամբը, Անոր երկինքէն-

երկիր իջնելովը, այդպես ալ մեր հաւատքը պէտք է մարմնաւորուի գործքով: Մեր եկեղեցական առաքելութեանը դաշտէն ներս հազարումէկ բարի գործ ունինք կատարելիք, որոնք թուարկելու պահանջքը չենք զգար: Բայց կ'ուզենք շեշտը դնել մէկ հիմնական ու նուիրական առաքելութեան մը վրայ, որուն մասին ալ արդէն իսկ անդրադարձած էինք Առաջնորդարանի մեր տարեկան օրացոյցով հաղորդուած պատգամին մէջ: Այս տարի Օսմանեան Կայսրութեան կողմէ գործադրուած Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի ոգեկոչման տարին ըլլալով մեր ուշադրութեան ու հոգածութեան շեշտը պիտի կեդրոնացնենք հայ պատանիին ու երիտասարդին վրայ, անոնց քայլերը առաջնորդելու համար դէպի քրիստոնէական հաւատքով ապրուած կեանք, դէպի Եկեղեցի ու Հայրենիք եւ դէպի հայ արժէքներ: Բոլորս ալ մեր քրիստոնէական հաւատքի կեանքին գործնականացումը պիտի տեսնենք ու գտնենք այս քայլին մէջ, որովհետեւ այս առաքելութեան եւ առհասարակ մեր բոլոր գործոց յաջողութիւնը պայմանաւորուած է համատեղ աշխատանքով ձեր քրիստոնէական սիրով ու նուիրումով: Առաւել աղօթքով ու սիրոյ կեանքով, ձեռք-ձեռքի տուած նուիրուինք մեր Սուրբ Եկեղեցոյ անսասանութեան, որպէսզի Սբ. Ծննդեան խորհուրդով ապրինք նոր ծնունդը մեր կեանքին եւ սկսինք նոր ճանապարհորդութիւն մը Քրիստոսի հետ, որպէսզի ապրինք սուրբ կեանքով, աստուածահաճոյ կեանքով, ու մշտապէս բարի գործերու արարումով:

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»

1 Յունուար, 2015

ՆՈՐ ՏԱՐԻՈՅ ՇԵՄԻՆ

Աստուծոյ կամօք բոլորեցինք 2015 թուականը եւ նորոգեալ կեանքով, նոր տեսիլքներով ու առաւել զօրացած մեր քրիստոնէական հաւատքին մէջ պիտի շարունակենք եկեղեցանուէր մեր կեանքը եւ 2016 տարին պիտի իմաստաւորենք Թեմի կեանքէն ներս մեր աշխատանաց մտասելեռումը դարձնելով համայնքը՝ իր բոլոր երեսներով: Քանզի համայնքը հիմքն է մեր բոլոր առաքելութեանց. համայնքը՝ քրիստոնէական հասկացողութեամբ հաւատացելոց աղօթքի կեանքով խմորուող մեծ ընտանիքն է, ուր կը քարոզենք Աստուծոյ խօսքը, ողջ հաւատացելոց կեանքը կը խմորենք Աւետարանի պատգամներու առաջնորդութեամբ: Համայնքի կեանքին մէջ հոգեւոր կեանքին առանցքը Հոգեւոր Հովին, որ հաւատացելոց կապն է: Աւելի քան հարիւր տարիներ առաջ Խրիմեան Հայրիկ իր Կաթողիկոսական պատգամներով ամրապնդեց եկեղեցոյ կեանքը ծուխ-համայնք կազմակերպելու տեսիլքով, որը աւելի ուշ ժամանակի քաղաքական պայմաններու բերումով խանգարուեցաւ:

Մեր պատգամն է, որ մեր Թեմի հովանիին տակ գործող համայնքները առաջնորդութեամբ Հոգեւոր հովիւներուն եւ զօրակցութեամբ Ծխական Մարմիններուն առաւել բարեգարդուն ու կազմակերպելով համայնական կեանքը Աստուծոյ խօսքին առաջնորդութեամբ, եկեղեցական արարողութիւններու խնամեալ կատարումով, հոգեւոր պատգամներով, Կիրակնօրեայ եւ Շաբաթօրեայ Վարժարաններու վերակազմակերպումով, հոգեւոր սերտողութիւններով, եւ տակաւին այլ միջոցներով, որպէսզի արտաքին աշխարհին մէջ

ծնունդ առնող փորձությունները չխանգարեն բարոյական հիմքերը Հայ Եկեղեցւոյ:

Բացայայտ է, որ Թեմական կեանքին ներս համայնքներու կեանքին մէջ կայ հիմնական թերի մը՝ կը բացակայէ բաւարար չափով քարոզչական աշխատանքը մեր հաւատացելոց ջամբելու հոգեւոր ու ազգային գիտակցութիւն, հայոց քրիստոնէական ասանդութիւնը, հայոց պատմութեան դասերը, հայրենեաց սէրը հաղորդող զգացողութիւն, որոնք մեր զաւակաց հայեցի նկարագիրը կ'ապահովեն:

2015 թուականին ի Հայաստան եւ ի Սփիւռս աշխարհի ոգեկոչեցինք Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակը: Ճշմարիտ մարտահրաւերը այսօր կը դրուի մեր առջեւ, որպէսզի արդարացնենք անցնող տարուոյ մեծաւքանջ հանդիսութիւնները, խոստանանք հայ մանուկն, պատանին ու երիտասարդը առաջնորդելու դէպի իր հոգեւոր ու ազգային ասանդոյթները: Սա կարելի կը դառնայ, երբ ընտանիքը կը դառնայ առաջին դպրոցը, ուր ծնողները պարտ են իրենց զաւակաց հոգեպէս թրծել հաւատքով, աղօթքով, ազգային գիտակցութեամբ, քաղաքացիական ազնիւ պարտականութեանց ձեռքբերումներով: Ուրեմն, ընտանիքը մանրակերտն է համայնքին, եւ այդ պայման է, որպէսզի նոյն պատանին ու երիտասարդը իր Եկեղեցւոյ մէջ զգայ ինչպէս իր հարազատ տանը մէջ:

Տօնական տրամադրութիւններով դիմաւորեցինք Նոր Տարին եւ Սբ. Ծնունդը, բայց չմոռնանք մեր պարտականութիւնները: Ճշմարիտն այն է, որ ընտանեկան յարկէն ներս, բացառութիւնները յարգելի, աղօթքը կը բացակայէ, հոգեւոր դաստիարակութիւնը կը նուազի, ազգային ասանդութիւնները մոռացութեան կը տրուին

եւ այդ բոլորին տեղը կը գրաւեն միայն նիւթական ժամանցելի արժէքները:

Նոր Տարին պիտի իմաստաւորենք համայնքի հզօրացումով եւ այս առաքելութեան մէջ մենք կը յաջողինք միայն համատեղ աշխատանքով:

Համայնքի կեանքի յաջողութեան երեք հիմնական նախապայմաններն են.

Հոգեւոր կեանքը, ուսումնառութիւնը եւ հաղորդակցութիւնը, այլ խօսքով Եկեղեցի, Դպրոցն ու Հայ Թերթը ամուր պիտի պահենք, եթէ երբեք կ'ուզենք նկարագիր տալ մեր կեանքին, անցած օրերուն, հաստատութիւններուն:

2016 թուականին մեր Թեմական կեանքին մէջ անվերջ են նախաձեռնութիւններն ու աշխատանքները, որոնք էական են եւ անյետաձգելի, եւ որոնց մասին դուք օրը օրին տեղեակ կը դառնաք եւ կ'ակնկալենք ձեր մասնակցութիւնը: Բայց այնպէս ապրինք եւ այնպէս տնօրինենք, որ մեր համայնքները բարձրացնենք հոգեւոր կեանքի նոր մակարդակի մը վրայ: Այդ կարելի կը դառնայ բոլորի հաւատքի կեանքով, համատեղ աշխատանքով:

Ահաւասիկ այս զգացումներով կը շնորհաւորենք ձեր Նոր Տարին եւ Մբ. Ծնունդը, կ'աղօթենք եւ կը մաղթենք բոլորիս օրհնեալ Տարի մը, որպէսզի քաջառողջ ու եկեղեցանուէր կեանքով միշտ մեր հայեացքը պահենք դէպի Մայր Հայրենիք, ըլլանք հաւատարիմ քաղաքացիները այս հիւրընկալ երկրին, որուն բարիքները կը վայելենք:

Մբ. Ծնունդ 2016

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԻ

«ՉԱստուած ուրուք երբեք չիք տեսնալ. եթէ սիրեսցուք զմիմեանս, Աստուած ի մեզ բնակէ, եւ սեր նորա ի մեզ կատարեալ է»:

(Ա. Յովհ. 4:12)

2016 տարին մեր Թեմի մէջ կը հռչակենք որպէս համայնքի տարին: Համայնքը այլ խօսքով ի Քրիստոս հաւատացեալներու մեծ ընտանիքն է, որ իր կեանքը պէտք է շաղախէ աստուածային սիրով, որպէսզի զգանք ու ապրինք Աստուծոյ բնակութիւնը մեր հոգեւոր էութեանը մէջ:

Թեմական կեանքի առանցքը համայնքն է, առանց համայնքներու կազմութեան կարելի չէ ունենալ Թեմական կեանք: Համայնքը ընտանիքներով կազմուած մեծ ընտանիքն է, ուր կը կազմաւորուի եկեղեցին, երբ նոյն եկեղեցւոյ խորանէն կը քարոզենք Քրիստոսի Աւետարանը եւ խոստում կը կատարենք այն կեանքի կոչելու: Համայնքի կեանքը անհրաժեշտ է կազմակերպել իր բոլոր ոլորտներով, միշտ հիմք ունենալով Աստուծոյ սէրը: Համայնքի կեանքին գլխաւոր ոլորտը հոգեւոր նկարագիրն է, եթէ կ'ուզենք ապահովել նաեւ մեծ ընտանիքին առողջ ներկայութիւնը: Աստուծոյ խօսքին քարոզչութեամբ եւ գործադրութեամբ առաջնորդուած համայնքը հրաշքներու դուռը կը բանայ Թեմական կեանքէն ներս:

Մեր Թեմական կեանքը ներկայացնող համայնքներու կեանքին մէջ Աստուծոյ սէրը դարձնենք առանցքը մեր կեանքի: Միմեանց սիրենք Աստուծոյ սիրով, որպէսզի մեր մէջ փառաւորուի նաեւ Աստուծոյ ներկայութիւնը:

ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ ԱՍՏՈՒԾՈՅ ՍՈՒՐԲ ԳՈՐԾԻՆ

«Խոնարհեցարուք առաջի Տեառն եւ բարձրացուցե՛
զձեզ»:

(Յակոբոս 3:10)

Մի քանի օրեր առաջ կը մտածէինք թէ ինչպիսի՞
խօսք պիտի արտասանենք այս հանդիսութեան, որուն
գլխաւոր նպատակն է ի մի հաւաքումով մեր մտա-
ծումներն ու խորհուրդները կեդրոնացնել Թեմի կարե-
ւորագոյն առաքելութեան վրայ, որն է ապահովել գա-
լիք սերունդի ուսումնառութիւնը եւ նորահաստատ
համայնքներուն տնտեսական աջակցութիւնը: Եթէ
պահ մը յետադարձ ակնարկ մը նետենք կատարուած
աշխատանքին վրայ, արդարեւ խղճի հանդարտութեամբ
ու հպարտութեամբ կրնանք հաստատել, որ Արեւմտեան
Թեմի Stewardship Committee-ն բացառիկ առաքելութիւն
իրագործեց քահանայական թեկնածու երիտասարդ-
ներու քայլերը առաջնորդելով դէպի համալսարաններ
եւ զօրավիզ կանգնելով նորահաստատ համայնքներուն
տնտեսապէս, այն քաջ համոզումով, որ Թեմի մը հզօ-
րութիւնը պայմանաւորուած է իր հոգեւորականներու
աշալուրջ պատրաստութեամբ եւ կազմակերպեալ
Ծուխերով: Եթէ չունենայինք ձեր անվերապահ աջակ-
ցութիւնը, գլխաւորութեամբ Stewardship Յանձնախում-
բին՝ իմաստուն առաջնորդութեամբը Դոկտ. Վահրամ
Պիրիջիքին, մենք այսօր դժուար թէ ձեռք բերէինք այն
ինչ որ կը վայելէ Թեմը՝ գրեթէ իր բոլոր Ծուխերուն
մէջ ունենալով նուիրեալ երիտասարդ հոգեւորական-
ներ, որոնք կոչուած են ծառայութեան, կազմակերպե-

լու համար իրենց վստահուած Ծուխերը՝ Քրիստոսի սիրով ու հայրենական գիտակցութեամբ, նախանձախնդիր ոգով մատաղ սերունդին փոխանցելու մեր նախնեաց արժէքներն ու հարուստ աւանդութիւնը: Հետեւաբար, մեր խորագգաց շնորհակալութիւններն ու երախտիքը ձեզի անխտիր, որպէսզի ձեր զօրակցութեամբ շարունակենք նուիրական այս առաքելութիւնը եւ դեռ շատերուն եւս ներառնենք այս կարեւոր նախաձեռնութեանը մէջ որպէս գործունէայ դերակատարներ: Որովհետեւ այս առաքելութեան գործնականացման ճանապարհին մենք փաստօրէն կ'ապահովենք ոչ միայն երիտասարդ քահանաներու պատրաստութիւնը, բայց միաժամանակ կը կազմաւորուին համայնքներ, մեր հաւատքի կեանքին մէջ կը հաստատուի նպատակ, որոնց բոլորին մեկնակէտը Աստուած է:

Մեր կոչն է սիրելիներ, որ ոչ միայն դուք, այլեւ ձեզի հետ միասին նոր դեսպաններ առաջնորդէք դէպի այս նուիրական առաքելութիւնը: Ինչպէս դուք հաւատացիք այս առաքելութեան եւ ականատեսը կը դառնաք անոր արդիւնքին, ապա քաջալերէք ձեր հարազատներն ու ընկերները, որպէսզի իրենք եւս միանան այս առաքելութեան, որուն գլխաւոր նպատակն է ամրացնել Եկեղեցւոյ հիմքերը:

Մեր խօսքի աւարտին մենք մասնայատուկ երախտագիտական խօսքն ունինք ուղղուած Stewardship յանձնախումբին, որը կը գլխաւորէ Դոկտ. Վահրամ Պիրիջիքը: Հաստատակամ ու հպարտութեամբ կ'ուզենք վկայել, որ այս յանձնախումբը Առաջնորդարանի կառոյցէն ներս գործող, Առաջնորդի եւ Թեմական Խորհուրդի հովանաւորութիւնը վայելող, ամենէն կարգապահ ու գործունէայ Մարմինն է: Մենք չունինք բաւարար բառեր ու արտայայտութիւններ իրենց փո-

խանցելու համար երախտագետ մեր սրտի զգացումները: Ձեր ծառայութիւնը կը դրսեւորէ ձեր խոնարհումը Աստուծոյ ներկայութեան եւ Տէրը Ինք պիտի վարձատրէ ձեզ: Երանի ձեզ, որ ձեր խոնարհ ծառայութեամբ գործակից էք Աստուծոյ եւ աւելին՝ Եկեղեցւոյ տեսիլքը մարմնաւորող հաւատաւոր զաւակները մեր Սբ. Եկեղեցւոյ: Օրեր առաջ մենք այս մտածումը գրառեցինք նուիրուած Եկեղեցւոյ խորհուրդին:

«Մարդկային կեանքին մէջ ծնունդ առնող իրականութիւնն է Եկեղեցին, որուն գլուխն է Քրիստոս Աստուածորդին: Քրիստոսի հաւատացողներու մէկտեղումը կը կազմէ Եկեղեցին: Եկեղեցին՝ հոգեւոր կեանքի շունչը հաղորդող ներկայութիւնն է յատուկ առաքելութեամբ մը, որուն հիմքն ու արմատն է Քրիստոս՝ Իր Աւետարանով: Եւ նոյն Եկեղեցին կազմող հաւատացեալներս ունինք մեր որոշակի դերակատարութիւնը, հաւատքի մեր կեանքը դրսեւորելու համար բարի գործերով ու ստեղծագործութեամբ եւ ամենէն կարեւորը՝ գործակից դառնալով Աստուծոյ սուրբ գործին»:

Այս պարզ մտածումը մեզի կը հաղորդէ կարեւոր պատգամ մը, որն է հաւատացեալներու դերակատարութիւնը Եկեղեցւոյ կեանքին մէջ՝ գործակից դառնալով Աստուծոյ սուրբ գործին

1 Յունուար, 2015

Պրրպէնք

ՀՈԳԵԻՈՐ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

«Դու մի զարմանար, թե ասացի քեզ, պարտ է ձեզ ծնանիլ վերստին»:

(Յովհ. 3:7)

Քրիստոսի Աւետարանէն ճառագայթող մէն մի պատգամ մարդուն հոգեւոր ներաշխարհը կը լուսաւորէ այնպիսի ուժգնութեամբ մը, որ արդարեւ, նոյն մարդը իր մէջ կը զգայ Նոր Մարդուն ծնունդը: Պէտք է ապրիլ Քրիստոսի պատգամները, այլ խօսքով՝ կեանքի ու գործի վերածելով անոնցմէ ամէն մէկը: Այս պատգամը իր գործնական արտայայտութիւնը կը գտնէ մեր կեանքին մէջ, եթէ Քրիստոսի պատգամներու որդեգրութեամբ մենք առատօրէն նոր կեանք մը կ'ապրինք: Եւ մեր կեանքը թոյլչքներ չի կրնար արձանագրել, եթէ երբեք զայն մշակել չկարողանանք՝ աւելի մօտեցնելու Աստուծոյ:

Նոր Տարուոյ առաջին օրերուն ինչքան խորհրդանշական եւ հոգին լեցնող է ձեռնադրութեան արարողութիւնը, որովհետեւ ձեռնադրեալ թեկնածուները գործնապէս կը պատասխանեն Քրիստոսի խօսքին. «Պարտ է ձեզ ծնանիլ վերստին»: Հոգեւոր վերածնունդ ապրող մարդը այն անձն է, որ իր մէջ կը զգայ Աստուծոյ ներկայութիւնը եւ աւելին՝ անդրադարձը կ'ունենայ կեանքի կոչելու Աստուծոյ կողմէ իրեն տրուած շնորհները: Որովհետեւ մարդը, առանց իր մէջ զգալու Աստուծոյ ներկայութիւնը, եւ առանց ունենալու գիտակցութիւնը աստուածային եւ երկնաւոր շնորհները բաշխելու, իրապէս հոգեւորապէս աղքատ է: Ուրեմն, կեանքի գլխաւոր նպատակն ու առաքելութիւնն է քայլել դէպի Աստ-

ուած եւ կատարել Աստուծոյ կամքը: Ահա այս իմաստով ալ ինչքան իրական է այն խօսքը, որը Աստուածաշունչ Մատեանը մեզի կը ներկայանայ որպէս կեանքի Գիրքը: Աստուածաշունչը եւ հայելին է մեր կեանքին եւ միաժամանակ ուղեցոյցը մեր կեանքին: Ուրեմն Նոր Տարին սկսինք նորովի կեանքով, Աստուածաշունչը դարձնելով հիմքն ու հաստատութիւնը մեր կեանքին, զայն դարձնելու համար իմաստաւորուած եւ նպատակամղուած:

3 Յունուար, 2016

ԴԷՊԻ ԱՍՏՈՒԱԾ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀ

«...Նոյն զեղումն շնորհաց սուրբ Հոգւոյ ծաւալեսցէ ի վերայ քո, բանալով զառագաստ մտաց քոց ի ճանաչումն աստուածութեանն Քրիստոսի...»:

(Մաշտոց Աղօթամատեան)

Քահանայական կոչման արարողութիւնը իր ամբողջութեանը մէջ, սաղմոսներու եւ աղօթքներու արտասանութեամբ ու շարականներու երգեցողութեամբ, ընծայեալին առջեւ կը բանայ դէպի Աստուած տանող ճանաարհր: Առհասարակ այս ճանապարհորդութեան ընթացքին ընծայեալին կեանքը առաջնորդողը Սբ. Հոգին է, որուն զօրութեամբ կը բացուի մեր մտածմանց առագաստը՝ ճանչնալու համար Քրիստոսի աստուածութիւնը եւ աւելին՝ կատարելու սրբազան ուխտը դառնալու համար ծառայ Աստուծոյ, եւ սպասաւոր Քրիստոսի Սուրբ Եկեղեցւոյ:

Քահանայական կոչման արարողութիւնը ընծայեալին հոգեւոր կեանքը կը խմորէ աստուածային շնորհներով, Քրիստոսի սիրով ու պատգամներով եւ Եկեղեցւոյ սրբազան հայրերու աղօթքներով: Հետեւաբար, իւրաքանչիւր սաղմոս ու աղօթք նոր քայլ մըն է մեր կեանքը դէպի Աստուած բարձրացնող եւ հոգին ազնուացնող աստուածային շնորհներով:

Քահանայութիւնը կոչումի ասպարէզն է, որուն նուիրուած անձը քաջութեամբ, քրիստոնէական հաւատքով ու սիրով յանձն կ'առնէ իր անձը նմանեցնել Քրիստոսի Անձին օրինակին: Այս երեկոյ աստուածային եւ երկնային շնորհին ընդառաջ Բրշ. Մկրտիչ Սրկ. Քսաջիքեանը իր հոգին, սիրտն ու միտքը կը բանայ

Աստուծոյ կանչին, դառնալու համար ձեռնադրեալ ու
օծեալ քահանայ, Աստուծոյ Սր. Սեղանին սպասաւոր
ու նուիրեալ հոգեւորական մեր Սր. Եկեղեցոյ:

Բոլորս ի մի հաւաքուած այս Սուրբ Եկեղեցոյ մէջ
մեր աղօթքը կը բարձրացնենք առ Աստուած, որ անոր
քայլերը առաջնորդէ հաստատակամօրէն դէպի քա-
հանայութիւն: Իր քահանայական կոչումին զօրավիգ
ծնողները, որոնք մանկութենէն իր մէջ են ամրագրած
աստուածային սէրը, այնքան մխիթարուած պէտք է
զգան այս երեկոյ: Ինչքան հոգեւին պէտք է ուրախա-
նայ նաեւ Արժ. Տ. Շնորհք Աւ. Քինյ. Տէմիրճեանը, որ իր
հովուական ծառայութեան աշխատանքի ճանապար-
հին Սր. Սեղանին սպասաւորող պատանի Մկրտիչ
Սարկաւազը կը բարձրանայ քահանայական աստի-
ճանին: Ուրախ է նաեւ Թեմիս հոգեւորականաց դասը
եւ առաւել յուսառատ զգացումներով առլեցուն դէպի
նոր հորիզոններ Եկեղեցոյ կեաքին մէջ: Մեզի բոլորիս
համար անսահման ուրախութիւն է, որ Բրշ. Մկրտիչ
Սարկաւազի քահանայութիւնը կը կրկնապատկուի իր
ազնիւ Տիկնոջ Տաթևի հաւատաւոր եւ գիտակից կեան-
քով, որուն անչափօրէն բոլորս կը սիրենք:

Բրշ. Մկրտիչ Սրկ.-ի քահանայութիւնը ցնծութիւն
է բոլորիս համար եւ առաւել եւս Եկեղեցոյ համար:
Քահանայութեան պատիւը ամենէն բարձր է: Քահանայ
հայրերու կոչումի գիտակցութիւնն է, որ դարերով
առաջնորդած է մեր Եկեղեցին՝ իր հաւատացեալնե-
րով դէպի Աստուած:

Աստուած թող անսասան պահէ մեր Սր. Եկեղեցին
ու քահանայից դասը:

23 Յունուար, 2015

Պրրպէնք

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԵՒ ԵՐԿՆԱՅԻՆ ՇՆՈՐՀԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Բարեշնորհ եւ սիրելի Մկրտիչ Սրկ. Քսաչիքեան

Բազում առիթներով գրառած ենք մեր խորհրդածութիւնները ձօնուած Քահանայութեան խորհուրդին եւ ամէն անգամ հազար փառք ենք տուած Աստուծոյ, որ Իր կանչին քաջօրէն պատասխանած են երիտասարդներ իրենց կեանքը առաջնորդելով դէպի Սուրբ Եկեղեցոյ սպասաւորութեան:

Քահանայութիւնը՝ երկնային այն շնորհն է, որուն պարգեւատուն Աստուած Ինք է: Եւ երանելի են անոնք, ովքեր Աստուծոյ անդաստանին մէջ ծառայութեան կը կանչուին եւ հաստատակամ հաւատքով ու նուիրումի ամենաբարձր գիտակցութեամբ կ'իմաստաւորեն իրենց կեանքը, ժողովուրդին առջեւ խոնարհումով:

Բարեշնորհ եւ սիրելի Մկրտիչ Սարկաւազ, ինչպէս Թեմի հոգեւորականաց դասը ներկայացնող սպասաւորները, դուք եւս դեռեւս ձեր պատանեկութեան տարիներէն սկսեալ խոնարհ ծառայութեամբ դարձաք արժանաւոր զաւակը Հայց. Առաքելական մեր Մայր Սուրբ Եկեղեցոյ: Տարիներու ձեր բարձրագոյն ուսումնառութենէն յետոյ, եւ ի մասնաւորի Սբ. Էջմիածնի խորհուրդով հարստացած դուք այսօր պատրաստ էք քահանայական ձեռնադրութեան եւ օծման: Մենք քաջ համոզուած ենք, որ դուք այնուհետեւ որպէս օծեալ քահանայ, ձեր ազնիւ երեցկնոջ՝ Տաթևիկի հետ լոյս եւ օրհնութիւն պիտի բերէք մեր Սբ. Եկեղեցոյ կեանքին մէջ ձեր հոգեւոր ծառայութեամբ:

Ձեր քահանայական ձեռնադրութեան եւ օծման տօնական առիթով մեր սրտագին շնորհաւորանքները ձեզի եւ Տաթևիկին, ձեր ծնողաց, ձեր ձեռնադրութեան Կնքահայր՝ Տէր եւ Տիկին Անդրանիկ եւ Վերժինիա Զօրայեաններուն եւ նաեւ մեր Թեմի հոգեւորականաց ու հաւատացելոց: Մեր ջերմագին գնահատանքը Քահանայից Պատրաստութեան Յանձնախումբին (Stewardship Committee-ին), գլխաւորութեամբ Դոկտ. Վահրամ Պիրիջիքին, իրենց տեսլականին եւ աննման ծառայութեանը համար:

Թող Աստուած անսասան պահէ Հայաստանեայց Առաքելական մեր Մայր Սուրբ Եկեղեցին իր հոգեւոր սպասաւորներով ու հաւատացեալ ժողովուրդով:

23 Յունուար, 2015

Պրրպէնք

ԱՍՏՈՒԾՈՅ ՆՈՐԱԾ ՍՊԱՍԱԻՈՐԸ

«Աղաչեմ զքեզ հայր երկնաւոր, առաքեա զհոգիդ սուրբ եւ օրհնեա զնորբնծայս զայս որ կայ առաջի սրբոյ սեղանոյ քո. առնուլ զաստիճան քահանայութեան, եւ լինել տեսուչ ժողովրդեան քո եւ աթոռակից առաքելոցն»:

(Մաշտոց Աղոթամատեան)

Սիրելի բարեպաշտ հայորդիք,

Դուք այսօր ականատես դարձաք քահանայական ձեռնադրութեան եւ օծման սրբազան արարողութեան, ձեր աղօթքները առ Աստուած բարձրացնելով մեր հայրերու սրտէն բխած բառերով, «Աղաչեմ զքեզ...»:

Նորբնծան այսօր, ձեր բոլորին քաջածանօթ Բրշ. Մկրտիչ Սարկաւազն է, որ նախանձախնդիր եւ աչալուրջ ուսումնառութեան պատրաստութեան շրջանը աւարտելէ յետոյ, այսօր արժանի դարձաւ քահանայութեան եւ ձեռնադրութեան պատուաւոր աստիճանին, եւ յետ այսորիկ կը կանչուի դառնալու տեսուչ իրեն վստահուած հօտի զաւակաց եւ աթոռակից Քրիստոսի առաքելներուն:

Քահանայութեան կոչումը կատարելապէս կը ճանազայթէ Քրիստոսի Անձին ընդմեջէն: Աստուածորդին՝ աստուածային սէրը դարձուց բառին լման առումով տեսանելի ու շօշափելի Իր իսկ Անձին պատարագումովը խաչին վրայ: Նոյն խաչին մէջ է, որ կ'ամփոփուի պատարագումին խորհուրդը, որը միաժամանակ խորհուրդն է Քահանայութեան: Քահանան, որպէս սպասաւոր Սբ. Եկեղեցւոյ, իր բովանդակ կեանքով ի սպաս

պիտի դնէ իր ծառայութիւնները Քրիստոսի Եկեղեցւոյ հաւատացեալներուն կեանքը մէկտեղելու եւ անոնց էութիւնը մշակելու Քրիստոսի սիրով ու իմաստութեամբ, Աւետարաններէն ճառագայթող պատգամներով: Հետեւաբար, ինչքան մեծ պատասխանատւութիւն է վստահուած քահանային, որպէսզի իրեն վստահուած հօտի զաւակներու հոգիներուն մէջ անխախտ պահէ Երկնաւորին պատկերը: Քահանան, միջնորդն է, որուն է վստահուած նաեւ Աստուծոյ եւ մարդուն միջեւ հաստատուող կապը: Քահանան, աղօթող այն անձն է, որ պիտի հասնի անխտիր բոլորին, մեծին ու փոքրին, ընտանիքներուն, Հայ Դպրոցին, կարիքաւորներուն եւ բոլորին մատակարարէ Աստուծոյ սէրն ու Քրիստոսի Աւետարանին ոսկի պատգամները եւ այս բոլորը իր մարդկային կարողութեանց սահմաններուն ներածին չափով: Քահանան իր կեանքով պիտի ըլլայ հեզահամբոյր, խաղաղասէր ու ներողամիտ: Մէկ խօսքով, քահանային կեանքը զարդարուած պիտի ըլլայ բոլոր տեսակի բարեմասնութիւններով:

Արժանապատիւ Տէր Եղիշէ քահանան այսօր նորած քահանան, իր բացառիկ նկարագրով ու հեզահամբոյր ներկայութեամբ լոյս եւ օրհնութիւն կը բերէ մեր Թեմական կեանքէն ներս: Ինչքան ինք, նոյնքան եւս երիտասարդ Երէցկինը, բոլորիս կը ներկայանայ որպէս տիպար անձնաւորութիւն, որուն զօրակցութեամբ նորած Տէր Եղիշէ քահանան, հոգեւոր ստեղծագործութեամբ պիտի զարդարէ մեր Թեմական կեանքը:

Այս տօնական առիթով կը շնորհաւորենք Թեմիս հոգեւորականաց դասը, Թեմական Խորհուրդի ողջ հաւատացեալները, Stewardship Committee-ն գլխաւորութեամբ Դոկտ. Վահրամ Պիրիջիքին, եւ ի մասնաւորի ձեռնադրութեան եւ օծման կնքահայր՝ Տէր եւ Տիկին

Անդրանիկ Զորայեանը, Տէր Հօր ծնողները, որոնց բարի
ու քրիստոնէավայել կեանքին արգասիքն է Տէր Հայրը:

Թող Ամենակարողն Աստուած օրինէ մեր Սբ. Եկե-
ղեցին իր սպասաւորներով եւ ի մասնաւորի օրինէ ու
հաստատուն պահէ նորած Տէր Հայրն ու Երեցկին Տա-
թևիկը ու անոնց պարգէւէ կենաց քաջառողջ ու երկար
տարիներ եւ եկեղեցական գործունէութեան բեղուն
դաշտ:

23 Յունուար, 2015

Պրրպէնք

ՄԵԶԻ ՎՍՏԱՀՈՒԱԾ Է ԿԵԱՆՔԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

«Տուր զհաշիւ տնտեսութեան քո...»:

(Ղուկ. 16:2)

Մեծ Պահքի չորրորդ Կիրակին կը կրէ Անիրաւ Տնտեսի տիտղոսը, որովհետեւ օրուան Աւետարանը մեզի կը պատմէ Անիրաւ Տնտեսի առակը: Ինչպէս Քրիստոսի կողմէ աւանդուած բոլոր առակները, այս առակը եւս ուղղակիօրէն կ'առնչուի մարդուն, երեւոյթ մը, որ կը դրսեւորուի հասարակական կեանքին մէջ: Տնտեսը մենք ենք եւ տնտեսութիւնը՝ մեզի վստահուած պարտականութիւններն են: Տնտեսի պարտականութիւնը կրողները բոլորս ենք անխտիր, հոգեւորական թէ աշխարհական, բոլոր պաշտօնատարներս, որովհետեւ իւրաքանչիւրիս առաջնորդողը Աստուած Ինք է, երբ մեզմի կը վստահի որոշակի տնտեսութիւն՝ պարտականութիւններ:

Մարդուն վստահուած մեծագոյն տնտեսութիւնը կեանքն է: Սա ինքնին կը բացատրէ թէ ինչքան մեծ պատասխանատւութիւն է տրուած մեզի: Ուրիշ խօսքով իւրաքանչիւրս քանի որ ստեղծուած ենք Աստուծոյ պատկերի համաձայն, կը ներկայացնենք զԱստուած, աստուածայինը: Ուրեմն, թերացումը տրուած կեանքին նկատմամբ կը նշանակէ արժեզրկել տրուած պարգևը եւ աւելին՝ մոռնալ այն կարեւոր հանգամանքը, որ մեր մէջ կրողն ենք Աստուծոյ: Բայց տեսէք թէ ի՞նչ կը պատգամէ առակը. «Տուր զհաշիւ տնտեսութեան քո»:

Բոլորս ալ կեանքի մէջ հաշուետու ենք թէ ինչպէ՞ս կ'ապրինք կեանքը, եւ թէ ինչպէ՞ս կը կատարենք մեզի

տրուած ու վստահուած պարտականութիւնները: Ահա-
ւասիկ այստեղ կ'իմաստաւորուի Մեծ Պահքի հոգեւոր
ճանապարհորդութիւնը, երբ մենք կանգ կ'առնենք
Աստուծոյ ներկայութեան եւ խոստումը կը կատարենք
մեր պարտականութիւնները իրագործելու լիարժէք կեր-
պով:

Մեծատան կերպարը առակին մէջ Աստուած Ինք
է, եւ անիրաւ տնտեսը՝ մարդկութիւնը: Մեծատան կողմէ
տրուած հարցադրումը եւ պահանջարկը. «Տուր գիւ-
շիւ տնտեսութեան քո», մեր կեանքը դէպի հոգեւոր արթ-
նութեան հրաւիրող ուժականութիւն մը ունի իր մէջ:

Քրիստոնէայի կեանքին մէջ գերագոյն պահը դէ-
պի Աստուած վերադարձի ընթացքն է: Եւ Մեծ Պահքի
կիրակիներու ոսկէ շղթան քրիստոնէայ մարդուն հո-
գեւոր կեանքը մշակող պարգեւ մըն է: Իւրաքանչիւր
Կիրակի մեզի կը շնորհէ քաջութեան շնորհ մը, մեր-
ծելու մեղքը՝ խոստովանութեամբ, ներողամտութեամբ
կեանք պարգեւելու մեր մէկ նմանին նոյն ժամայն մեր
մէջ գտնելու խաղաղութիւն, յարատեւելու մեր աղօթքի
կեանքին մէջ Քրիստոսի նմանակցութեամբ: Այս բոլորը
եւ դեռ աւելին, որոնց հաղորդ կը դառնանք Աւագ
Շաբթուան ընթացքին, մեր մէջ ծնունդ կու տան նոր
մարդուն ի Քրիստոս:

Հետեւաբար այսօր, Սբ. Եկեղեցի այցելութեամբ,
երբ աղօթքի ենք հրաւիրուած բանանք մեր հոգիին
ծալքերը, լսելու համար Աստուծոյ ձայնը.

«Տուր գիւշիւ տնտեսութեան քո»:

Եւ թող մեր պատասխանը ըլլայ խոստումը նոր
կեանքին համաձայն Աւետարանի ուղեգծած ճանա-
պարհին:

28 Փետրուար, 2016

ԻՆՉ Է ԽՈՐՀՈՒՐԴԸ ԱԻԱԳ ՇԱԲԹՈՒԱՆ

Շատերու մօտ հարց է ծագած թէ ի՞նչ է խորհուրդը Աւագ Շաբթուան եւ թէ ինչո՞ւ Ջատիկը կանխող շաբաթը կը կոչենք Աւագ Շաբաթ, ի տարբերութիւն մնացեալ շաբաթներուն: Պատասխանը բոլորիս համար շատ պարզ պէտք է ըլլայ, որովհետեւ Ծաղկազարդէն մինչեւ Ջատիկ երկարող ժամանակահատուածը իր մէջ կ'ընդգրկէ Քրիստոսի կեանքի վերջին հանգրուանները, որոնցմէ իւրաքանչիւրը կը ներկայացնէ մարդկութեան պատկերը ինչպէս որ կայ: Ծաղկազարդ – Քրիստոսի մուտքը Երուսաղէմ քաղաք Ովսաննաներու կանչերով: Մենք ենք, որ յաճախ շուտով կը խանդավառուինք եւ սակայն նոյնքան արագ կը մոռնանք մեր պարտաւորութիւնները:

Տաճարին մաքրագործումը:

Վերջին Ընթրիքը – Քրիստոս Իր առաքեալներուն կը բացատրէ Իր Անձին պատարագումի խորհուրդը, երբ Իր վրայ կը վերցնէ մարդկային մեղքը ու զայն պարտութեան կը մատնէ: Ան կը բացատրէ Աստուծոյ անսահման սէրը մարդկութեան նկատմամբ: Այս պատկերին մէջ, մենք մեզ պիտի տեսնենք եւ թէ ինչքանո՞վ մեր անձը կը պատրաստենք մեր ընտանիքներով, մեր բարոյական ու հոգեւոր արժէքներով, եւ թէ ինչքանո՞վ զոհողութեամբ կ'ապրինք իր ամենաբարձր մակարդակով:

Ոսնկուման – Այս արարողութիւնը կը խորհրդանշէ խոնարհութիւն: Եւ եթէ Քրիստոս Աստուածորդին խոնարհեցաւ եւ Իր առաքեալներու ոտքերը լուաց, ուրեմն ինչքան եւս մենք պարտ ենք նոյնը կատարել: Քրիստոս լուաց Իր առաքեալներուն կոշտացած ու ցեխո-

տած ոտքերը, մինչ մենք անմեղ մանուկներու մաքուր ոտքերը կը լուանք: Բայց արարողութեան խորհուրդն այն է, որ մեր առօրեայ կեանքին մէջ ըլլանք խոնարհ, հեզ ու համեստ, զիջող միմեանց նկատմամբ, համբերատար ու ծառայաբեր: Այս նիւթականացած աշխարհին մէջ դարձած ենք անհանդուրժող, անփափկանկատ: Եւ տակաւին չի բաւեր որ մենք անհատապէս ըլլանք խոնարհ ու հեզ եւ աւելին: Իւրաքանչիւրս պարտ ենք դառնալու օրհնութիւն եւ լոյս մէկ ուրիշի կեանքին մէջ:

Խաչելութիւն – Քրիստոսի խաչելութիւնը նոյնն է ինչ-որ Սբ. Հաղորդութեան խորհուրդն է, այս անգամ աւելիով շեշտուած: Բոլորս անխտիր մեր կեանքին մէջ ունինք խաչելութեան ճանապարհը: Եւ երբ կը նայինք Քրիստոսի չարչարանաց ու խաչի ճանապարհին, ապա այն ժամանակ այդ պատկերին մէջ մերը կը դառնայ աննշմար: Չպիտի մոռնանք այն հիմնականը որ Քրիստոսի խաչելութեամբ մահը արհամարհուեցաւ ու պարտութեան մատնուեցաւ:

Սբ. Յարութիւն – Քրիստոսի հրաշալի Յարութիւնը մեզի կը հաղորդէ վերստին կենդանութեան յոյսը: Ահաւասիկ այստեղ կ'ուզենք կատարել կարեւոր շեշտադրում մը, եւ բացատրել ճշմարիտ խորհուրդը Չատկուան: Չատիկը իրօք նոր կեանք հաղորդող Տօնն է: Չատիկ տօնել – հաղորդուիլ Քրիստոսի Յարութեան խորհուրդին կը նշանակէ ապրիլ քրիստոնէական հաւատքը մեր առօրեային մէջ ի մասնաւորի այն հաղորդել նոր սերունդին: Ուրեմն, մեր պատգամն է մեծերուն անխտիր, որպէսզի օր առ օր ձեր գաւակաց հաղորդէք հաւատքի դասերը եւ բացատրէք, որ մեր բոլորիս մեծ մայրը, բոլորիս հաւաքողն ու խնամողը Հայց. Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին է:

24 Մարտ 2016, Պրրպէնք

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ

«Աչք ամենեցուն ի քեզ յուսան, եւ դու տաս կերպար
կուր նոցա ի ժամու»:

(Մաղա. 144:15)

Սաղմոսի այս բառերուն մէջ է ամփոփուած մեր
հաւատամքը եւ աւելին՝ մեր էութեան ողջ զգացողու-
թիւնը, կապն Աստուծոյ հետ, հաւատքի գիտակցութիւնը
եւ յատկապէս՝ անկեղծ սպասումն ու յանձնառութեան
պատրաստակամութիւնը:

«Աչք ամենեցուն ի քեզ յուսան»: Բոլորիս միտքն ու
հոգին դէպի Քեզ սեւեռուած է, Աստուած իմ: Եւ այս
Սուրբ Շաբաթը կը նուիրականանայ մեր հոգեւոր
կեանքին մէջ որպէս «Աւագ Շաբաթ»-ը Քու Միածին
Որդուն, որ երկինքէն երկիր իջաւ լուսաւորելու հա-
մար ողջ աշխարհը եւ մարդկութիւնը բարձրացնելու
դէպի Քեզ՝ Ամենակարող Աստուած:

Բոլորիս աչքերը Քեզի կը հային եւ մեր սրտերը
Քեզի կը յուսան, Քրիստոս Աստուած, որովհետեւ Քե-
զի հետ քայլող հաւատացեալը իր կեանքը կ'ուղղէ լոյ-
սի ճանապարհէն դէպի առաւել կեանք:

Բոլորիս աչքերը Քեզի կը յուսան եւ Դուն բոլորիս
հոգեւոր սնունդ կը մատակարարես առատօրէն որ-
պէս «կենարար հաց»: Ուրեմն, Ծաղկազարդէն մինչեւ
Զատիկ՝ Յարութեան Տօնը, ամբողջութեամբ անձնա-
տուր ըլլանք Աստուծոյ, եւ ուխտենք ապրիլ Քրիստոսի
հետ եւ Քրիստոսի նման: Որովհետեւ ինչքան աղօթ-
քով ու հոգեւոր ընթերցումներով կը ներթափանցենք
մեր հոգիին խորքը, այնքան եւս կը մօտենանք Արա-
րիչն Աստուծոյ, բայց աւելին՝ մեր կեանքով կը դառ-

նանք կրողը Աստուծոյ սիրոյն եւ Երկնաւորի իմաստութիւնը մատակարարող հոգեւոր անօթ, տաճար Աստուծոյ բնակութեան:

Քրիստոնեայ հաւատացեալը պէտք է իր կեանքը ապրի Քրիստոսի ուղեկցութեամբ, որպէսզի մեր կեանքը դառնայ լոյս եւ օրհնութիւն աշխարհի կեանքին մէջ: Եւ եթէ պահ մը մենք մեր ուղեկցութիւնը կորսնցնենք Քրիստոսի հետ, ապա այն ժամանակ կը դադրինք դառնալ հոգեւոր հոսանքը ընկերութեան կեանքին մէջ:

Աւագ Շաբթուան հոգեւոր ճանապարհորդութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ ճանապարհն առ Աստուած: Մեզի ներկայացող Քրիստոսի կեանքէն քաղուած պատկերները աստիճաններ են, որոնք մեր առջեւ կը պարզեն կեանքի մեծագոյն դասեր:

Ծաղկազարդը՝ Քրիստոսի յաղթական մուտքը Երուսաղէմ Սուրբ Քաղաք, կը ներկայացնէ մեր հոգիին պատկերը: Ինչպէս որ ոգեւորութեան մէկ պահուն մեր հոգին կը բանանք Քրիստոսին առաջ Ովսաննաներով եւ զինք որպէս թագաւոր կ'ընդունինք մեր կեանքէն ներս, նոյնպէս ալ՝ մէկ ուրիշ պահու, հոգեւոր բարձրութեն կը գահավիժենք դէպի նիւթին ու նիւթականին աշխարհը՝ մոռնալով Տիրոջ պատգամը, որ կ'ըսէ. «Հոգի առաւել է քան զմարմին»:

Աւագ Շաբթուան հոգեւոր ճանապարհորդութեան ամենէն էական հանգրուաններն են Վերջին Ընթրիքը, Ոտնլուան, Խաւարման Գիշերը, Աւագ Ուրբաթը, եւ վերջապէս Քրիստոսի հրաշալի Յարութիւնը: Այս բոլորին հետ մնայուն հաղորդակցութեան մէջ եղող հաւատացեալը կը դառնայ նոր, լուսազարդ ու պայծառակերպ մարդ, որ կը մերժէ իր մէջ կարծրացած հին մարդը՝ եւ կը դիմէ Քրիստոսի Իրմով դառնալու համար Նոր Մարդը:

Վերոյիշեալ հանգրուանները բոլորն ալ մեզ կը հաղորդեն որոշակի պատգամներ. Ոտնլուայով մեզի կը փոխանցուի խոնարհութեան մեծագոյ օրինակը, Վերջին Ընթրիքով՝ պատարագումը մեր Փրկչին՝ Յիսուս Քրիստոսին եւ խորհուրդը Փրկագործութեան: Այս հանգրուանները մեզի կը տանին դէպի բարձունքները Քրիստոսի Յարութեան:

ԱՍՏՈՒԱԾ ՄԵԶԻ ՀԵՏ Է

«Եւ ժողովուրդ, որ նստէր ի խաւարի ետես զլոյս մեծ. զի Աստուած ընդ մեզ է»:

Խաւարման գիշերը՝ լոյսին ծնունդը կը յայտարարէ՝ մարդկութեան կեանքին մէջ: Մեզի համար խաւարին վրայ յաղթանակի գիշերն է այս պահը, քանզի Քրիստոսի հետ չարչարակից (ճանապարհակից) դառնալով խաչի ճանապարհին, մեր կեանքը կ'առաջնորդենք դէպի լոյսը ճշմարտութեան: Այս է այն գիշերը, երբ խաւարի մէջ խարխաբումներէ յոգնած կը քանանք մեր միտքն ու հոգին ընդունելու համար լոյսը՝ Քրիստոսի ներկայութիւնը: Քրիստոսով կ'ուղեգծենք մեր կեանքի նոր ճանապարհը, որպէսզի մերժենք հին մարդը եւ դառնանք նոր, լուսաւոր ներկայութիւն մը աշխարհի կեանքին մէջ բացուած:

«Զի Աստուած ընդ մեզ է»:

Հաստատուն հաւատքով կը յայտարարենք, որ մեզի հետ է Աստուած, Առաջնորդն է մեր կեանքին, լոյսն ու յոյսը մեր ողջ էութեան: Բացէք ձեր սրտերը լայնօրէն եւ հոն պիտի գտնէք ներկայութիւնը Աստուծոյ: Անոր դէմքը պիտի դարձնենք լոյսը մեր կեանքին, որպէսզի մեր էութեան մէջ ծնունդ առած խաւարը վերածենք լոյսի: Քրիստոսի մարդեղացեալ կեանքը կը խորհրդանշէ ու կը բացատրէ խոնարհումը Աստուծոյ երկինքէն - երկիր, որպէսզի մարդը բարձրանայ առ Աստուած: Ով Աստուծոյ ձեռքէն բռնած կը շարունակէ երթը իր կեանքին, այդպիսին իր կեանքը կ'ապրի ուխտաւորի կեանքով իր մէջ կրելով լոյսն աստուածային, իմաստութիւնը Երկնաւորին:

«Զի Աստուած ընդ մեզ է»:

Մեր հայրերը կեանքն ապրեցան Աստուածտեսութեամբ եւ Անոր լոյսովը նորոգուած մերժեցին ժամանակաւորը, խաւարն ու անոր գործերը եւ դիմեցին Աստուածորդուն, որպէսզի իրենց էութեան մէջ ճառագայթէր Աստուծոյ ներկայութիւնը՝ աղբիւրը լոյսին, որուն մէջ կը վերածնի մարդը:

Միրելի հաւատացեալ հայորդիք, այս երեկոյ սրբազան այս եկեղեցոյ կամարներուն ներքոյ անհատապէս եւ հաւաքականօրէն կը նորոգենք մեր կեանքը, սնունդ կու տանք մեր հոգիին, որպէսզի մեր կեանքն ապրինք քրիստոնէական ընթացքով, հաւատքը դարձնելով ուղեցոյցը մեր առօրեայ քայլերուն եւ մեր ողջ կեանքին:

Աշխարհի կեանքին մէջ մարդը պիտի ապրի Աստուծոյ սիրով ու իմաստութեամբ, որպէսզի դառնանք լոյս մատակարարող հոգեւոր ներկայութիւն մը, եւ նոյն աշխարհի կեանքին մէջ մեզի համար ի Հայաստան եւ աշխարհասփիւռ մեր ժողովուրդի զաւակաց համար էական է ապրիլ քրիստոնէական հաւատքով: Քրիստոնէական հաւատքը՝ մեր նախնեաց ժառանգն է, որուն կրողն ենք: Հաւատքով պիտի կերտենք մեր նկարագիրը, որուն ուժականութիւնը մեր մէջ պիտի արթնցնէ գիտակից սէր ու նուիրում Աստուծոյ նկատմամբ, Հայրենիքի եւ Մր. Էջմիածնի նկատմամբ, որոնք այն գերագոյն սրբութիւններն են, որոնք մեզ կը պարգեւեն տեսիլքը՝ հայ ընտանիքին:

Մեր գոյութենականութիւնը երաշխաւորուած եւ պայմանաւորուած է հայ ընտանիքին ամրութեամբ ու սրբութեամբ: Եթէ կ'ապրինք այսօր որպէս յարուցեալ ժողովուրդ, ապա անոր բացատրութիւնը պիտի փնտռենք հայոց աւանդութեանց նկատմամբ մեր խոնար-

հումին մեջ: Ապրինք այնպես, որ յատկապես այս տարի, երբ 100-ամեակն է Հայոց Ցեղասպանութեան, ապա մեր սրտերէն բխած աղօթքով քաջութեամբ ու համարձակութեամբ յայտարարենք մեր հաւատամքը. «Զի Աստուած ընդ մեզ է»: Մեր ազգի փոքր ածուն իր կեանքը պիտի շարունակէ ապրիլ ստեղծագործ կեանքով այնպես ինչպես իրենց կեանքը հրաշագործեցին մեր նախնիք:

Մեր կեանքի հայելին է Քրիստոս: Անոր խաչելութեան մէջ կը տեսնենք մեր նահատակ սերունդին խաչելութիւնն ու գողգոթան, բայց աւելին՝ Անոր Յարութեանը ակընդէտ՝ մոխիրներէն վերածնած ազգ ենք: Իջէք ձեր հոգիին խորքը, մնացէք այնտեղ աղօթքի մէջ ու աղօթքով առաջնորդուած նայեցէք դէպի նոր կեանքը, որուն արշալոյսը մեր առջեւ պիտի բացուի մի քանի օրեր յետոյ Սբ. Զատիկով, Քրիստոսի Յարութեան խորհուրդով:

«Եւ ժողովուրդ որ նստէր ի խաւարի ետեւ զլոյս մեծ. զի Աստուած ընդ մեզ է»: Խաւարման այս խորհրդաւոր երեկոյին լոյսին բանանք մեր հոգիները եւ միասին յայտարարենք, ինչպես երեկ, այսօր եւ վաղը «Զի Աստուած ընդ մեզ է»:

1 Ապրիլ, 2015

Պրրպէնք

ԽԱՉԻ ՃԱՆԱՊԱՐՀ՝ ԼՈՅՍԻ ՃԱՆԱՊԱՐՀ

Խաւարման այս երեկոյին, աղօթասաց հաւատացեալներու միտքն ու հոգին, մեր սիրտն ու ամբողջ էութիւնը իր մէջ կ'առնէ խաչէն ճառագայթող լոյսը. լոյս որ անժամանցելին է: Այդ լոյսը՝ Քրիստոս Աստուածորդին է, որ Իր կեանքով յեղաշրջեց մարդկութեան կեանքը եւ պատմութիւնը՝ մեր առջեւ բանալով խաչի ճանապարհը՝ կեանքի ճանապարհը: Խաչի ճանապարհը՝ Քրիստոսի Մարդեղութեան խորհուրդն է, Աստուծոյ անսահման սիրոյ արտայայտութիւնը, ինչպէս կը պատգամէ նաեւ Յովհաննէս Աւետարանիչ. «Որովհետեւ Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր Միածին Որդին տուաւ, որպէսզի ով որ հաւատայ անոր՝ չկորսուի, այլեւ յաւիտենական կեանք ունենայ»:

Եւ Քրիստոս Աստուածորդին Իր աստուածային սէրը բացայայտեց Իր իսկ Անձին պատարագումովը, Իր վրայ վերցնելով մարդկային մեր մեղաւոր էութիւնը: Եւ խաչին վրայ Իր պատարագումովը փոխեց հին իմաստը խաչին, որ կար ժամանակ երբ մահապարտի միջոց մըն էր եւ Քրիստոսով խաչը իր նոր իմաստը զգեցաւ ու դարձաւ աստուածային սիրո աղբիւրը:

Խաչէն մեզի կը ճառագայթէ Տիրոջ պատուիրանը. «Ամենեւին զհին մարդն ի բաց ընկեցէք ամենայն չար գործովք իւրովք:...Զգեցարուք ամենեքեան վարս պարկեշտս...»:

Ամենակարողն Աստուածորդին ի տես աշխարհի մարդկանց սրտերուն մէջ արմատացած հին մարդուն կը պատուիրէ զգենուլ պարկեշտ վարք, դառնալու սուրբ, բարեսիրտ, հեզ, խաղաղարար, արդար, գթած, ողորմած հիւանդներու եւ աղքատներու նկատմամբ,

առաքինի գործերով զարդարուած, սիրով, հաւատքով զինուած, կատարեալ սիրով առ Աստուած եւ մարդկութիւնը:

Ահա թէ ինչու խաչի ճանապարհը կը խորհրդանշէ կեանքի ճանապարհը: Որովհետեւ խաչին վրայ Իր Անձին պատարագումովը Քրիստոս մեզ շնորհեց մեծագոյն պարգեւը՝ հրաշագործելու մեր կեանքը, մերժելու հին մարդը եւ դառնալու նոր ի Քրիստոս: Նորը մեր մէջ կը պայմանաւորուի միայն երբ մերժելով ու թօթափելով հինը, Աստուծոյ կամքը կատարելու ջերմ փափաքը կ'ունենանք:

24 Մարտ, 2016

ԶՍՈՒՐԲ ԹԱՂՈՒՄՆ ՔՈ ՄԵԾԱՑՈՒՑԱՆԵՄՔ

Աւագ Շաբթուան արարողութեանց ոսկէ շղթային կարեւորագոյն օղակներէն է «Աւագ Ուրբաթ»-ի թաղման կարգը: Եւ ինչքան իւրօրինակ է այն արտայայտութիւնը նուիրուած Քրիստոսի թաղման, երբ կը ներբողենք այն հետեւեալ բառերով. «Եւ զսուրբ թաղումնդ քո մեծացուցանեմք»: Գուցէ պարզ տրամաբանութեամբ ընկալելի չէ այս ներբողականը, բայց երբ հաւատքով կը ներթափանցենք Քրիստոսի Մարդեղութեան խորհուրդին ծալքերը, ապա այն ժամանակ մեզի համար յստակ կը դառնայ, որ Մարդեղութեան խորհուրդին նպատակն էր փրկագործութիւնը աշխարհի մարդկանց համար:

«Եւ զթաղումնդ քո մեծացուցանեմք, փառաւորեմք»: Բարեպաշտական այս ներբողականը կ'արտայայտէ մեր հաւատքի գիտակցութիւնը, որովհետեւ լիովին կը հասկնանք այն, որ Քրիստոս Իր Անձին վրայ վերցուց ողջ աշխարհի ցաւը, որպէսզի Իր Անձին իսկ պատարագումովը մարդկութիւնը առաջնորդէր նոր կեանքին: Այսօր, երբ աղօթքի ենք եկած Անոր գերեզմանին, մենք կը լսենք Քրիստոսի Աւետարանէն ճառագայթող կենսատու խօսքեր, որոնք հացի ու ջրի նման անհրաժեշտ են մեզի, որպէսզի հրաժարինք մեր էութեանը մէջ բոյն դրած հին մարդէն եւ դառնանք նոր: Նորը դառնալու համար մեզի հարկաւոր է հետեւիլ Տիրոջ պատգամներուն, մանաւանդ այս օրերուն, երբ աշխարհը խաւարի ճանապարհներուն է միացած, երբ մարդիկ կամայ թէ ակամայ կորսնցուցած են ճանապարհը առ Աստուած եւ այլեւս դադրած Աստուծոյ ձեռքերն ըլլալէ ընտանիքի թէ համայնքի կեանքէն ներս:

ԱՆՄԱՀՆ ԹԱԳԱԻՈՐ

Աւագ Ուրբաթի արարողակարգի մէջ արձնագրուած է շարական մը, որ երեք պարբերական սահմանումներով կը բացատրէ օրուան խորհուրդը, փրկագործութեան ծրագիրը Աստուծոյ Միածին Որդիին պատարագումովը:

«Եկայք հաւատացեալք երկրպագեսցուք սուրբ Երրորդութեանն, լոյսն որ ընդ Հօր է յէութեան ի քահանայից դատապարտեալ եկալ ի խաչ ելանել անմահն թագաւոր»:

«Զոր երկինք որ բաւէին տանիլ, զփայտ պատուհասի ուսով բարձեալ եւ եկեալ ի տեղի կառուարման ի խաչ ելանել անմահն թագաւոր»:

«Հիացեալ պետութեանց երկնից ընդ թաղումն տեառն ի նոր գերեզմանի. քանզի որ անմահն է յէութեան վասն արարածոց փրկութեան զմահ ճաշակեաց անմահն թագաւոր»:

Շարականին բառերը կը բացատրեն մեր վիճակը, թէ ինչպէս որպէս հաւատացեալներ քով-քովի գալով խոնարհութիւն-երկրպագութիւն կը մատուցանենք Մբ. Երրորդութեան առջեւ եւ այնուհետեւ Աստուածորդուն կը դիմենք որպէս լոյսին՝ Աստուածային էութենէն բխած, որն իր հերթին դատապարտուեցաւ հրեայ քահանայից կողմէ, խաչ բարձրանալ յանձն առաւ որպէս անմահ թագաւոր:

Շարականին այս առաջին հատուածին մէջ իրազեկ կը դառնանք այն ճշմարտութեան, որ Քրիստոս Աստուածորդին երկինքէն երկիր խոնարհեցաւ ի սէր մարդկութեան ու դարձաւ լոյսը մեր կեանքին, մանաւանդ երբ կամաւորապէս յանձն առաւ խաչը բարձրանալ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ինք անմահ թագաւորն էր:

Շարականին երկրորդ հատուածը գունագեղօրէն կը բացատրէ Քրիստոսի տարած տառապանքն ու չար-չարանքները, որոնք Ինք կրեց անտրտունջ: Նկարագրական բառերը կ'ըսեն հետեւեալը. «Երկինքը բաւական չէր կրել տառապանքի բաժինը ինչ որ Քրիստոս Ինք կրեց Իր ուսերուն վրայ որպէս անմահն թագաւոր»:

Սա կը բացատրէ ինքնին Աստուածորդու անսահման սէրը մարդկութեան հանդէպ: Եւ վերջապէս շարականը կը բացատրէ նաեւ այն մտածումը, որ նոյնիսկ երկնային պետութիւններ հիացած էին այն իրողութեան վրայ որ Աստուածորդին՝ անմահ թագաւորը մահը կը ճաշակէր մարդկանց փրկութեան համար:

Այս բոլորը մեզ կ'առաջնորդեն խոնարհելու խաչին առջեւ, որովհետեւ խաչին խորհուրդը իր մէջ կ'ամփոփէ Քրիստոսի մարդեղութեան եւ փրկագործութեան խորհուրդը: Խաչը կը դառնայ հրաւեր հոգեւոր արթնութեան եւ Քրիստոսի գերեզմանը կը վերածուի աստուածային լուսարձակի մը մեր կեանքին մէջ: Խաչը կը դառնայ ճանապարհն առ Աստուած, եւ Քրիստոսի գերեզմանը՝ մահուան պարտութիւնը: Ուրեմն երբ կը խոնարհինք Քրիստոսի խաչի ու գերեզմանի առջեւ, ապա վկայութիւնը կու տանք մեր հաւատքին: Խաչն ու թաղումը փառաւորել կը նշանակէ խոստում տալ հետեւելու Քրիստոսի ու Անոր Աւետարանը դարձնելու մեր կեանքի գիրքը:

Վաղը երեկոյեան մեր հոգեւոր կեանքի զարունը պիտի տօնախմբենք, երբ եկեղեցին Սբ. Պատարագի ընթացքին յայտարարէ Տիրոջ Սբ. Յարութիւնը: Պատրաստուեցէք աղօթքով, հաւատքի նորոգութեամբ, ներողամիտ ոգով, ողորմած հոգով ու սրտով, որպէսզի ձեր մէջ ապրիք ծնունդը նոր մարդուն ի Քրիստոս:

25 Մարտ, 2016

**ՏՈՒՔ ԱԻԵՏԻՔ ԵԹԷ ՓԵՍԱՅՆ
ՔՈ ՅԱՐՈՒՑԵԱԼ
ՅԱՂԹԵԱՅ ՄԱՀՈՒ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՄԲ**

Շնորհալի Հայրապետի կողմէ հեղինակուած շարականին բառերն են, որոնք կը յանձնարարեն մեզ Քրիստոսի Յարութեան բարի լուրը տարածելու, որովհետեւ Փեսան Իր Յարութեամբ յաղթանակ տարաւ մահուան վրայ, չարը պարտուեցաւ, եւ մարդը՝ Քրիստոսի առաջնորդութեամբ իր կեանքը ուղղորդեց դէպի հոգեւոր վերածնունդ:

Զատկական Տօնին խորհուրդը կարելի է ամփոփել մէկ բառի մէջ, Ազատութիւն: Քանզի Քրիստոսի Յարութեամբ մարդը կ'ազատագրուի մեղքի ծանրութենէն եւ իր մէջ կը գտնէ կեանքը վերապրելու նորին խորհուրդով: Իսկ նորին խորհուրդը՝ Քրիստոսով ապրուած կեանքն է:

Օրուան Աւետարանական դասը կը քաղենք՝ Յովհաննու Աւետարանէն, ուր Աւետարանիչը մեզի կը պատգամէ Մարդեղութեան խորհուրդի մասին, որուն բացատրութիւնը կը գտնենք Աւետարանի երրորդ գլխուն մէջ. «Որովհետեւ Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ Իր Միածին Որդին տուաւ, որպէսզի ով որ անոր հաւատայ չկորսուի, այլեւ յաւիտենական կեանք ունենայ» (Յովհ. 3:16):

Ինչպէ՞ս պիտի իմաստաւորենք Նոր կիրակին մեր հաւատքի կեանքին մէջ: Առաջին, շարականին բառերով մեր կեանքը պիտի դարձնենք Առաքեալ աշխարհի կեանքին մէջ տարածելու համար բարի լուրը Քրիստոսի Յարութեան: Որովհետեւ բաւական չէ Յարութեան խորհուրդը ապրիլ միայն մեր ներանձնական կեանքին մէջ:

Տակաւին պարտականութիւն ունինք նոյն խորհուրդին հաղորդ դարձնելու նաեւ Աստուծոյ ժողովուրդը:

Ճշմարիտ կեանքը ի Քրիստոս արմատացած կեանքն է, ինչպէս եւ կը պատգամէ առաքեալը. «Ձի ինձ կեանք Քրիստոս է» (Փիլ.1:21): Ուրեմն, Չատիկը հաւատքի տօնն ըլլալով՝ մեր մէջ կը վերարթնացնէ նաեւ մեր կեանքը ի Քրիստոս արմատաւորելու խորհուրդը: Այս խորհուրդը՝ կեանքը ապրելու Քրիստոսի առաջնորդութեամբ պիտի արտայայտենք մեր կեանքի բոլոր հանգրուաններուն եւ, համայնքի մոզայիքը ներկայացնող, բոլոր մակարդակներուն. ըլլան անոնք մանուկները, երիտասարդները, ընտանիքները, զանազան հաւաքականութիւնները:

Կեանքը Քրիստոսով ապրելու խորհուրդը կոչումն է մեր նախնեաց եւ նոյն կոչումը նորոգելու հրաւերն է Չատիկը - Յարութեան Տօնը: Մեր նախնիք այդ կոչմանը մնացին հաւատարիմ դարերով եւ սերունդներու կեանքին մէջ քսաներորդ դարու սկզբին մեր ազգն ու Եկեղեցին իր պատմութեան մէջ արձանագրեց 1,5 միլիոն նահատակներու ներկայութիւնը, որոնք կեանքը ապրեցան վասն Յիսուսի - վասն հայրենեաց: Մեզի համար 2015-ը նշանակալից է, որովհետեւ կ'ոգեկոչենք 100-ամեակը Հայոց Յեղասպանութեան: Բոլորիս համար հոգեկան գոհունակութիւն էր լսել ժամեր առաջ Վատիկանի մէջ տեղի ունեցած եւ Պատարագի ընթացքին Սրբազան Քահանայապետի խօսքը, թէ Հայոց Յեղասպանութիւնը 20-րդ դարու Առաջին Յեղասպանութիւնն էր: Սրբազան Քահանայապետի խօսքը մարտահրաւեր մըն էր, որպէսզի մնանք արթուն ու հաստատակամ մեր ուխտին մէջ, խոնարհելու նահատակաց յիշատակի առաջ եւ կեանքն ապրինք ճշմարիտ հաւատքով ու հայրենասիրութեամբ:

20 Ապրիլ, 2015

ԴԷՊԻ ԱՌԱԻԵԼ ԿԵԱՆՔ

«Այսուհետև մահ ի մեզ զօրանայ, եւ կեանք՝ ի ձեզ»:

(Բ. Կորնթ. 4:12)

Պօղոս Առաքեալի Կորնթացիներուն ուղղուած այս խօսքով կ'ուզենք առաջնորդուիլ եւ առաջնորդել հատաւացեալ մեր զաւակները Հայց. Եկեղեցւոյ դէպի Աւագ Շաբաթ եւ ի մասնաւորի դէպի Զատիկ – Յարութեան Կիրակին:

Առաքեալի այս խօսքը մշտապէս ի մտի ունենանք Աւագ Շաբթուան ողջ ընթացքին, երբ քայլ առ քայլ կը հետեւինք Քրիստոսի երկրաւոր կեանքին վերջին հանգրուաններուն: Որովհետեւ Աստուածորդին ինք կը քայլէր դէպի խաչ կամաւորապէս, որպէսզի մարդը ուղորդէր դէպի առաւել կեանք:

Երբ կը վերընթերցենք Պօղոս Առաքեալի խօսքը, ապա խորապէս կ'ըմբռնենք նաեւ այն զգացողութիւնը, որ վերջինս իր էութեանը խորքին կ'ապրէր Քրիստոսի ներկայութիւնը. «Այսուհետև մահ ի մեզ զօրանայ, եւ կեանք ի ձեզ»:

Հետեւաբար, եթէ քրիստոնէան իր առաքելութեամբ հետեւող է Քրիստոսի, ապա այն պէտք է դրսեւորուի Քրիստոսի նմանակցութեամբ ապրուած կեանքով:

Սոյն գրութեամբ համեստ փորձ մը կը կատարենք հաւատացեալին փոխանցելու Աւագ Շաբթուան իւրաքանչիւր օրուան նուիրուած առաջնորդող խորհուրդ մը, հիմնուած Պօղոս Առաքեալի Կորնթացւոց նամակէն քաղուած խօսքի մը վրայ:

Մեծ Պահքի նախօրէին, երբ մեր մտածումներուն հաղորդ կը դարձնէինք հաւատացեալները, մենք կատարեցինք հետեւեալ սահմանումը. Մեծ Պահքը հաւատացեալի կեանքին մէջ ամենէն ուրախ ժամանակահատուածն է հոգեւոր կեանքի տեսանկիւնէն դիտուած, որովհետեւ աղօթքով ու պահեցողութեամբ, հոգեւոր սերտողութիւններով առաջնորդուած կեանքը ինչքան օրհնութիւն կը բերէ մեր ներաշխարհէն ներս, որպէսզի մաքրուելով իր էութեանը խորքին ապրինք խաղաղութիւն եւ նոր մարդուն ծնունդը ի Քրիստոս:

Իսկ երբ խօսքը կը վերաբերի Աւագ Շաբթուան, ապա քրիստոնէայի կեանքին մէջ հոգեւոր ուրախութեան գագաթնակէտն է, որովհետեւ ինքզինքին առիթը կ'ընծայէ դառնալու ուղեկից Քրիստոսի, իր ամբողջ էութիւնը հեռու պահելով արտաքին աշխարհէն եւ լիովին կեդրոնանալու Քրիստոսի Անձին վրայ:

ԾԱՂԿԱԶԱՐԴ

«Այլ անձամբ յանձինս զվճիռ մահու ընկալաք, զի մի յանձինս ապաստանիցիմք, այլ յԱստուած, որ յաբուցանէ զմեռեալս»:

(Բ. Կորնթ. 1:9)

Ծաղկագարդի Կիրակին մեզի կը ներկայացնէ Քրիստոսի յաղթական մուտքը Սուրբ Քաղաք՝ Երուսաղէմ:

Պօղոս Առաքեալի այս խօսքը կարծէք կը բացատրէ այն մտածումը, որ վերջինս յստակօրէն կ'ապրէր Վարդապետին ներքին յոյզերը, երբ Ան գիտակից գալիքին, այնուամենայնիւ յաղթական մուտք կը գործէր Երուսաղէմ Սր. Քաղաք: Յաղթական, որովհետեւ մահուան վրայ յաղթանակ մը պիտի տարուէր: Այդ նոյն գիտակցութեամբ նաեւ Քրիստոսի Առաքեալը եւ մնացեալները իրենց մարտիրոսութեամբ մահուան վրայ յաղթանակ կ'արձանագրէին:

Ծաղկագարդի Կիրակին ժողովուրդը շատ բնականօրէն «Ովսաննա»-ներու գոչումներով կը դիմաւորէ Վարդապետը, որու մասին լսած էին եւ կամ անձամբ տեսած: Նոյն ժողովուրդի համար սակայն անսպասելի պիտի ըլլար Վարդապետին հասանելիքը: Անշուշտ դժգոհութեան ալիքը հետզհետէ աւելի կը սաստկանար Քահանայապետի եւ դպրաց մօտ, որոնք Վարդապետի ուսմանց մէջ կը տեսնէին վտանգ ու սպառնալիք, որովհետեւ իրականին մէջ Քրիստոսի խօսքերը կը դառնային նաեւ հայելին, որ կ'արտացոլէին նաեւ աշխարհի ու մարդկանց կեանքի պատկերը:

Մեր թելադրութիւնն է, որ հայ քրիստոնեայ հաւատացեալը ի մասնաւորի իր ուշադրութիւնը բեւեռէ

Դոնբացէք արարողութեան վերջին անձանագրուած երկխօսութեան վրայ, որն այնքան տպաւորիչ է ու հոգեւորոգ եւ փաստօրէն պայմանագրութիւն մը կարենալ մուտք գործելու համար Աստուծոյ թագաւորութենէն ներս: Այստեղ կը մեջբերենք երկխօսութիւնը եւ կը թողունք որ ընթերցողը խորասուզուի անոր խորքը: Մնացածը կը թողունք ընթերցողին:

Դոնբացէքի Արարողութեան արտասանուած երկխօսութիւնը.

Ժողովուրդ - Բաց մեզ Տէր, զդուռն ողորմութեան, որ ողբալով կարդամ առ քեզ...

Քահանայ - Ո՛վ են ասոնք, որ բանամ դուռը, որովհետեւ այս դուռը Տիրոջն է եւ արդարներ կը մտնեն անկէ:

Ժողովուրդ - Ոչ թէ միայն արդարները կը մտնեն, այլեւ մեղաւորներ՝ խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ արդարացած:

Քահանայ - Որովհետեւ ասիկա դուռն է երկնքի եւ հովիտը տրտմութեան, զոր Աստուած Յակոբին ուխտեց. արդարներուն հանգստարան, մեղաւորներուն քաւարան, Քրիստոսի արքայարան, հրեշտակներու բնակարան, սուրբերու ժողովարան, ապաւենի քաղաք եւ տուն Աստուծոյ:

Ժողովուրդ - Ս. Եկեղեցւոյ մասին ըսածներդ իրաւ են եւ արդար, որովհետեւ մեզի համար ան անարատ մայր է եւ անկէ կը ծնինք լոյսի եւ ճշմարտութեան զաւակներ եւ ան մեզի համար կեանքի յոյս է եւ անով կը գտնենք հոգիի փրկութիւնը եւ ան մեզի համար արդարութեան ճամբայ է եւ անով կ'ելլենք մեր երկնաւոր Հօր՝ Քրիստոսի մօտ:

Քահանայ - Ահա կը տեսնենք մեր Տէրը՝ Քրիստոս, որ բազմած է Սուրբ Սեղանին վրայ եւ իր մօտ կը կան-

չէ իր կամքը կատարողները թէ՛ ուր որ ես եմ, հոն պիտի ըլլայ նաեւ իմ պաշտօնեան:

Ժողովուրդ - Աստուածային անապական արինին գինն ենք, ցնծութեամբ կ'օրհնենք մեր Փրկիչը՝ Քրիստոս եւ միաբերան կ'ըսենք, Փառք սոսկալի գալստեանդ Տէր:

Քահանայ - Ահաւոր Աստուծոյ փողը մեծաձայն կը գոչէ ըսելով՝ ահա Փեսան կու գայ, եկէք անոր ընդառաջ:

Ժողովուրդ - Ահա ես եւ Աստուծոյ ինծի տուած զաւակներս հոս ենք եւ կ'ակնկալենք տեսնել Քրիստոսը եւ լսել անոր երանաւէտ բարբառը:

Քահանայ - Արարիչ Աստուծոյ ձայնը կը գոչէ ըսելով. եկէք Հօրս օրհնածներ եւ ժառանգեցէք աշխարհի սկիզբէն ձեզի համար պատրաստուած արքայութիւնը:

Ժողովուրդ - Բացէք ինծի ողորմութեան դուռը, որ պէսզի անկէ մտնեմ եւ Տիրոջ խոստովանիմ:

ԱԻԱԳ ՇԱԲԱԹ

ԱԻԱԳ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

«Այլ թէպէտ եւ արտաքին մարդս մեր ապականէ, այլ ներքին մարդն մեր նորոգի օր ըստ օրէ»:

(Ա. Կորնթ. 4:16)

Աւագ Շաբթուան ճանապարհորդութեան ամբողջ ընթացքը լեցուն է բազում ընթերցումներով ու շարականներով, որոնք հիմնականին մէջ կը միտին, նորոգել մեր մէջ ներքին մարդը: Ուրեմն, ինչքան կը յառաջանանք դէպի Զատիկ՝ Յարութեան Կիրակին, այնքան մեր մէջ կ'աճի նոր մարդը:

Քրիստոնեային համար իրապէս ուրախութեան տա՛նող ժամանակն է Աւագ Շաբաթը: Ինչպէս որ ուրախութիւն կ'ապրինք, երբ հարազատի մը հետ ենք, որուն հետ երկար ժամանակէ ի վեր հանդիպումի մը առիթէն զրկուած էինք, ապա նոյնն է պարագան եւ աւելին՝ երբ Քրիստոսի հետ է մեր ճանապարհորդութիւնը: Քանզի քայլելով Քրիստոսի հետ կը լուսաւորուինք եւ մեր էութեան խորքին կ'ապրինք նոր մարդուն ծնունդը:

ԱԻԱԳ ԵՐԵՔՇԱԲԹԻ

«Ո՛չ գիտէք եթէ տաճար էք Աստուծոյ. եւ հոգի Աստուծոյ բնակեալ է ի ձեզ: Եթէ ոք զտաճար Աստուծոյ ապականէ, ապականեցէ զնա Աստուած զի տաճար սուրբ է, որ էն դուք»:

(Ա. Կորնթ. 3:16-17)

Քրիստոսի կողմէ Տաճարին մաքրագործումը ի մասնաւորի կը վերաբերի մեզմէ իւրաքանչիւրին: Որովհետեւ կը մոռնանք այն ճշմարտութիւնը, որ մենք Աստուծոյ Տաճարն ենք ուր կը բնակի Հոգին Աստուծոյ: Ուրեմն, ինչքան զգոյշ պիտի ըլլանք, որ մաքուր պահենք Աստուծոյ Տաճարը, մեր մարմինները: Խորքին մէջ մենք ազատութիւն չունինք մեր մարմինները ապականելու Աստուծոյ խօսքին հակոտնեայ արարքներով, ընթացք տալով քմահաճոյքին: Աստուծոյ բնակչութիւնը կը պահանջէ սուրբ տեղեր եւ ստուգաբար մեր մարմինները:

Մարմինը ինքնաստիճեան սուրբ է արդէն, երբ մեր քրիստոնէութեան կոչմանը մէջ կը մնանք հաստատ: Օրուան խորհուրդը ամփոփուած է նաեւ տասը կուսանաց պատմութեան մէջ, ուր գովասանքի են արժանի իմաստուն կոյսերը, որոնք Փեսան դիմաւորելու համար ունեցան նախապատրաստութիւն: Փեսային դիմաւորելու պահը նաեւ հաշուեհարդարի պահն է:

Բաւական է, որ Աւագ Շաբթուան իւրաքանչիւր օրուան ընթացքին ներկայացուած ընթերցումներէն պատգամ մը վերցնենք եւ անով առաջնորդենք մեր կեանքերը:

ԱԻԱԳ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

«Այլ թէպէտ եւ արտաքին մարդս մեր ապականէ, այլ ներքին մարդն մեր նորոգէ օր ըստ օրէ»:

(Բ. Կորնթ. 4:16)

Աւագ Չորեքշաբթին եկեղեցւոյ արարողական կեանքին մէջ գուցէ ամենէն երկար օրերէն մէկն է: Աւետարանական ընթերցումներու անվերջ շղթան կը միտի

նորոգել մեր մէջ ներքին մարդը: Եթէ ամբողջութեամբ կը տրամադրենք մենք մեզ Աստուծոյ, որպէսզի անոր հոգածութեամբ մշակուի մեր հոգեւոր կեանքը, ապա անտարակոյս կը նորոգուի մեր մէջ ներքին մարդը: Եւ էական չէ եթէ արտաքինապէս կ'ապականէ մարդը, էականը մեր մէջի ներքին մարդն է, որուն նորոգութիւնը պայմանաւորուած է ի Քրիստոս ապրուած կեանքին:

ԱԻԱԳ ՀԻՆԳՉԱԲԹԻ

«Զի հաւատքն ձեր մի իցեն իմաստութեամբ մարդկան, այլ՝ զօրութեամբ Աստուծոյ»:

(Ս. Կորնթ. 2:5)

Աւագ Հինգշաբթին առաւելաբար մեզի կը պատգամէ խորհուրդը Սբ. Պատարագին, որուն ընդմէջէն եւ կը ճառագայթէ նաեւ Աստուծոյ զօրութիւնը: Օրուան արարողութիւններու ամբողջ ընթացքը հոգեւոր տրամայ մըն է, որուն պատկերէն ներս մուտք գործելով մենք մեզ կը կտրենք դուրսի աշխարհէն եւ կեանքը կ'ապրինք Քրիստոսի հետ: Եւ եթէ այդ հոգեւոր գործողութեան մէջ յաջողեցանք, ապա կը վայելենք Աստուծոյ զօրութեամբ մեզի տրուած հաւատքը:

Մարդը, հոգեւոր էակ մըն է, եւ Աւագ Հինգշաբթի օրուան հոգեպարար արարողութիւնները միայն կը նպաստեն ըմբռնել ամբողջ կատարուածը Քրիստոսի կեանքին մէջ:

Եթէ Սբ. Պատարագը Քրիստոսի ընծայումն է մարդկանց հոգիներու փրկութեան համար, ապա Վերջին Ընթրիքին յաջորդող Ոտնլուայի արարողութիւնը խոնարհութեան ամենէն ցնցող պատկերն է: Խորքին մէջ Ոտնլուան ինքն իր մէջ արդէն Աւետարան մըն է:

Մարդկութիւնը կը տառապի այսօր, որովհետեւ մեծեր
ու փոքրեր կը զլանան ըլլալ խոնարհ ու ազնիւ:

ԱԻԱԳ ՈՒՐԲԱԹ

«Զի ճառ խաչին կորուսելոցն յիմարութիւն է, այլ
փրկելոցս մեզ գորութիւն Աստուծոյ»:

(Ա. Կորնթ. 1:18)

Հաւատքի կեանքին մէջ խարխափողներու համար
խաչին մասին խօսիլ յիմարութիւն կը թուի ըլլալ, երբ
նոյն խաչը հաւատացեալին կը հաղորդէ Աստուծոյ գո-
րութիւնը:

Ինչպէս որ մեր ֆիզիքական մարմինները պէտք
ունին սնունդի, ապա նոյն ձեւով ալ սնունդի պէտք
ունի նաեւ հոգին: Եւ եթէ չսնուցենք հոգին Աւետա-
րանի լոյս պատգամներով, ապա հաւատքը կը մեռնի:

Երբ կը հետեւինք Քրիստոսի չարչարանաց եւ ի
մասնաւորի Անոր Խաչելութեան, ապա այն ժամանակ
կը տեսնենք եւ կը հասկնանք աստուածային սիրոյ գո-
րութեան անսահմանելիութիւնը:

ԱԻԱԳ ՇԱԲԱԹ

«Ո՛չ գիտէք, եթէ փոքր մի խմոր զամենայն զանգու-
ածն խմորէ: Սրբեցէք ի բաց զհին խմորն, զի եղիջիք նոր
զանգուած, որպէս էդ անխմորք. քանզի զատիկ մեր
զենաւ՝ Քրիստոս»:

(Ա. Կորնթ. 5: 6-7)

Ինչպէս Մեծ Պահքի ամբողջ շրջանը, ապա առաւել եւս Աւագ Շաբաթը հոգեւոր պատրաստութեան շրջանն է՝ դիմաւորելու համար Զատիկը:

Եւ ճշմարիտ տօն է, երբ կը կարողանանք հրաժարիլ հին մարդէն եւ քայլել Քրիստոսի գծած ճանապարհէն: Աւագ Շաբթուան օրը հաւատացեալը արդէն լիովին պատրաստուած է դիմաւորելու Զատիկը, դառնալու մէկ ի Քրիստոս:

ՄԲ. ԶԱՏԻԿ ՏՕՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ

«Այլ շնորհք Աստուծոյ, որ ետ մեզ զյաղթութիւն ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»:

(Ս. Կորնթ. 15:57)

Քրիստոնեայի կեանքին մէջ ճառագայթող մեծագոյն յաղթանակը Յարութեան շունչն է, որն յեղաշրջեց մարդկութիւնը եւ նոյն մարդուն հոգեմտաւոր աշխարհին մէջ հաստատեց վերստին կենդանութեան հաւատքն ու տեսիլքը: Յարութեան շունչին առաջնորդութեամբ մարդը իր մէջ վերագտաւ Աստուծոյ պատկերը, որն հետզհետէ աղօտուած ու տկարացած էր մեղքին ծանրութեան տակ: Եւ ինչպէս Պօղոս Առաքեալ կ'ըսէ իր Կորնթացիներուն ուղղուած նամակին մէջ. «Այլ շնորհք Աստուծոյ, որ ետ մեզ զյաղթութիւն ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»:

Մեծ Պահքի քառասնօրեայ աղօթքի ու պահեցողութեան ճանապարհորդութենէն յետոյ՝ հոգեւորապէս ամրացած եւ Ասագ Շաբթուան գունագեղ պատկերով ներշնչուած, մեր էութեան մէջ առաւել պայծառատես աչքերով կ'ապրինք Քրիստոսի ներկայութիւնը, որուն Յարութեան խորհուրդին ի տես կը վկայենք նաեւ մենք Իղաբեր Կանանց հետ մեղքին վրայ տարուած յաղթանակը եւ մարդկութեան առջեւ բացուած ճանապարհը լոյսի:

«Քրիստոս Յարեալ ի մեռելոց»
«Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»

Յայտարարել Քրիստոսի Յարութիւնը կը նշանակէ զայն դարձնել պատկերն ու հայելին մեր կեանքին: Եւ ինչքան հաւատքով կը կեդրոնացնենք մեր ուշադրութիւնը Քրիստոսի Յարութեան խորհուրդին վրայ, այնքան կը մօտենանք ու կը միանանք Քրիստոսի եւ կը դառնանք նմանակից Անոր կեանքին: Կը նշանակէ թէ երբ կը հետեւինք Քրիստոսի կենդանի պատկերին աղօթքով ու երկիւղածութեամբ, ապա մեր մէջ կը դադրի մեղքն ու Աստուծմէ օտարացած մարդը: Քրիստոսի Յարութեան խորհուրդով լեցուած մարդը, երբ իր կեանքի ընթացքը կը հաստատէ ուղիղ, արդար, ճշմարիտ, Աստուածանուէր ու մարդասէր ուղիին վրայ, այդպիսին արդէն գործնապէս կը տօնախմբէ Քրիստոսի Յարութիւնը:

Մարդը, անտարակոյս, իր էութեամբ տկար արարած մըն է, եւ սակայն եթէ հոգեւոր էակ մըն ենք, ապա մեր մէջ կրնանք ջերմացնել փափաքն ու ներքին մղումը բարձրանալու առ Աստուած, որը պայմանաւորուած է միայն ու միայն պայծառակերպ կեանքի ընթացքով մը:

Հաւատաւոր ժողովուրդ, նայեցէք Քրիստոսի կեանքի ճանապարհին ու Անոր խօսքերուն մէջ մկրտեցէք ձեր կեանքը, որպէսզի դառնանք նոր ի Քրիստոս:

Քրիստոսի Աւետարանը արդարեւ կեանքի գիրքն է, տարբեր միւս բոլոր գիրքերէն ու գէթ ի վեր մարդկային այն ըմբռնումներէն, որոնց արմատը Աստուծոյ սէրն ու իմաստութիւնը չէ: Քրիստոսի Աւետարանը մարդուն կը շնորհէ յաղթութիւն եւ առաւել կեանք, որուն գիտակցութիւնը կ'արմատանայ մեր մէջ, մանաւանդ Զատնիւան Սբ. Պատարագին, երբ բոլորով հոգեւին հրճուած կը յայտարարենք.

«Քրիստոս Յարեաւ ի մեռելոց»
«Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»

Հայ քրիստոնեայ հաւատացեալին համար Զատիկը, Սբ. Յարութեան տօնը՝ տօնն է նաեւ մեր յաղթանակած կեանքին, որուն գրաւականն է մեր հաւատքը: Մեր ազգի կեանքին ու պատմութեան ճանապարհը նման է Քրիստոսի կեանքին Գողգոթայի ճանապարհին:

Նման է նաեւ մեր ազգի կեանքի ճանապարհը Քրիստոսի կեանքին: Նման այն առումով, որ եթէ Քրիստոս խաչի ճանապարհի աւարտին յաղթեց աշխարհին, ապա մեր նախնիք նոյնպէս վերապրեցան կեանքը մեր մէջ: Ուրեմն, ինչքան պատասխանատւութիւն կը վստահուի մեզի, որպէսզի դառնանք հարազատ ժառանգորդները մեր դարաւոր Սուրբ Եկեղեցիին, Մայր Հայաստանին, հայ արժէքներուն, հայ դպրոցին ու հայ ընտանիքի սրբութեան, որպէսզի մեր ձեռքերով կերտենք վաղուան արշալոյսը եւ դառնանք ճարտարապետները անմահութեան:

Քրիստոսի Սուրբ Յարութեան խորհուրդովը շաղախենք մեր հոգեւոր էութեան ողջ ծալքերը, որպէսզի փառաւորուի Աստուած եւ հրաշակերտուի մեր կեանքը:

«Քրիստոս Յարեաւ ի մեռելոց»
«Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»: Ամէն:

17 Փետրուար, 2016

ԱՐՅԱԽԻ ԿԱՆՁԸ

Յարութեան խորհուրդով լեցուն է մեր հոգին, քանի դեռ օրեր առաջ Եկեղեցին տօնախմբեց մեր Տիրոջ եւ Փրկչին Յիսուս Քրիստոսի հրաշալի Յարութեան եւ միաժամանակ այն ճշմարտութեան, որ եւ Յարութեան խորհուրդը եղած էր առաջնորդող ոգին մեր նախնեաց:

Սուրբ Յարութեան խորհուրդին առաջնորդութեամբ մեր ազգի զաւակներ իրենց կեանքն արժեւորած են ստեղծագործ ոգիով, որուն ամենավառ ապացոյցն է վերանկախացեալ մեր Մայր երկիրը:

Տօնական օրերու բարձր տրամադրութիւնները խաթարուեցան, երբ Ուրբաթ, 1 Ապրիլի վաղ առաւօտեան մեր երկրի ու Արցախ աշխարհի ամբողջ երկայնքով Մբ. Եկեղեցւոյ հաւատաւոր զաւակաց անդորրը թշնամու անակնկալ հարուածներու տակ ծանր կորուստներ կրեց: Գէթ մինչեւ երէկուան տուեալներով ունեցած ենք 18 նահատակներ, որոնք հայրենեաց պաշտպանութեան համար իրենց կեանքն են պատարագած: Ստացուած տեղեկութեանց համաձայն 18 նահատակ զինուորներու կողքին զոհուած է նաեւ 12-ամեայ Վաղինակ Գրիգորեան եւ արձանագրուած են աւելի քան 35 ծանր վիրաւորներ:

Մարտունակ հայ քաջարի զինուորներ յետ են մղած թշնամու յարձակումները ապահովելու համար մեր ժողովուրդի անվրդով կեանքը: Թշնամու այս արարքը դատապարտուած է եւ մեր երկրի պետական իշխանութեանց եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէ: Ժամեր առաջ Մայր Աթոռ Մբ. Էջմիածնի մէջ եւ Երեւանի Մբ. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Եկեղեցւոյ մէջ կատարուած է աղօթք Հայրենիքի անսասանութեան

համար եւ գոհեալ ազատամարտիկներու հոգիներու խաղաղութեան համար:

Հայրապետական իր խօսքին Վեհափառը կը խորհրդածէ հետեւեալ բառերով.

«Խստօրէն դատապարտում ենք Ադրբեջանի կողմից Ղարաբաղի սահմանի երկայնքով իրականացուող նախահարձակ գործողութիւնները, ուղղուած նաեւ բնակավայրերի ու խաղաղ բնակչութեան դէմ:

Մեր աղօթքը եւ զօրակցութիւնն ենք բերում Լեռնային Ղարաբաղի իշխանութիւններին ու ժողովրդին, Պաշտպանութեան բանակի քաջարի հրամանատարներին ու զինուորներին: Յորդորում ենք չնուազող արիութեամբ ու աներեր հաւատքով դիմակայել Հայրենիքի անկախութեան եւ մեր ժողովրդի անվտանգութեան դէմ ուղղուած թշնամական հարձակումներին:

Ադրբեջանի շարունակական սադրանքներն ու ռազմական գործողութիւնները խաթարում են կայունութիւնը տարածաշրջանում եւ ի չիք դարձնում հակամարտութեան կարգաւորմանն ուղղուած ջանքերը:

Կոչ ենք ուղղում միջազգային հանրութեանը, ի մասնաւորի դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման գործընթացում ներգրաւուած երկրներին՝ կասեցնելու Լեռնային Ղարաբաղի դէմ Ադրբեջանի չղադարող ոտնձգութիւնները:

Աղօթում ենք, որ Տէրը երկնքի լուսեղէն հարկերում հանգստութիւն պարգեւի գոհուածների հոգիներին, մխիթարութիւն՝ հարազատներին, շուտափոյթ ապաքինում՝ վիրաւորներին:

Թող Աստուած զօրակից ու պահապան լինի խաղաղութեան պաշտպան Հայոց Բանակին»:

Միբելի հաւատաւոր ժողովուրդ, այսօր մեր նահատակ զինուորները իրենց հաւատքի վկայութիւնը

կու տան: Իրենց նահատակութիւնը յանուն հայրենիքի անսասանութեան, հայրենասիրութեան լաւագոյն արտայայտութիւնն է: Աւելի պարզ բառերով անոնք ճշմարիտ հետեւողներն են Քրիստոսի: Որովհետեւ եթէ Քրիստոս Աստուածորդին կամաւորաբար յանձն առաւ խաչը բարձրանալ, ապա մեր երիտասարդ ու քաջարի զինուորները սիրով ու հայրենանուէր ոգիով իրենց կեանքը պատարագեցին վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց:

Աղօթք բարձրացնենք առ Աստուած մեր երկրի անսասանութեան համար, որպէսզի Տէրը իր հովանին տարածէ մեր ժողովուրդին վրայ ու խաղաղութիւնը վերագտնէ եւ մեր ժողովուրդը շարունակէ իր ստեղծագործ ու հայրենակերտ կեանքը:

5 Ապրիլ, 2016

ԱՊՐԻԼԵԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայոց Ցեղասպանութեան 101-րդ տարեդարձն է եւ այս տարի ի տարբերութիւն անցեալ տարիներուն պիտի տօնախմբենք աւելի քան մէկուկէս միլիոն սուրբերու յիշատակը: Սուրբերու տօնախմբութիւնը նշանակալից կը դառնայ, երբ մեր կեանքի ընթացքը կը պայմանաւորուի այն տեսիլքով ու հաւատքով, որոնց համար իրենց կեանքը պատարագեցին նահատակները:

Մեր ազգի կեանքի ճանապարհը, պատմութիւնը վկայ եղած է եւ պիտի շարունակէ ըլլալ պայքարի ճանապարհը, եթէ երբեք կ'ուզենք պահպանել մեր հայադրոշմ ինքնութիւնը, որովհետեւ հրաժարիլ այդ ինքնութենէն կը նշանակէ արհամարհել այն պատարագումը, որը դարձաւ գիտակից մահը մեր նահատակաց: Այսօր ալ պատմութիւնը կը կրկնուի հարիւրմէկ տարիներ յետոյ: 1915 թուականէն մինչեւ օրս հարիւրմէկ տարիներու ամբողջ ընթացքն ալ լեցուն է անընդհատ փորձութիւններով եւ սակայն ժամանակը, որուն մէջ կ'ապրինք մեզ կը վերլիշեցնէ պատմութեան այն դառն էջը, այն որ այսօր անգամ կը գտնուինք վտանգի առջեւ եւ ժամանակը կը պահանջէ ունենալ նոր սուրբեր, նոր հերոսներ, որպէսզի տէրը կանգնինք մեր նախնեաց կողմէ մեզի աւանդուած հոգեւոր ժառանգութեան: Հայրենի հողն է այդ, մեր քրիստոնէական հաւատքն ու վաղուան Հայրենիքի տեսիլքը:

Ի՞նչ է որ կը պահանջուի մեզմէ եթէ ոչ արթնութիւն եւ միասնականութեան դրսեւորումը, որպէսզի փորձութիւնը հեռու պահենք մեզմէ: Մեզի այցի կու գայ Քրիստոս եւ կը պատգամէ. «Զի՞նչէք, արիք, կացէք յաղօթս՝ զի մի մտանիցէք ի փորձութիւն» (Ղուկաս 22: 46):

Հայոց Ցեղասպանութեան 101-րդ տարեդարձը կ'իմաստաւորուի, երբ մենք իւրաքանչիւրս կը դառնանք սուրբերու տեսիլքն ու հաւատքը կրող զաւակները մեր Մբ. Եկեղեցւոյ ու ազգին: Դեռ օրեր առաջ Հայրենիքն ու Արցախը ապրեցան ծանր օրեր, ունեցանք տասնեակներով զոհեր ու հարիւրաւոր վիրաւորներ, աւերակ դարձան տուններ եւ սակայն բացառութիւնները յարգելով հանդերձ մեր ազգի կեանքին մէջ տիրեց համատարած անսարքերութեան հիւանդութիւնը: Յստակ է, որ գործնապէս աղօթքի մէջ չենք եւ ոչ ալ կը զգանք ցաւն ու տառապանքը այն մայրերուն, որոնք իրենց սիրասուն զաւակներուն կարօտը կը քաշեն: Երիտասարդ ու քաջարի զինուորները իրենց ամբողջ ունեցածը տուին, որ կեանքն էր, եւ մեր ժողովուրդը կը կամենայ տէրը կանգնիլ իր հայրենական հողին ու այդ հողին վրայ ապրող հայորդեաց:

Այսօր մեր Սուրբ Եկեղեցւոյ կեանքին մէջ կը տօնախմբենք նաեւ Երեւման Սուրբ Խաչի տօնը եւ այս առիթով Կիւրեղ Երուսաղէմացի Հայրապետը հետեւեալ խորհրդածութիւնը կը կատարէ.

«...ամենաբարեպաշ քրիստոնէայ կրօնքը ոչ թէ միայն խօսքի իմաստութեամբ կը հաստատուի, այլ նաեւ Հոգիին յայտնութեամբ եւ Անոր զօրութեամբ»:

Մեր նահատակները իրենց քրիստոնէական կրօնքը ապրեցան ոչ միայն խօսքի իմաստութեամբ, այլեւ գործնապէս այն արտայայտեցին, իրենց կեանքի պատարագումով: Այսօր եւ յաւիտեան քրիստոնէական կրօնքի ժառանգորդներս նոյնը կը պահանջուի եւ կը սպասուի, որպէսզի ապրինք այդ հաւատքը: Քրիստոնէական կրօնքը գործնապէս ապրելով իմաստ կը պարգեւենք մեր կեանքին, այլապէս մեր կեանքը պիտի նմանի այն խոտին, որ կը ծաղկի, կը չորնայ եւ ապա փոշիանալով

օղին մէջ կը ցնդէ: Կեանքը այնպէս պիտի ապրինք, որ ուրիշի կեանքին մէջ նոր կեանք դարձնենք մեր խօսքն ու գործը, մեր կեանքի ուղին դառնայ նոր ճանապարհ գալիք սերունդներու կեանքին մէջ:

«Ձի՞ ննջէք, արիք, կացէք յաղօթս՝ զի մի մտանիցէք ի փորձութիւն»:

Փորձութեան մէջ ենք փաստօրէն: Կը թերանանք մնալ արթուն պահակները հայրենեաց հողին ու մեր քրիստոնէական հաւատքին: 101-րդ տարեդարձը Հայոց Յեղասպանութեան կարծէք սովորական թուական մըն է արդէն դարձած: Եթէ մեր սպասումն է որ Հայրենիքը դառնայ յաւերժական ներկայութիւն ժողովուրդներու մեծ ընտանիքի թատերաբեմին վրայ, ապա աղօթքը պիտի դարձնենք մնայուն ուղին մեր կեանքին: Մէկուկէս միլիոն նահատակ սուրբերու յիշատակը պիտի տօնախմբենք նորովի ուխտ մը կատարելով: Մեզմէ իւրաքանչիւրի կեանքը պիտի դարձնենք բառին լման առումով պատարագում ու պայքար: Մեր կոչումը պիտի ըլլայ մշտապէս կապուած մնալ մեր Մայր Երկրին ու Մբ. Էջմիածնին, եթէ երբէք կ'ուզենք անաղարտ պահել մեր ինքնութիւնը: Եւ եթէ մեր մէջ կը տկարանայ այս կոչումը, ապա փորձութեան մէջ ենք արդէն: Հայոց Յեղասպանութեան 101-րդ տարեդարձը, մէկուկէս միլիոն նահատակ սուրբերու տօնախմբութիւնը մեզ կը հրաւիրէ աղօթքի, որպէսզի ապրինք նորոգեալ հաւատքով, ազգային գիտակցութեամբ, հայրենական տեսիլքով, համամարդկային արժէքներու ձեռքբերումով, ներքին միաբանութեամբ, ազգի կեանքի քաղաքական ու տնտեսական, յստակ ռազմավարութեամբ: Հայաստանը մեր ինքնութեան ակունքն է եւ Սփիւռքը՝ իր կեանքը կ'ապահովէ միայն Մայր Հայաստանով: Ուրեմն, մեր մտասեւեռման կէտը պիտի

դարձնենք Մայր Հայաստանը եւ պիտի ապրինք այնպիսի կեանքով մը, որ ամբացնէ մեր ինքնութիւնը եւ անով իսկ գալիք սերունդներու կեանքին նպատակ ու առաքելութիւն հաղորդող Հայաստանը:

Փառք կու տանք Ամենակալին Աստուծոյ որ բոլորիս շնորհած է կեանք: Տրուած կեանքը աւելի գեղեցկացնելու հրաւերին պատասխանենք աղօթքի կեանքով, որպէսզի փորձութեան մէջ չտանինք այդ:

«Կացէք յաղօթս՝ զի մի մտանիցէք ի փորձութիւն»:

24 Ապրիլ, 2016

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԱՐՁՈՒՄԸ ԵԿԵՂԵՑՈՒ ԾՆՈՒՆԴՆ Է

Համբարձման Տօնի նախօրեից Կիրակին է եւ Սբ. Եկեղեցւոյ կեանքի մէջ այս տօնը կը նշանաւորուի քրիստոնէական առաքելութեան սկզբնաւորութեամբ: Հետեւինք Քրիստոսի խօսքերուն եւ տեսնենք թէ ի՞նչ կը պատգամէ. «Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս եւ յերկրի, որպէս առաքեաց զիս Հայր եւ ես առաքեմ զձեզ» (Մատթ. 28:19):

Քրիստոս մեզ կը բացատրէ յստակօրէն որ Իր երկրաւոր կեանքը Աստուծոյ կամքին բացայայտումն է եւ նոյն իշխանութիւնը կը փոխանցուի Քրիստոսով Իր առաքեալներուն: Չէ՞ որ նոյնն է պատկերը նաեւ ընտանիքի կեանքին մէջ, երբ ծնողներ ընտանիք կը կազմեն որպէս արտայայտութիւնը Աստուծոյ կամքին, ապա կ'ուղղորդէք ձեր զաւակները նոյնպիսի կեանքի, որպէսզի ձեր կեանքին բարի օրինակը ըլլայ ուղեցոյցը իրենց կեանքի:

Այնուհետեւ Քրիստոս Իր առաքեալներուն կը պատգամէ թէ ի՞նչ ձեռով պիտի իրագործեն իրենց վստահուած առաքելութիւնը. «Գնացէք այսուհետեւ աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսս յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Ուսուցէք նոցա պահել զամենայն որ ինչ պատուիրեցի ձեզ. եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն ատուրս, մինչեւ ի կատարած աշխարհի» (Մատթ. 28:20-21):

Տեսէք թէ ինչպիսի. պատասխանատւութիւն կը վստահուի առաքեալներուն եւ անոնցմով մեզի, որպէսզի քարոզենք Քրիստոսի Աւետարանը, մկրտութիւն կատարենք, պահպանենք Տիրոջ պատուիրանները,

որովհետեւ այս բոլորով կ'ապահովենք Եկեղեցւոյ ներկայութիւնը: Այս բոլորի նպատակն է անհատին ու հաւաքականութեան մէջ մշակել քրիստոնեան, որպէսզի կեանքն ապրինք Աստուծոյ կամքի համաձայն: Որովհետեւ երբ մարդը պարպուած է աստուածային սէրէն ու իմաստութենէն, ապա կրնայ կատարել այն ինչ որ աշխարհի զանազան տեղերու մէջ կը կատարուի այսօր:

Միւրելի բարեպաշտ հաւատացեալներ, Համբարձման Տօնի նախօրէին, որպէսզի մեր պատգամը ուղղակի առնչենք նաեւ մեր համայնքի կեանքին, ապա պարտ կը զգանք սկիզբը դնելու նաեւ առաքելութեան մը, որուն մասին երկարօրէն մտածած ենք: Այդ դեռ չմկրտուած հայորդեաց պարագան է. Խորհրդային տարիներէն գուցէ հազարաւորներ կան, ովքեր դեռեւս մկրտուած չեն եւ թէ ինչ - ինչ պատճառներով կը կամենան մկրտութիւն ստանալ, ապա պարտ ենք ճանապարհ հարթել բոլորին առջեւ, որպէսզի Եկեղեցի զան եւ անձամբ խօսին մեզի հետ, հոգեւորականներու հետ, որպէսզի այս էջը մեր եկեղեցական կեանքի մէջ մէկ անգամ ընդ միշտ փակենք: Ժամանակին յաճախ նման իրավիճակներ կրնան ստեղծուիլ, բայց բոլոր իրավիճակները սրբագրելի են:

1 Մայիս, 2016

ԱՍԻԿԱ ԱՍՏՈՒԾՈՅ ԴՈՒՌՆ Է

«Այս դուռն Տեառն է, եւ արդարք մտանեն ընդ սա»:

(Մատթ 117:20)

Մաղմուսասացի բառերն են, որոնք այս պահին կ'առաջնորդեն մեզ եւ միաժամանակ կ'ազդարարեն, որ Եկեղեցին՝ Դուռն է դէպի Աստուած ճանապարհորդութեան եւ պայման է, որ իւրաքանչիւրս երբ մուտք կը գործենք աղօթքի այս Տունէն ներս մեր հոգեւոր էութեանը խորքին զգանք նոր կեանքին շարժումը եւ ուխտենք քայլել Քրիստոսի հետ՝ մեր կեանքը դարձնելով ապրող Աւետարան:

Հայց. Եկեղեցւոյ աւանդութեան համաձայն նորակառոյց Եկեղեցին իր օծման նախօրէին պէտք է ունենայ տնօրինեաց արարողութիւնը, որը կը յիշատակենք որպէս նաւակատիք, որու ընթացքին մենք գոհաբանական աղօթք կը բարձրացնենք առ Աստուած, որովհետեւ երկնային շնորհներով օծելով մեր կեանքը պատիւը տուաւ մեզ եկեղեցաշինութեամբ դառնալու գործակից աստուածային առաքելութեան: Բայց տեսէք թէ ի՞նչ կը պատգամէ սաղմուսասացը. «Այս դուռն Տեառն է, եւ արդարք մտանեն ընդ սա»: Ուրեմն, Եկեղեցւոյ ճշմարտութիւնը կը պարտաւորեցնէ մեզ, որպէսզի գործենք արդարութեամբ եւ դառնանք արդար: Այս է նաեւ Եկեղեցւոյ առաքելութիւնը՝ հրաւիրելու բոլորս ապրելու Աւետարանէն ճառագայթող պատգամներու համաձայն:

Այսօր Լաս Վեկասի հայ համայնքի կեանքը կը կերպարանափոխուի նոր Եկեղեցւոյ կառոյցով: Եւ այս սկիզբն է միայն եկեղեցաշինութեան սրբազան առաքելութեան: Այս համայնքի առջեւ կը բացուի ճանա-

պարհորդութիւն մը, որուն ամբողջ ընթացքը պիտի լեցնենք ծառայութեամբ, եկեղեցանուէր առաքելութիւններով, հայրենասիրութեամբ, բարի արարումներով, որպէսզի մեր զաւակները դառնան օրինակելի քաղաքացիները այս երկրի, հայեցի իրենց շունչով:

Սիրելի հաւատաւոր զաւակներ, աղօթքի այս Տան մէջ բոլորս հաւասարապէս պատասխանատուութիւն ունինք դառնալու ծառայողներ: Ձեր բոլորին ծառայութեան ենք կանչուած մենք մեր հոգեւոր եղբայրներով եւ դուք մաս ու բաժին պիտի վերցնէք ծառայութեան մէջ, որպէսզի զգաք կապը Եկեղեցւոյ մէջ եւ աւելին՝ Եկեղեցւոյ պատկերին մէջ դուք ձեզ տեսնէք:

Մեր մասնայատուկ գնահատութիւնը անխտիր բոլորին, ովքեր տեսիլքը ունեցան եկեղեցաշինութեան: Աստուծոյ մատենին մէջ արձանագրուած են բոլորիդ անունները անխտիր:

Մեր ջերմ գնահատութիւնը Եկեղեցւոյ նախկին Հոգեւոր Հովիւ՝ Տ. Նարեկ Աւագ Քինյ. Մատարեանին, Ծխական Խորհուրդին, Ատենապետութեամբ տիար Կարէն Սեթանեանի, եւ բոլոր նուիրատուներուն, որոնց հաւաքական ծառայութեամբ այս սրբազան կառոյցը երկինք բարձրացաւ Աստուծոյ փառքին համար, որպէս խորհրդանիշը մեր ազգի յարութեան:

Սիրելիներ, տօնախմբենք Եկեղեցւոյ օրհնութիւնը եւ հոգեւին պատրաստութիւնք վաղուան օծման սրբազան արարողութեան: Քիչ յետոյ թափօրով պիտի առաջնորդուինք Եկեղեցւոյ մայր մուտքին, այնտեղ կատարելու համար երկու խաչքարերու օծումը, որոնք Եկեղեցին մուտք գործող իւրաքանչիւր հաւատացեալ պիտի դիմաւորեն խաչի զօրութեամբ եւ աստուածային լոյսով:

«Այս դուռն Տեառն է, եւ արդարք մտանեն ընդ սա»:

Ապրիլ 2016

ՅԱԻԵՐԺՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՄՐՈՒԹԵԱՆ ԺԱՅՈՒՐ

«Ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ եւ առնէ զնոսա, նմանեցի առն իմաստնոյ որ շինեաց զտուն իւր ի վերայ վիմի. իջին անձրեւք եւ խաղացին զետք, շնչեցին հողմք եւ բաղխեցին զտունն եւ ոչ կործանեցաւ, քանզի ի վերայ վիմի հաստատեալ էր»:

(Մատթ. 7:24-25)

Հայց. Առաքելական Մեր Մայր Սուրբ Եկեղեցին՝ ժայռն է ամրութեան եւ յաւերժութեան մեր ժողովուրդի զաւակաց համար, ուր մենք կը զգանք Աստուծոյ ներկայութիւնը եւ հրաւեր կը ստանանք դառնալու առաքելները Քրիստոսի: 1700 եւ աւելի տարիներ շարունակ Աղօթքի այս Տունը մնաց կանգուն դէմ դնելով ժամանակներու բոլոր փորձութեանց ու վտանգներուն: Եթէ պատկերաւոր ձեւով ուզենք ներկայացնել Եկեղեցոյ դերը եւ առաքելութիւնը մեր Եկեղեցոյ կեանքին մէջ, ապա այն շանթարգելն է, որպէսզի վտանգը չհասնի Եկեղեցին կազմող հաւատացելոց:

Միբելի բարեպաշտ հայորդիք, մեր խօսքը պարզօրէն կը բացատրէ այն մտածումը, որ հետեւինք Քրիստոսի պատգամին, եւ նմանինք իմաստուն մարդուն, որն իր կեանքը հաստատեց Աստուծոյ խօսքին վրայ, որ ճշմարիտ է եւ յաւիտենական: Այսօր, Լաս Վեկասի հայ համայնքին մէջ օճեցինք նոր Եկեղեցին, որուն հովանիին տակ պիտի ամրապնդենք հայ համայնքիդ քրիստոնէական հաւատքի ու սիրոյ կեանքը: Այս Սուրբ Եկեղեցին խորհրդանշն է մեր ազգի Յարութեան եւ մշտական հրաւերը՝ հոգեւոր արթնութեան: Դուք պիտի մնաք Եկեղեցոյ պատկերին մէջ ձեր աղօթքի կեանք-

քով, ձեր ծառայութեամբ, ձեր հաւատքով ու սիրով, ձեր նուիրաբերումներով, ձեր ընտանեկան ներկայութեամբ: Այս Տան մէջ բոլորս անխտիր կը դառնանք հաւասարներ Աստուծոյ աչքին, եւ մէկգմէկու հանդէպ ծառայասէր ոգիով կը կազմենք մեծ ընտանիքը:

Եկեղեցաշինութեան սրբազան առաքելութեան գործը իր առաջին քայլը կ'առնէ այսօր: Այսուհետեւ եկեղեցին պահել պահպանելու գործը պիտի շարունակուի մեր պատանիներու, երիտասարդներու քրիստոնէական եւ հայեցի դաստիարակութեան համար: Այս սրբազան աղօթքի Տունը փոքրիկ Հայաստան մըն է, Սբ. Էջմիածնի Խորհուրդի մարմնաւորումը, ուր մեր կեանքն ապահով է եւ անով իսկ կապուած Աստուծոյ, մեր անցեալ պատմութեան ու գալիքին:

Մեր անվերապահ գնահատութիւնը կը յայտնենք առաջին հերթին նախկին Հոգեւոր Հովիւին՝ Տ. Նարեկ Աւագ Քինյ, Մատարեանին, ի մասնաւորի Ծխական Խորհուրդին, Ատենապետութեամբ Տիար Կարէն Մեթանեանի, մեր ճարտարապետին՝ Կարէն Խուտիկեանին, շինարարներուն, մեր կնքահայրերուն եւ նուիրատուներուն, մասնաւորաբար Բրշ. Յարութ Սրկ. Մարգարեանին, որ օր առ օր հետեւեցաւ աշխատանքին ու զօրակցեց Ծխականին: Վերջապէս գլխաւոր Բարերար՝ Մեծայարգ Տիար Մարք Կիրակոսին, որուն ներդրումը այս Եկեղեցոյ կառոյցին իրականացմանը մէջ արժանի է բոլորիս գնահատութեան:

Ի մասնաւորի կ'ողջունենք ներկայութիւնը մեր պատուոյ հիւրերուն, գլխաւորութեամբ Հայաստանի Հանրապետութեան Գլխաւոր Հիւպատոսութեան Պատուոյ Հիւպատոս՝ Տիար Ատրուշան Արմէնեանին, պետական այրերուն եւ քոյր Եկեղեցիներու ներկայացուցիչներուն:

Հայց, Եկեղեցին՝ մեր ինքնության խորհրդանիշն է: Հայաստան եւ աշխարհացրիւ հայութեան յաւերժութիւնը պայմանաւորուած է Հայց. Եկեղեցիով. Վեմն է այս մեր կեանքին, Սրբութիւն Սրբոցն է մեր ժողովուրդի, որուն առջեւ կը խոնարհինք եւ այն ապահով կ'ուզենք փոխանցել գալիք սերունդներուն:

«Թագաւոր երկնաւոր զեկեղեցի քո անշարժ պահեա»:

Մայիս, 2016

ՏՕՆ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ

Սբ. Էջմիածնի Տօնն է այսօր մեր Սուրբ Եկեղեցւոյ կեանքին մէջ: Մեր եկեղեցական տօներուն մէջ առանձնայատուկ նշանակութիւն ունեցող տօն է Սբ. Էջմիածնի Տօնը: Սբ. Էջմիածին անունը կը բացատրէ Աստուածորդու այցը Հայաստան եւ Սբ. Էջմիածնի Կաթողիկէի հաստատումը: Այս տեսիլքը ունեցաւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եւ այն հաղորդեց բոլորիս, որպէսզի բոլորս զգանք Աստուածորդու ներկայութիւնը մեր հոգեւոր էութեան մէջ եւ կեանքն ապրինք Աստուծոյ կամքին համաձայն:

Սբ. Էջմիածինը, հետեւաբար, մեր ինքնութիւնը բացատրող խորհուրդն է: Ով իր կեանքը կ'ապրի Սբ. Էջմիածնով այդ անձը փաստօրէն իր կեանքով կը դառնայ մանրակերտը Սբ. Էջմիածնի:

Սբ. Էջմիածնի Տօնը կ'իմաստաւորուի, երբ մենք այսօր նոր Ուխտ մը կը կնքենք Աստուծոյ հետ, որպէսզի մեր կեանքն ապրինք քրիստոնէական հաւատքով, այն տեսիլքով, որ Քրիստոս մշտապէս այցի կու գայ մեզի եւ մեզի կը մնայ բանալ մեր ամբողջ էութիւնը՝ ընդունելու համար Անոր ներկայութիւնը, Անոր ամբողջ վարդապետութիւնը եւ դառնալու Աստուծոյ բնակութեան Տաճար:

Ո՞վ է քրիստոնէան. այն անձը, որ կ'ապրի Քրիստոսի նմանակցութեամբ: Ունի՞նք կարողութիւնը ապրելու Քրիստոսի նմանակցութեամբ, այո, որովհետեւ ստեղծուած ենք Աստուծոյ պատկերին համաձայն:

Ինչպիսի՞ միջոցներ պէտք է ձեռք առնենք, որպէսզի մօտ մնանք Աստուծոյ եւ հարազատօրէն պահենք մեր քրիստոնէական նկարագիրը: Գլխաւոր միջոցը՝

աղօթքի կեանքն է՝ Աստուծոյ խօսքին հաղորդութեամբ:
Եւ այնուհետեւ Աստուած Ինք կ'առաջնորդէ մեզ:

Սիրելի երիտասարդներ, յիշեցեք, որ զաւակներն
էք Սբ. Էջմիածնի եւ Սբ. Էջմիածնի տեսիլքով պիտի
ապրիք ձեր կեանքը: Այս է եղած կեանքի ճանապարհը
մեր մեծերուն եւ դուք ձեր քրիստոնէական կեանքով
պիտի դառնաք սուրբ ճանապարհի ձեր զաւակաց հա-
մար: Ձեր մարգական խաղերու մէջ մեծագոյն յաղթա-
նակը այն պահն է, երբ կը զգանք որ ձեզ առաջնորդողը
Աստուած Ինք է:

Մայիս, 2016

ՄԵՐ ԹԵՄԻ ՆՈՐ ՀԱՐՍԸ

Մեր ազգի կեանքին մէջ Եկեղեցւոյ օծումը Սրբալոյս Միւռնոնով եւ նուիրագործումը՝ Սբ. Խաչի զօրութեամբ չափազանց մեծ նշանակութիւն ունեցող երեւոյթ մըն է: Այսօր ի մի հաւաքուած հաւատացելոց ներկայութիւնը, քարեղէն Եկեղեցւոյ մէջ հոգեւոր ու ապրող Եկեղեցին է, ստեղծագործող Եկեղեցին է, որ Աստուծոյ սիրովն ու իմաստութեամբ կ'առաջնորդուի դէպի նոր կեանք:

Մեր Թեմի աշխարհագրական այս տարածքին մէջ Եկեղեցի մը ունենալու տեսիլքը դարձաւ շօշափելի եւ տեսանելի շատերու հաւատքին որպէս արտայայտութիւն: Մենք շատ լաւ կը յիշենք այն օրերը, երբ համեստ քայլերով ճանապարհ ելաւ այս համայնքը, ունեցաւ անշուշտ իր ընկրկումի պահերը, բայց իր հաւատացեալներուն շարքին եղան մասնաւորներ, ովքեր երեւի իրենց յոյսը չկորսնցուցին, ապրեցան մեր հայրերու քաջ հաւատքով, տոկացին ամէն տեսակի դժուարութեանց եւ հաւատացին, որ իրենց պատարագումը իզուր չէր եւ պիտի գար օրը, երբ պիտի ունենայինք մեր սեփական կառոյցը, որպէսզի կազմակերպուէր նաեւ համապատասխան կեանքը: Այստեղ ի մասնաւորի կ'ուզենք յիշել բոլորիս մեջէն հանգուցեալ Մարալը, որ սիրտ ու հոգի դրաւ, աշխատեցաւ օրն ի բուն, խոհանոց մաքրեց, գետին սրբեց լիակատար հոգով ու քաջ սրտով, որպէսզի ամրացնէր հիմքերը իր տեսիլքէն ծնած վաղուան Եկեղեցիին: Երկնային խաղաղութեան մէջ է անոր հոգին այժմ եւ սակայն կը հրճուի անոր հոգին ի տես կատարուածին, մանաւանդ երբ անոր յիշատակին կը ձօնուի Սբ. Սեղանի կառուցումը, որուն

բարերարութիւնը յանձն առին Մեծայարգ Տօթ. եւ Տիկին Վարուժան եւ Լենա Ալթըպարմաքեանները:

Եկեղեցւոյ օծման այս տօնական առիթով երախտագիտական զգացումներով կ'ուզենք մեր շնորհակալիքն յայտնել Տօթ. եւ Տիկին Սիմոն եւ Լենա Սիմոնեաններուն, որոնք իրենց հոգատար աջը անպակաս պահեցին Եկեղեցւոյ վրայ եւ երբեւէ չտկարացան, երբ Եկեղեցին գտնուեցաւ մարտահրաւերներու առջեւ: Անշուշտ անոնց կարող առաջնորդութիւնը ապահովեց նաեւ շատ շատերու զօրակցութիւնը, որուն վառ ապացոյցն այն է, որ այսօր Եկեղեցին ունի իր հաւատացելոց խումբը:

Օծման այս պատմական առիթով մեր երախտիքի խօսքը անխտիր բոլորին, հաւատացելոց, Եկեղեցւոյ Ծխական բոլոր Մարմիններուն, Ծխական Խորհուրդին, Տիկնանց, երգչախումբի, Պապայեան Դպրոցին, դպրաց եւ սարկաւազաց, ովքեր միասնաբար ձեռք-ձեռքի տուած յառաջ կը տանին Մբ. Եկեղեցւոյ առաքելութիւնը:

Այսօր երախտագիտութեան մասնայատուկ շնորհակալական խօսք ունինք բոլոր նուիրատուներուն, կնքահայրերուն եւ բարերարներուն, ովքեր յանձնառու դարձան նիւթական իրենց զօրակցութիւնը բերելու այս նուիրական առաքելութեան գործընթացքին մէջ: Մենք ի մասնաւորի երախտապարտ ենք այն զոյգին, որոնք նուիրատուութեան առիծի բաժինը յանձն առին եւ առանց իրենց մասնակցութեան դժուար թէ մենք այսօր մինչեւ այստեղ հասած ըլլայինք: Մեր խօսքը կը վերաբերի հայրենասէր այն զոյգին, ովքեր ոչ միայն այս Մբ. Եկեղեցւոյ համար, բայց ամէնուրեք, Հայաստան, Արցախ, Ռուսաստան եւ այլուր իրենց իշխանական նուէրներով տէր կը կանգնին մեր եկեղեցիներուն եւ ազգային հաստատութեանց: Նուիրեալ այդ զոյգը Տէր

եւ Տիկին Արա Աբրահամեանն է, որոնց կը ներկայացնենք մեր սէրն ու օրհնութիւնը եւ յանուն ձեր բոլորին որպէս մեր երախտագիտութեան նշան մեր Սուրբ Եկեղեցոյ համալիրն ու տարածքը կը կոչենք Աբրահամեան համալիր:

Մեր սիրոյ եւ օրհնութեան խօսքը կ'ուզենք յղել Եկեղեցոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժանապատիւ Տ. Աւետիս Քինյ. Աբովեանին ու երեցկին Արմինէին, որոնք այս Մբ. Եկեղեցին ու համալիրը դարձուցին մեղուանոց եւ անտարակոյս հետզհետէ աւելի ծաղկուն եւ եռուն պիտի դառնայ աղօթքի այս Տունը շնորհիւ իրենց ծառայութեան:

Տէր Հայրը Հայաստանը սիրող, Մբ. Էջմիածնի խորհրդով ապրող հոգեւորական է եւ իր երիտասարդ տարիքին օծուած է ազգային բարձր գիտակցութեամբ: Զօրավիգ մնանք Տէր Հօր եւ հաւատացէք իր տեսիլքներուն, որոնց մէջ ինք պահպանողական է, որպէս հաւատացողը հայ ընտանիքի սրբութեան, մանուկներուն եւ պատանիներու դաստիարակութեան, մաքուր նկարագրին եւ դեռ այն բոլորը, որոնցմով ալ պայմանաւորուած է մեր ազգի յաւերժականութիւնը:

Սիրելի հաւատացեալներ, Եկեղեցին՝ Աստուծոյ Տունն է, ուրկէ ներս երբ մուտք կը գործենք մեր կեանքը կը լեցնենք աղօթքով: Մեր Մբ. Եկեղեցին, դարերով եղած է կռուանը մեր ազգի զաւակաց ապահով կեանքին, արմատը մեր ինքնութեան եւ ճանապարհը գալիքին: Եկեղեցին, մեր կեանքն է, մեր ձայնն է յանուն ճշմարտութեան եւ արդարութեան, նոր ընտանիքներու ծնունդ տուող մայրն է, եւ երկինք եւ երկիրը կապող ոսկէ կամուրջը:

20 Օգոստոս, 2016

ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՏՕՆԸ ՀԱՅԵԼԻՆ Է ՄԵՐ ԿԵԱՆՔԻՆ

Աստուածամօր Վերափոխման Տօնը ընդհանրապես Եկեղեցւոյ եւ ի մասնաւորի Հայց. Առաքելական մեր Մայր Սուրբ Եկեղեցւոյ ամենէն սիրելի տօներէն մէկն է: Բոլորիս աղօթքները կը կեդրոնանան Աստուածամօր կերպարին վրայ, այն բարի ու խոնարհ անձը, որը Աստուծոյ կանչին պատասխանեց համարձակ ու քաջ եւ իր մէջ կրեց Աստուածորդին, որն աշխարհի կեանքին մէջ տարածեց լոյսը վերածննդեան եւ ոգին ապրուած Աւետարանի:

Եկեղեցւոյ շարականները Աստուածամօր նուիրուած այնպիսի տիտղոսներ ու սահմանումներ են ձօնած, որոնց ամբողջութիւնն ալ կը բացատրէ Էութեանը ճշմարիտ մօր, ընտրեալ մօր, որը ծնունդ պիտի տար Աստուածորդուն, եւ որը պիտի դառնար «աստուածային դուռը» մարդկանց մէջ:

Ինչպէ՞ս պիտի արժեւորենք Աստուածածնայ Տօնը: Պարզապէս զայն պիտի դարձնենք հայելին մեր կեանքին: Եւ ինչպէս ինք քաջ ու համարձակ պատասխանեց Աստուծոյ կանչին, դառնալու համար Աստուածամայրը, այնպէս ալ մայրերը պիտի դառնան քաջ ու համարձակ, հաւատքով ներշնչուած, որպէսզի իրենց մէջ կրող զաւակներու կեանքը առաջնորդեն դէպի Աստուած եւ Եկեղեցի: Բայց Աստուածամօր բարի կերպարը ներշնչումի աղբիւր է ոչ միայն մայրերուն համար, այլեւ անխտիր բոլորիս համար: Աստուածամօր Էութենէն բխած խոնարհութեան ոգին, սէրը, հնազանդութիւնը աստուածային պատուիրանաց հանդէպ բոլորիս համար հոգեւոր սնունդ է:

Այսօրուան աշխարհը բոլորովին տարբեր պիտի ըլլար, եթէ երբեք բոլորիս հայեացքը մշտապէս ուղղուած մնար դէպի Աստուածամայրը: Որովհետեւ ով իր հայեացքը կ'ուղղէ դէպի Աստուածամայրը, այդպիսին իր կեանքը կ'օրհնէ ու կը զօրացնէ երկնային իմաստութեամբ:

Այսօր տօնն է նաեւ բոլոր մայրերուն անխտիր, որովհետեւ ինչպէս Աստուածամայրը իր մէջ կրեց Յիսուս Մանուկը, արդարեւ բոլոր մայրերը իրենց մէջ կը կրեն Մանուկ Յիսուսի նման անմեղ երեխաներ, որոնք մեզի կը փոխանցեն աստուածային ճառագայթում, հրաւեր հոգեւոր վերածնունդի:

15 Օգոստոս, 2015

ԻՆՉ Է ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՊԱՍԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ

Սիրելի Եկեղեցասեր Երիտասարդներ:

Փառք կու տանք Ամենակալին Աստուծոյ, որ բոլորիս քայլերը անգամ մը եւս առաջնորդեց դէպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ուր ծնունդ առաւ Հայց. Եկեղեցին, եւ որուն հարազատ զաւակները ըլլալու պատիւն ունինք բոլորս: Տարակոյս չունինք, որ դուք բոլորդ այստեղ կը գտնուիք ձեր հաւատքի վկայութիւնը տալու եւ ի մասնաւորի ուխտ կատարելու, որպէսզի յանձնառու ըլլաք դառնալու Հայց. Եկեղեցւոյ խոնարհ սպասաւորները:

ՀԵՆՄ-ը արդէն նոր կառոյց չէ եւ նուիրականացած է այն օրուրէն, երբ 1700-ամեակի տօնակատարութիւնները սկիզբ առին մեր Ժողովուրդի կեանքին մէջ:

Անցնող աւելի քան տասը տարիներու ընթացքին այս շարժումը տարածուեցաւ Թեմական ու Հովուական գրեթէ բոլոր կառոյցներէն ներս եւ անկասկած դեռ երկար ճանապարհ ունինք նոյն այս կառոյցի հիմքերը ամրապնդելու եւ ուղեգծելու գործունէութեան նշանաբանն ու ոլորտները: Անհրաժեշտ չենք նկատեր երկար խօսք մը ներկայացնելու, այն քաջ համոզումով, որ դուք արդէն իսկ խմորուած էք Եկեղեցւոյ կեանքին մէջ ու բաւական կը համարենք մի քանի պարզ խորհրդածութիւններով ողջունել ձեզ եւ մաղթել, որ Պատգամաւորական այս 3-րդ Ժողովը ունենայ բարեյաջող եւ արդիւնաշատ ընթացք:

«Եկեղեցին մենք ենք»:

Թող այս ըլլայ մեր կեանքի ու առաքելութեան նշանաբանը. Եկեղեցւոյ առաքելութիւնը Աստուծոյ խօսքի քարոզչութիւնն է: Եւ ՀԵՆՄ-ը այն կառոյցն է, որ իր

շարքերուն մէջէն կը պատրաստէ վաղուան առաջնորդները: Հետեւաբար, անհրաժեշտ է, որ եւ հոգեւոր եւ վարչական իմաստով կազմակերպուինք, որպէսզի մեր Սուրբ Եկեղեցին դառնայ կեանք հաղորդող ներկայութիւնը: Ժողովական մեր կեանքը արգասաւորելու համար ունինք օրակարգ, որուն համաձայն պիտի ընթանանք: Օրակարգի նիւթերուն մէջ ունինք ՀԵՇՄ-ի ուղեցոյց - նախագիծը, միջ-թեմական փոխյարաբերութիւնները, ՀԵՇՄ-ի վարչական եւ կազմակերպչական հարցերը, հոգեւոր առաքելութիւնը եւ տակաւին կը ներառենք նաեւ պատգամաւորներու կողմէ ներկայացուած կարեւոր հարցեր:

Տարիներ առաջ Հայ Եկեղեցասէր Երիտասարդացին ուղղուած մեր պատգամներէն մէկուն մէջ մեր մտածումները զարգացուցինք հաւատքի կարեւորութեանը մասին մեր աստուածատուր կեանքին մէջ եւ արտասանեցինք հետեւեալ հաստատումը.

«Զի հաւատքն ձեր եւ յոյս իցեն յԱստուած»: (Ա. Պետրոսի 1:21):

Միբելի Եկեղեցասէր Երիտասարդ:

Ձեր հաւատքն ու յոյսը պէտք է հաստատէք Աստուծոյ վրայ: Այս է պատգամը Հայաստանեայց Առաքելական մեր Մբ. Եկեղեցւոյ՝ ուղղուած Հայ Երիտասարդին: Երբ մեր հաւատքն ու յոյսը կը կապենք Աստուծոյ հետ, այն ժամանակ կը ձգտինք ապրելու կատարեալ կեանք մը, կեանք մը, որ կը լեցուի ու կը զարգանայ Յիսուսի Աւետարանով, Անոր քարոզած սիրոյ վարդապետութեամբ, Անոր կեանքի օրինակով, վերջապէս Անոր ամէն մէկ խօսքը մեր կեանքը կ'առաջնորդէ դէպի իմաստութիւն:

Ձեր հաւատքն ու յոյսը պէտք է հաստատէք Աստուծոյ վրայ: Այս պատգամին պէտք է հետեւի ամէն

հայ երիտասարդ, բայց մանաւանդ անոնք, որոնք Հայ Եկեղեցասէր Երիտասարդացի անդամ են, որովհետեւ ձեր պարտականութիւնն է դառնալ բարի օրինակը ամբողջ երիտասարդութեան: Ձեր ունեցած սէրն ու նուիրումը Հայաստանեայց Եկեղեցւոյ նկատմամբ կ'ուրախացնէ մեր հոգին: Կ'ուզենք տեսնել, սակայն, որ դուք Հայ Եկեղեցւոյ դերի մասին կը պատմէք ամէն մէկ երիտասարդի, կ'ուզենք տեսնել, որ դուք Հայ Եկեղեցիէն հեռու մնացած ամէն մէկ հայ երիտասարդի կը բացատրէք թէ ինչո՞ւ կը ծառայէք Հայ Եկեղեցիին:

Սիրելի եւ յարգելի Եկեղեցասէր Երիտասարդներ, դուք մեր Եկեղեցւոյ վաղուան յոյսն էք, բայց որպէսզի օր մը ձեր զաւակները ունենան աղօթքի հաստատուն տուն մը, ապա ձեզի է տրուած պաշտօնը դառնալու վաղուան մեր Եկեղեցւոյ ճարտարապետը:

Մեր պատգամին մէջ մենք մեր մտածումները զարգացուցինք նաեւ ծառայութեամբ ապրուած կեանքի խորհուրդին վրայ:

Դուք կանչուած էք դառնալու Հայ Եկեղեցւոյ տանտէրը: Բայց պէտք է աշխատանքով շահիք ձեր տանտիրոջ իրաւունքը: Այսինքն՝ եթէ կ'ուզէք փրկել Հայ Եկեղեցին, ապա պէտք է գիտնաք զոհուիլ ի սէր Հայ Եկեղեցւոյ: Գիտէք թէ ընտանիքի հայրը կը յոգնի, կը չարչարուի, որպէսզի պահէ իր ընտանիքը, հաց բերէ իր զաւակներուն եւ ուսում տայ անոնց: Դուք ալ պարտականութիւնը ունիք ձեր մէջ ստեղծելու գիտակցութիւն՝ դէպի Հայ Եկեղեցին: Ձեզմէ ամէն մէկը պէտք է պողպատի նման ամուր ըլլայ: Մեր այս խօսքերը խնդրանք են ուղղուած ձեզի, բայց ոչ թէ աղքատի խնդրանք, այլ պահանջուած խնդրանք: Որովհետեւ դուք, որպէս ուսեալ ու զարգացած երիտասարդներ, կը հասկնաք թէ մենք ինչ ըսել կ'ուզենք, երբ ձեզի համար

կ'ըսենք. «Հայ երիտասարդը՝ վաղուան Եկեղեցին է»: Կազմակերպեցեք ձեր կեանքը ամենալավ ձևով: Ձեր ուսումնական կեանքը լեցուցեք յաջողություններով: Ձեզմե անոնք, որոնք աշխատանքի մեջ են արդեն, թող տիրեն շուկային իրենց իմաստութեամբ: Դուրս մի մնաք աշխարհի տնտեսական կեանքի մրցակցութենէն: Անտեղեակ մի մնաք ձեր միջավայրի քաղաքական կեանքէն ու, մանաւանդ, դարձեք մասնակից: Բայց չմոռնաք որ ձեր, մեր, բոլորի առօրեայ կեանքին մեջ հիմնաքարը՝ Եկեղեցին է: Եկեղեցին մեր դարաւոր դաստիարակ Մայրն է եղած, ու պիտի մնայ յաւիտենական մայրը:

Սիրելի Եկեղեցասէր Երիտասարդներ:

Բոլորս ալ քաջ կը գիտակցինք, որ 2015 տարին կը նշանաւորուի Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի ոգոկոչումովը, երբ ամիսներ առաջ, այս սուրբ տեղին մեջ մեր նահատակները սրբադասուեցան: Ի՞նչ է պատգամը 100-ամեակի: Շատ բան կարելի է ըսել, բայց բաւական կը համարենք Ձեզի փոխանցել հետեւեալ պատգամը.

Մեր պատգամն է, որ Հայ Երիտասարդը ամէն բանէ առաջ իր մեջ զարգացնէ կարգապահութեան օրէնքը:

ա. Կարգապահութիւնը կարելոր է եւ ընկերային կեանքի մեջ, եւ ընտանիքէն ներս, եւ Եկեղեցիէն ներս, եւ մշակոյթի տունէն ներս, եւ ամէն տեղ: Ան որ կարգապահ չէ, կը նշանակէ կը քանդէ իր տունը, սէր չունի իր տան հանդէպ: Մեր այսօրուան դժբախտութիւններու գլխաւոր պատճառը կարգապահութեան պակասն է:

բ. Երկրորդ օրէնքը պատասխանատւութիւնն է: Երբ ռեւէ մէկը յանձն կ'առնէ պաշտօն մը կամ անոր կը յանձնուի պաշտօն մը, պէտք է զայն կատարէ ամբողջութեամբ, բայց մանաւանդ՝ սիրով: Պաշտօնները

մեզի փառք չեն տար: Պաշտօնները մեզ կը հրաւիրեն ծառայութեան:

գ. Երրորդ օրէնքը որ անհրաժեշտ է հայուն համար՝ կեանքի մէջ սկզբունք մը ունենալն է: Յարատեւօրէն հայ մնալու համար մենք պէտք է հասկնանք որ բնաւ երբեք պէտք չէ շեղիլ ճշմարիտ հայէ մը պահանջուած սկզբունքէն: Կառչիլ Մայր Հայրենիքին եւ Սբ. Էջմիածնին: Որովհետեւ առանց Հայաստանի եւ Սբ. Էջմիածնի՝ Սփիւռքը կը կորսնցնէ իր գոյութեան իմաստը: Անցեալին, գաղութին ուղղուած իմ նամակներէն մէկուն մէջ ես գրած եմ հետեւեալը. Ի՞նչ կը նշանակէ Հայ Եկեղեցի առանց Սբ. Էջմիածնի. անհեթեթութիւն: Ծառ՝ առանց արմատի: Նաւ՝ առանց դէկի: Մարդ՝ առանց Հայրենիքի: Իսկ Հայ Եկեղեցոյ համար Սբ. Էջմիածնի հիմքը Հայաստանն է: Հայաստանը հիմքն է նաեւ Սփիւռքի հայութեան: Առանց Հայաստանի եւ Սբ. Էջմիածնի՝ Սփիւռքը կը կորսնցնէ իր գոյութեան իմաստը:

Ձեզի կը մաղթենք աստուածային օրհնութիւն եւ իմաստութիւն, որպէսզի ձեր ուխտի այցը Մայր Հայրենիք եւ Սբ. Էջմիածին դարձնէք հոգեւոր վերածնունդի ուխտագնացութեան եւ երբ կը վերադառնաք ձեր Թեմերը ձեզի հետ տանիք լոյս հաւատքը մեր հայրերուն, եւ ամենէն կարեւորը ձեր կեանքով դառնաք օրհնութիւնը բոլորիս համար որպէս դեսպաններ Հայաստանեայց Եկեղեցոյ եւ առաքեալները Քրիստոսի:

Ամփոփելով մեր խօսքը Ձեր ուշադրութիւնը կ'ուզենք բեւեռել հետեւեալ մտածումներուն վրայ.

«Ինչո՞ւ Երիտասարդացի կազմակերպութիւնը Եկեղեցոյ կեանքին մէջ»

ա. Եթէ եկեղեցին աստուածահաստատ է եւ հետաւուտ է մշակել մարդու հոգեւոր կեանքը, ապա անհրաժեշտ է մշտապէս պատրաստել երիտասարդու-

թինը յանձնառու դառնալու կատարելը Եկեղեցւոյ առաքելութիւնը:

բ. Եկեղեցւոյ մէջ ապահովագրուած է երիտասարդին կեանքը հեռու պահելու փորձութիւններէն եւ առաջնորդելու լոյսի ճանապարհէն, Աստուծոյ գծած ճանապարհէն:

գ. Եկեղեցին է այն գերագոյն վայրը, ուր մարդուն կեանքը կը կապուի Աստուծոյ հետ.

դ. Եկեղեցւոյ մէջ ծնունդ առած երիտասարդութիւնը պէտք է կազմակերպէ ինքզինք հոգեւորապէս եւ վարչականօրէն, որպէսզի արդիւնատրէ իր առաքելութիւնը բոլոր մակարդակներու վրայ. սերունդ պատրաստելու գործին մէջ, ծրագրեր կազմակերպելու իմաստով եւ ամենէն կարեւորը աղօթքի կեանքին մէջ:

ե. Հայ Երիտասարդացի գործնական պարտականութիւնը պիտի ըլլայ ապահովելու իր կապը Եկեղեցիին հետ.

- Աղօթքի կեանքով.
- Եկեղեցի յաճախելով.
- Հոգեւոր սննդառութեամբ.
- Ներկեղեցական կեանքի մէջ դերակատարութեամբ.

- Մեր հայրերու աւանդներու հանդէպ խոնարհութեամբ:

«Եկեղեցին մենք ենք», ահաւասիկ այս պիտի ըլլայ նշանաբանը մեր կեանքին, որպէսզի արժեւորենք մեր կեանքը որպէս ընծայում մեր նահատակաց յիշատակին եւ կեանք որ պիտի ձօնենք Աստուծոյ փառքին համար:

1-5 Յուլիս, 2015

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին

ՀԵՀԵՄ-Ը՝ ԱՌԱՆՑՔՆ Է ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ՄԷՋ

1700-ամեակի տօնախմբություններու ծիրին մէջ նախաձեռնուած բազում ծրագրերու շարքին ՀԵՀԵՄ-ը կը մնայ ամենաշօշափելի առաքելութիւնը, որը կը միտի Հայց. Եկեղեցոյ կեանքը բարձրացնել նոր աստիճանի մը վրայ այս օրերու աշխարհի մարտահրաւերներուն դիմաց: Առհասարակ սովոր ենք կրկնել ժողովրդական այս խօսքը, որ երիտասարդութիւնը ապագան է, առանց սակայն անդրադառնալու այն ճշմարտութեան, որ երիտասարդութիւնը ներկայութիւն է մեր կեանքին մէջ: Ներկայ են անոնք մեր կեանքին մէջ եւ սպասման մէջ են կանչուելու հոգեւոր ուսումնառութեան եւ ծառայութեան:

Հայց. Առաքելական Եկեղեցոյ կեանքին մէջ ՀԵՀԵՄ-ը այն հաստատութիւնն է, որուն շարքերէնս պիտի հասնին եւ հոգեւորականներ եւ աշխարհի դասը ներկայացնող հոգեւոր տեսիլքի տէր առաջնորդող դէմքեր:

2001 թուականէն մինչեւ օրս, ՀԵՀԵՄ-ը ունեցաւ հանգրուաններով առաջնորդուած կեանք մը ամենայն առումով: Ներկայիս ՀԵՀԵՄ-ը կը ներկայացնէ նուիրապետական հետեւեալ կառոյցը.

ՀԵՀԵՄ – Պատգամաւորական Ժողովը՝ ի գլուխ ունենալով Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Պատգամաւորական Ժողովին ընտրուած Գործադիր Մարմինն է՝ Կեդրոնական Խորհուրդը:

ՀԵՀԵՄ – Թեմական կառոյցը՝ Թեմական Պատգամաւորական Ժողովը եւ Կեդրոնական Խորհուրդը:

Եւ վերջապէս Ծխական Ընդհանուր անդամական Ժողովը եւ նոյնէն ընտրուած տեղական մարմինը:

Վերոյիշեալ Մարմիններու հետ առնթեր պաշտօնի են կոչուած հետեւեալ անձինք եւ խորհրդակցական մարմինները.

ա. Տարածաշրջաններու հոգեւոր տեսուչներ.

բ. Տարածաշրջաններու խորհրդակցական մարմիններ.

Վերոյիշեալ կառոյցի գլխաւոր անձը Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէ նշանակուած եպիսկոպոսն է, որուն ենթակայութեան տակ կը գործէ նաեւ ՀԵՀԵՄ-ի գրասենեակը, իր գործադիր տնօրէնով:

Վերոյիշեալ կառոյցը արդէն իսկ կը գործէ եւ հաստատութեան գլխաւոր նպատակն է սերունդ պատրաստելու նուիրական առաքելութիւնը:

19 Դեկտեմբեր, 2015

ԴԱՌՆԱՆՔ ՊԱՏԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ

«...Առեք զվահանն հաւատոց, որով կարող լինիջիք
զամենայն նետս մուխս չարին շիջուցանել»:

(Գաղ. 3:15)

Այս օրերուն մեր ազգի կեանքին մէջ հոգեւոր արթնութեան նոր կեանքի շունչը կը տարածուի: Եւ ինչքան կը կարդանք առաքելալի այս պատգամը՝ այնքան կ'ուզենք արհամարհել չարին խորհուրդները՝ տկարութիւնն ու հոգեւոր բոյիկութիւնը, անտարբերութիւն՝ Աստուծոյ ու աստուածայինին հանդէպ: Ու պատգամ կը ստանանք հաւատոյ վահանը առնել մեր վրայ, որպէսզի մնանք արթուն պահակները եւ աստուածատուր մեր կեանքին վրայ, եւ մեր Սբ. Եկեղեցւոյ եւ ի մասնաւորի մեր նախնեաց արեամբ սրբուած Հայրենիքին:

Ինչպիսի նախախնամութիւն, որ օրուան աւետարանական դասերը այնքան յստակութեամբ մեզի կը պատգամեն Աստուծոյ խօսքին յաւիտենականութեան վրայ, հաւատքի ուժականութեան վրայ, գերագոյն ճշմարտութիւններ, որոնցով եւ պարտ է մարդը իր կեանքը սպառազինել:

Մարդը՝ որպէս կատարելատիպը Աստուծոյ ստեղծագործութեան, իր կեանքը պիտի ապրի հաւատքով եւ Աստուծոյ խօսքը պիտի դարձնէ իր կեանքի ճանապարհը ուղեգծող լոյսը: Այդ գիտակցութեամբ են ապրած կեանքը մեր նախնիք եւ իրենց գիտակից կեանքով կերտած են Հայրենիք ու Եկեղեցի, որոնց վայելքը մերն է այսօր:

Այս առաւօտ, սրբազան Պատարագի ընթացքին, ջերմեռանդ աղօթք կը բարձրացնենք առ Աստուած

մեր Մայր Երկրի, Հայաստանի անկախութեան 25-ամեակի տօնական առիթով: Մեզի համար մեծագոյն ուրախութիւն է մեզի հետ որպէս աղօթակից ունենալ ՀԲԸ Միութեան Շրջանակային Վարչութիւնը եւ ի մասնաւորի սկաւտներու ներկայութիւնը: Բայց անսահման է մեր ուրախութիւնը ողջունել ներկայութիւնը Ուաշինգթօնի մօտ Հայաստանի Հանրապետութեան Մեծարգոյ Դեսպան Գրիգոր Յովհաննիսեան, որուն անձը այնքան սիրելի ու յարգելի է բոլորիս, այն փաստի համար, որ ինք ամերիկահայերուն կեանքին մէջ դարձաւ օրհնութիւն ու հայրենական ոգին հաղորդող ուղիղ եւ արդար օրինակելի կերպարը: Լոս Անճելըսի մէջ իր Գլխաւոր Հիւպատոսի պաշտօնավարութեան տարիներուն ան դարձաւ կառուցող եւ կազմակերպող, ոգեշնչողը իր խօսքերով եւ Հայրենիքի խորհրդանիշը: Այսօր, Ամերիկայի մայրաքաղաքի մէջ ան իր առաքելութիւնը կը շարունակէ առաւել աշխոյժ եւ բեղմնաւոր ծառայութեամբ: Ձեր ներկայութեամբ անկախութեան 25-ամեակը կը դառնայ վաւերական:

Այսօր, այս Սուրբ Պատարագին աղօթք կը բարձրացնենք առ Աստուած նաեւ ՀԲԸ Միութեան 110-ամեակի առիթով: ՀԲԸ Միութեան ներկայութիւնը կը խանդավառէ մեզ այն իմաստով, որ անկախութեան հռչակման առաջին իսկ օրերէն Բարեգործականը եղաւ առաջինն ու գլխաւորը որ իր զօրակցութիւնը շօշափելիօրէն բերաւ ի խնդիր մեր Սուրբ Երկրի պայծառացման: Օրհնեալ այս Կազմակերպութեան 110-ամեակի տօնական այս օրերուն մեր աղօթքն է առ բարին Աստուած, որ Բարեգործականի առաքելութիւնը առաւել զօրանայ վասն մեր երկրի անսասանութեան եւ ի մասնաւորի վասն պայծառութեան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի:

Միրելի բարեպաշտ հայորդիք, մեր կեանքի գերագոյն նպատակը պիտի դարձնենք Հայաստանը: Աշխարհն այսօր կ'ալեկոծի անթիւ խնդիրներով եւ մեր երկիրը անտարակոյս կ'ազդուի տարածաշրջանէն ներս ստեղծուած անապահով քաղաքական իրավիճակներով: Չմոռնանք, սակայն, որ մեզի հասած որպէս ժառանգ վստահուած Հայաստանը բազում փորձութիւններու գնով է ձեռք բերուած: Հայ մարդը պարտ է նուիրուիլ Հայրենիքին:

Անշուշտ մեր երկիրը ունի իրեն ուրոյն փորձութիւններն ու դժուարութիւնները, բայց այդ բոլորը պիտի յաղթենք հաւատքի կեանքով, Աստուծոյ սիրով ու իմաստութեամբը, կարգապահ կեանքով եւ հոգեւոր եւ բարոյական կեանքի ընթացք մը որդեգրելով՝ պիտի պահենք ու պահպանենք մեր Մայր Երկիրը՝ Հայաստանը:

«Հայրենիքը մեր արեան մէջ նոր աւիւն է:
Հայրենիքը մեր կեանքի մէջ ճանապարհ
ու մղում է:

Հայրենիքը մեր հոգիին անցած մեր հայրերուն
հաւատքի ամրոցն է»:

Արդարեւ, Հայաստանի Անկախութեան 25րդ տարեդարձի տօնակատարութիւնը հրաշալի պարգեւ մըն է Աստուծոյ կողմէ մեզի շնորհուած, որպէսզի ազատ ու անկախ Հայրենիքը դառնայ այն հողը, որուն վրայ պիտի կարողանանք ապրիլ ստեղծագործ կեանքով, մեր յոյսերն ու երազները կեանքի կոչելով եւ ամէն բարի միջոց ձեռք բերելով Հայրենիքի վերակերտմանն ի խնդիր:

Հայ Ժողովուրդի ու Մայր Հայաստանի պատմութեան մէջ անկախութիւնը այն պահն է, երբ մեր բոլորի վրայ բարոյական պարտաւորութիւն կը դրուի պահ-

պանելու հոգեւոր ժառանգութիւնը՝ մեր պապերէն մեզի աւանդուած: Մեր պարտքը պէտք է ըլլայ ամբողջութեամբ նուիրուիլ Մայր Հայրենիքին, Սուրբ Էջմիածնին, հայ ընտանիքի սրբութեան, հայոց պատմութեան ու ազգային աւանդութեանց:

Հայ մարդուն համար Հայաստանը իր կեանքի առաքելութիւնն ու նպատակն է: Ժամանակներուն մեջէն մեզի հասած փորձութիւններով պիտի չպայմանաւորենք մեր նուիրումը Հայրենիքի հանդէպ, որովհետեւ Հայաստանը յաւիտենական ճշմարտութիւն մըն է եւ այդ գիտակցութեամբ պիտի ունենանք կարողութիւնը հասկնալու, որ Հայաստանը պիտի դարձնենք ժառանգը գալիք սերունդներուն:

Մեր առջեւ դրուած է լուրջ պատասխանատուութիւն, որպէսզի գործնապէս պատասխանենք 25-ամեակի տօնակատարութեան: Նորահաս սերունդներու հոգիին ու մտքին մէջ արթնցնելով հայրենական սէրը, քրիստոնէական հաւատքի տեսիլքը եւ գիտակցութիւնը մշակոյթի ու արուեստի հանդէպ, որովհետեւ այս բոլորը այն հիմնական տարրերն են, որոնք հայեցի դիմագիծ կը ներշնչեն բոլորիս եւ ի մասնաւորի պատկանելութեամբ մենք փաստը կու տանք հայ ազգի վերածննդեան: Ապրինք այնպէս, որ դառնանք պատկերը Հայաստանի:

25 Սեպտեմբեր, 2016

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹԻՒՆ

Առաջին հերթին կ'ուզենք պարզ բառերով ու ամփոփ բացատրությամբ խօսիլ այն մասին, որ մարդը իր ինքնությունը բնորոշող երկու գլխաւոր յատկանիշներ ունի. մէկը իր անունն է եւ միւսը՝ իր պատկանելիությունը: Եւ նոյն մարդը չի կրնար ներկայութիւն դառնալ հասարակական կեանքի մէջ առանց այս երկու որոշիչ յատկանիշներուն:

Մեր խօսքը կ'ուզենք զարգացնել հիմնականօրէն քրիստոնէական ինքնութեան վրայ, որը կը թելադրէ մեր կրօնական պատկանելիութիւնը: Ի՞նչ է քրիստոնէական ինքնութիւնը: Անցնող երկու հազարամեակի ընթացքին Եկեղեցւոյ Հայրեր անթիւ հրատարակութիւններով բացատրած են այդ: Բայց չէ՞ որ կարելի է շատ պարզօրէն ըսել, որ քրիստոնէական ինքնութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ Քրիստոսի կերպարը՝ Անոր կեանքի օրինակը, որուն նմանակցութեամբ կը հրաւիրուինք մեր հոգեւոր կեանքը մշակելու աղօթքով ու Աստուածաշունչի սերտողութեամբ եւ ի մասնաւորի հետեւելով Եկեղեցւոյ Հայրերու կողմէ ասանդուած եօթը խորհուրդներուն, որոնք են՝ Ապաշխարութիւն, Մկրտութիւն, Դրոշմ, Հաղորդութիւն, Ձեռնադրութիւն, Պսակ եւ Այցելութիւն հիւանդաց կամ Վերջին Օծում:

Նախքան մեր անդրադարձը վերոյիշեալ եօթը խորհուրդներուն, առանձնաբար, որոնք եւ կ'ամրագրեն մեր քրիստոնէական ինքնութիւնը կամ նոյնիսկ նկարագիրը, անհրաժեշտ է բացատրել նաեւ նպատակը խորհուրդներուն, անոնց կատարած դերն ու պարտականութիւնը: Խորհուրդները մարդը կ'առաջնորդեն այն ուղիով, որ վերագտնենք մեր մէջ Աստուծոյ պատկերը եւ նպա-

տակը, որը շատ յաճախ կը կորսնցնենք տարբեր պատ-
ճառներով, մեղքի հետեւանքով, անտարբերութեան
կեցուածքով, հաւատքի ու աղօթքի բացակայութեան
պարագային: Խորհուրդներուն հաղորդակցութեամբ
մարդը իր քայլերը կ'ուղղէ դէպի Աստուած եւ աւելին՝
նոյն մարդը իր մեջէն կ'արտացոլէ Աստուծոյ սէրն ու
իմաստութիւնը: Այստեղ կ'ուզենք ընդգծել նաեւ մէկ
կարեւոր պարագայ եւս, որ քրիստոնէական ինքնու-
թիւնը իր մէջ ամրագրող մարդը, որպէս առանձնա-
շնորհեալ, որովհետեւ հաւատքը դարձուցած է ենթա-
հողը իր կեանքին, կը դառնայ կամուրջներ հաստա-
տող հոգեւոր ներկայութիւն իր նմաններու կեանքին
մէջ: Ճիշդ այստեղ է, որ ի յայտ կու գայ այն կարեւոր
յատկանիշը քրիստոնէայի կեանքին մէջ, որ մարդը իր
կեանքով կը դառնայ գործակից Աստուծոյ:

*

* *

Հայց. Առաքելական մեր Սբ. Եկեղեցւոյ եօթը խոր-
հուրդները մեր քրիստոնէական նկարագրին սնունդ
ներարկող կամ հաղորդող հոգեւոր ուժականութիւն
մը ունին իրենց մէջ: Բոլորն ալ իրենց արմատը կը
գտնեն Քրիստոսի Աւետարանին մէջ, եւ Իր իսկ երկ-
րաւոր կեանքով նուիրագործուած: Ուրեմն, ով կը հե-
տեւի եօթը խորհուրդներուն, այդպիսին իր կեանքը կը
բարձրացնէ առ Աստուած եւ իր մէջ կը մշակէ քրիս-
տոնէական նկարագիր: Ստորեւ շատ ամփոփ կերպով
կը ներկայացնենք ներածականներ Հայց. Եկեղեցւոյ
խորհուրդներուն մասին: Այս ներածականները պատ-
րաստուած էին օրին Արեւելեան Թեմի կողմէ Քրիս-
տոնէական Դաստիարակչութեան նպատակով: Բնա-
կան է, իւրաքանչիւրի մասին կարելի է կատարել ըն-

դարձակ բացատրականներ, բայց կը թողունք, որ ընթերցողը ինք կատարէ այդ պրպտումը:

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ

Այս Խորհուրդին պատմութիւնը երկար է եւ բարդ: Անշուշտ ան կը սկսի Յիսուս Քրիստոսով: Քրիստոս սուրբ աշակերտներուն իշխանութիւն տուաւ մեղքեր կապելու եւ քակելու: Մեղքը աւանդաբար սահմանուած է իբրեւ անհնազանդութիւն Աստուծոյ դէմ, կամ ուծացում որ մեզ ատել կու տայ եւ կը հեռացնէ ուրիշներէն:

Մենք կը խոստովանինք մեր մեղքերը: Աստուած մեզ ներելու միշտ պատրաստ է, ինչպէս ըրաւ անառակ որդիին հայրը: Քրիստոնէական խոստովանութիւնը, եւ մինչեւ իսկ խոստովանութիւնը Հին Կտակարանին մէջ, միշտ հրապարակային խոստովանութիւն էր: Խոստովանանքը հրապարակային ընելէն տարբեր որեւէ տրամադրութիւն չկար: Տարիներու ընթացքին սակայն «անձնական» խոստովանութեան փոխուեցաւ, ուր քրիստոնէաներ իրենց մեղքերը քահանայի մը կը յայտնէին: Հայաստանեայց Եկեղեցին կ'ընդունի թէ անձնական եւ թէ խմբակային հրապարակային խոստովանութիւնը: Ընդհանրացած ձեւն է խմբակայինը: Հաղորդութեան պատրաստ եղողները առաջին քայլը կ'առնեն խմբովին խոստովանելով իրենց մեղքերը («Մեղայ Աստուծոյ», մեղանչեցի Աստուծոյ դէմ):

Խոստովանութեան ներկայ ձեւը կրճատումն է Սուրբ Եփրեմ Ասորիին տասը խոստովանողական յայտարարութիւններուն՝ զորս Սր. Գրիգոր Լուսաւորիչ ներածեց եւ Հայերէնի թարգմանուեցաւ Սուրբ Սահակի եւ Սր. Մեսրոպի ձեռքով:

Հոգեւոր բժշկութեան այս խորհուրդին միջոցաւ է որ մարդկութիւնը վերահաստատուեցաւ եւ սակայն ներողութիւնը կատարեալ եւ հարազատ կրնայ ըլլալ եթէ մենք ներող ըլլանք:

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Քրիստոսի կամքն ու հրամանն էր որ մենք մկրտուինք հոգով ու ջուրով, արժանանալու համար ներկայութեան եւ Իր թագաւորութեան: Յիսուս Ինք մկրտուեցաւ Յորդանան գետին մէջ Յովհաննէս Մկրտիչին միջոցով, եւ Իր յարութենէն ետք պաշտօն տուաւ առաքելներուն որ երթան եւ առաքելագործեն ազգերու մէջ, մկրտելով զանոնք Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով: Քրիստոնէական նախնական շրջանին մկրտութիւնը կը կատարուէր գետերու, լճակներու մէջ: Տրդատ թագաւորը մկրտուեցաւ Եփրատ գետին մէջ Սբ. Գրիգոր Լուսաւորչի ձեռքով:

Արարողութեան, ինչպէս նաեւ ջուրին յարգանքը, որ ժամանակի ընթացքին յատկապէս նուիրագործուեցաւ, մասնաւոր մկրտութեան աւագաններու գործածութեան յանգեցաւ: Աւագանը քրիստոնէայ եկեղեցիներուն մէկ կարեւոր մասնիկը դարձաւ, եւ ըստ հին սովորութեան միակտոր քարի մը մէջ փորուած կ'ըլլային:

Նախնական եկեղեցիին մէջ խորհուրդները՝ Մկրտութիւն, Դրոշմ կամ կնունք եւ Հաղորդութիւն միասին կը կատարուէին Եպիսկոպոսի մը ձեռքով (Եպիսկոպոսներ իւղօրինութեան բացարձակ իրաւունք ունէին) եւ որ նորահաւատներու կը տրուէին սերտողութեան եւ աղօթքի պահէ մը վերջ: Զատիկի Կիրակին նախընտրուած օրն էր զանգուածային մկրտութիւններու:

Հայաստանեայց Եկեղեցին պահած է երեք խորհուրդները՝ մկրտութեան հետ կատարելու ւսանդութիւնը:

Ծնողքը, քահանան եւ մասնաւորաբար կնքահայրը երախան կը ներկայացնեն մկրտութեան համար: Կնքահայր մը կրնայ մկրտութիւն փափաքող չափահաս մը ներկայացնել: Մկրտութեան հետ առնչութիւն ունեցող կարգ մը նշանակներ են «նարօտը» որ կը կախեն խաչի մը հետ, Սատանայէն հրաժարումը, ջուրին մէջ երեք անգամ սուգուիլը, մանաւանդ ջուրը՝ կեանքի աղբիւրը: Երբ մանուկը ջուրին մէջ կը սուգուի՝ Քրիստոսի մկրտութեան մասնակից կ'ըլլայ: Երբ ջուրէն դուրս հանուի՝ մասնակից կ'ըլլայ Քրիստոսի Յարութեան:

ԴՐՈՇՄ ԵՒ ԿՆՈՒՆՔ

Նման ջուրին՝ իւրը նաեւ կարելոր է իբրեւ կրօնական խորհրդանշան մը բուժումի, լոյսի եւ խաղաղութեան: Նոյն աղանին ձիթենիի ճիւղ մը բերաւ, որ կը ծանուցեր Աստուծոյ ներողութիւնը, հաշտութիւնը մարդկութեան հետ մեծ ջրհեղեղէն ետք: Խաղաղութիւնը եւ իւղով բժշկութիւնը կը ներկայացուի միւռնի միջոցաւ, երբ ջուրը կը հոսի աղանակերպ ամանէ մը, քահանան կ'երգէ «Առաքելոյ աղանոյ» (աղանին որ ուղարկուեցաւ...): Այս կը յիշեցնէ Սուրբ Հոգիին Քրիստոսի վրայ իջնելը: Յետոյ քահանան Սուրբ Միւռն կը սրսկէ իր ափին մէջ օրհնելու համար մարմինին անդամները, խնդրելով որ Սուրբ Հոգին կնքէ նոր մկրտուածը հաւատքով եւ պահէ պաշտպանէ անոր տեսողութիւնը, խորհուրդները, խօսքը, գործերը, եւ զայն պահէ աշխարհի չար ազդեցութիւններէ:

ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

Կիրակին Աստուծոյ օրն է: Կիրակի բառը Յունարէնէ առնուած է եւ կը նշանակէ Տիրոջ օր: Զատիկ մըն է, որ կը յիշատակէ Յիսուսի մեղքի եւ մահուան վրայ տարած յաղթանակը: Յիսուսի պատգամը Հայաստան բերող Թադէոս եւ Բարթողիմէոս առաքեալներուն շրջանին Սբ. Հաղորդութեան ճաշը շատ պարզ էր: Հացի եւ գինիի մասնակցութեամբ, ուր Քրիստոս ներկայ էր: Տասներորդ դարու վերջաւորութեան Հայաստանեայց Եկեղեցիին Պատարագի արարողութիւնը վերջնական ձեւ ստացաւ:

Արարողութեան լեզուն գրաբար է պատահական Յունարէն եւ Եբրայեցերէն բառերով, որոնք պահուած են նախկին պատարագներէն: Նախ քան Սբ. Մեսրոպի ձեռքով Հայերէն այբուբենի ստեղծումը, արարողութիւնները կը կատարուէին Յունարէն եւ Ասորերէն լեզուներով:

Սուրբ Հաղորդութեան նպատակն ու շարժառիթն է որ Քրիստոնէաներ ի մի գալով հոջակեն Քրիստոսի աշխարհի մէջ ներկայութեան խորհուրդը: Սբ. Պատարագի արարողութիւնը կեդրոնական գործոնն է քրիստոնէայ համայնքին եւ մեզ իրարու կը կապէ իբրեւ հետեւորդները Քրիստոսի: Պատարագը նաեւ մեր շնորհակալութեան արտայայտութիւնն է Աստուծոյ ուղղուած, Անոր շնորհած աշխարհային, ինչպէս նաեւ յաւիտենական կեանքի պարգեւներուն համար, որ մերն են Քրիստոսով:

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Եկեղեցական պաշտօնէութեան երեք աստիճաններն են սարկաւազ, քահանայ եւ եպիսկոպոս:

Սարկաւագ – Սարկաւագներու բարձրացումը կը տեսնուի Գործք Առաքելոցի վեցերորդ գլուխին մէջ: Առաքեալները աղօթեցին եւ իրենց ձեռքերը դրին անոնց վրայ ի նշան իշխանութեան: Սարկաւագները հրահանգուեցան աշակերտներուն օգնելու ժողովրդին ծառայելու ատեն: Մինչեւ իսկ հիմա սարկաւագներ կը մասնակցին եկեղեցական պաշտամունքին եւ կ'օգնեն եկեղեցիին վարչական, բարեսիրական եւ առաքելական ծառայութիւններուն:

Քահանայ – Քահանայի կամ Երեցի պաշտօնը հաստատած են առաքեալներն իրենք (Գործք 14:23), որը իր ամբողջական տեսքը ստացաւ երկրորդ դարուն երբ քրիստոնէայ նորահաւատներու աճող թիւը հարկադրեց աւելցնել ձեռնադրեալներու կարգերը: Ինչպէս այսօր քահանային պարտականութիւնն է քարոզել, պատարագել եւ առաջնորդել իր հօտը յանուն եպիսկոպոսին:

Եպիսկոպոս – Այս պաշտօնը նոյնպէս ետ կ'երթայ ուղղակի Քրիստոսի առաքեալներու շրջան (Ա. Տիմ. 3:2) Ի սկզբանէ եպիսկոպոսներ ծառայեցին իբրեւ ծիսական առաջնորդներ: Բայց երբ ծուխեր ստուարացան քահանային պաշտօնը վերականգնուեցաւ եւ եպիսկոպոսներ սկսան ծառայել խումբ մը ծուխերու:

Կան նաեւ փոքր կարգեր, ինչպէս դպիր, որ կը բաղկանայ չորս կարգերէ. դռնապան, ընթերցող, այսահալած եւ դպիր, ինչպէս նաեւ կիսասարկաւագ:

ՍՈՒՐԲ ՊՍԱԿ

Չորրորդ դարէն ի վեր պսակի արարողութիւնը յիշուած է հին քրիստոնէայ գրողներու կողմէ: Այդ տե-

դի կ'ունենար հաղորդութեան պահուն: Ըստ Սբ. Յովհանն Ոսկեբերանի ուսուցման պսակը կը խորհրդանշէր նորապսակ ամուլին համար կիրքերու վրայ յաղթութիւն եւ կը մնար իբրեւ նշան հաղորդութեան յաւիտենականութեան: Տաասնըմէկերորդ դարուն արարողութիւնը զատուեցաւ Պատարագէն:

Հայ Եկեղեցւոյ արարողութեան մէջ ամէն արարք մասնաւոր իմաստ մը ունի ամուլի նոր կեանքին մասին: Մատանիներ կը փոխանակուէին եւ փեսային ու հարսին աջ ձեռքերը կը միացուէին, ամուլին միութիւնը խորհրդանշելով: Նարօտները աւանդաբար կը ծառայէին իբրեւ նշան պատուոյ եւ փառքի եւ նոր թագաւորութեան որ տեղը պիտի իշխէր (իրենց նոր կեանքը եւ իրենց տունը): Միեւնոյն գինիի զաւաթէն խմել կը յիշեցնէ Կանայի հարսանիքը եւ կը շեշտէ ամուլին միութիւնը ամուսնական կեանքին մէջ:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՀԻՒԱՆԴԱՅ

ԿԱՄ ՎԵՐՋԻՆ ՕԾՈՒՄ

Հիւանդներու արարողութիւնը գոյութիւն ունեցած է եկեղեցիին սկիզբէն ի վեր: Այս մասին ակնարկութիւն ունինք Մարկոսի Աւետարանին եւ Յուդայի թուղթին մէջ: Ուրներորդ դարէն վերջ այս արարողութիւնը զուգորդուեցաւ եկեղեցականներու մահուան հետ եւ կոչուեցաւ վերջին օծում:

“Մաշտոց”ի մէջ (Հայաստանեայց Եկեղեցւոյ ծէսերու գիրքը) մասնաւոր Տէր Ռդորմեա եւ աղօթքներ կան հիւանդներուն համար:

Քրիստոնէական ինքնութիւնը մեզմէ իւրաքանչիւրին մօտ ամրագրող բազում այլ հանգրուաններու ընդմէջէն պէտք է անցնի: Բայց կայ մէկ եւ զլխաւոր հոգե-

մըտաւոր վիճակ մը, որն աղօթքի դրսեւորումն է: Աղօթքը դարձաւ նաեւ առանցքը Քրիստոսի երկրաւոր կեանքին: Առանց աղօթքի մեր հոգեւոր կեանքը կտրուած է Աստուծմէ եւ դժուար թէ առանց աղօթքի կը կարողանանք դառնալ հոգեւոր կամուրջներ կառուցող ճարտարապետներ մարդկանց միջեւ:

Ուրեմն, աղօթքի հրաւերով մեր առաջին ուսուցիչը Քրիստոս է: Եւ երբ կ'աղօթենք փաստօրէն կ'ունենանք հոգեւոր աճ ի Քրիստոս: Քրիստոս Իր առանձնակի աղօթքի պահերուն կանգնեցաւ Հօր Աստուծոյ ներկայութեան: Ահաւասիկ նոյնը կը կատարենք մենք: Երբ կ'աղօթենք, ապա Աստուծոյ ներկայութեան ենք եւ կը հետեւինք Քրիստոսի կեանքի օրինակին: Եւ ի՞նչ է որ տեղի կ'ունենայ աղօթքի ընթացքին: Պարզօրէն Աստուծոյ եւ աղօթողի միջեւ կը զարգանայ մտերմական հոգեւոր կապ մը եւ Աստուած ամենակարող մեզ կ'առաջնորդէ ու կը զօրացնէ, որ մերժենք մեր մէջ ծնունդ առած հին մարդը եւ անոր փոխարէն դառնանք նոր ի Քրիստոս:

Աղօթքի կեանքով առաջնորդուած մարդը, երբ կ'օգտագործէ իրեն տրուած շնորհներն ու միջոցները, անտարակոյս իր մէջ կը մշակէ քրիստոնէական ինքնութիւն: Համեստ այս աշխատութեամբ կարելի բան չէ, որ յազեցուած բացատրութիւններ կարողանանք ներկայացնել ընթերցողին: Սոյն գրութիւնը պարզապէս առիթ կ'ընծայէ իւրաքանչիւրիս մտածելու քրիստոնէական ինքնութեան մասին եւ անոր նպաստող բոլոր միջոցները կեանքի կոչելու:

Այսպէս օրինակ, շատ յաճախ կը խօսինք բարեգործութեան, ներողամտութեան, ճշմարտախօսութեան, պարկեշտութեան եւ տակաւին անթիւ անհամար առաքինութեանց մասին, որոնք մեզմէ կը պահանջեն

կեանք ու աղօթքով գործադրուած առաքինութիւններ: Որովհետեւ եթէ անկարող ենք Աւետարաններէն ճառագայթող պատուիրանները գործադրել, ուրեմն բարոյական իրաւունքը չունինք քրիստոնէական կոչումը ստանալու: Ահաւասիկ այստեղ ի յայտ կու գայ նաեւ այն իրականութիւնը, աղօթողի եւ աղօթքէն պարպուած անձին միջեւ: Որովհետեւ, աղօթողը, երբ Աստուծոյ ներկայութեան է, ինքզինք կը տեսնէ աւելի յստակատեսութեամբ, եւ, ապա կը կողմնորոշէ իր կեանքի ընթացքը եւ ամենէն կարեւորը, կը դառնայ Աստուծոյ սիրոյն ու իմաստութեան մատակարարող հոգեւոր անձը: Ահա թէ ինչո՞ւ կ'ըսենք, որ աղօթքը կը պայծառակերպէ մեր ողջ էութիւնը: Չէ՞ որ Քրիստոս Ինք մեր առջեւ բացաւ ճանապարհը ճշմարիտ կեանքին:

Միբելի հաւատաւոր քրիստոնէայ, ճշմարտապէս քրիստոնէական ինքնութիւնը ձեռք բերելը մեզմէ կը պահանջէ հաւատքով ապրուած կեանք, եւ աղօթքով առաջնորդուած կեանքի ընթացք, որպէսզի այդ ճանապարհին մեզի տրուած շնորհներն ու հոգեւոր միջոցները կատարեն իրենց դերն ու պաշտօնը:

Քրիստոնէական ինքութեան ամենէն բնորոշը եւ գուցէ քրիստոնէայի կեանքին գագաթնակէտը այն պահն է, երբ մենք Աստուծոյ սէրը կը կարողանանք բաշխել մարդկանց եւ ամէն բանէ առաջ գործնապէս ներողամտութեամբ: Ահա այս պահուն մեր կեանքը կը դարձնենք նաեւ հրաշագործ կեանք: Ով դժուարութիւն ունի կատարելու վերջինս, ապա այդպիսին մշտապէս խոռովեալ ու ալեկոծ յոյգերով կ'ապրի: Այդպիսին, շատ հեռու է Աստուծմէ եւ հոգեւին անհանգիստ:

Բաց դռները հոգիիդ ով քրիստոնէայ հաւատացեալ, որպէսզի այնտեղ մուտք գործէ Քրիստոս, ինչպէս Ան մուտք գործեց Տաճարէն ներս: Աղօթէ ջերմագինս,

որպէսզի մեր մարդկային տկար էութիւնը, որ միշտ տրամադրուած է չլսելու Աստուծոյ խօսքը կենդանարար, Աստուծոյ զօրութեամբ մերժէ իր հոգեւոր էութեանը մէջ պտտող «սեղանավաճառները» եւ այնտեղ վերահաստատէ Իր աստուածային պատկերը:

Մէր անուն Յիսուս

Միրով քով ճմլեա

Միրտ իմ քարեղէն

Շնորհալի մեծ Հայրապետի աղօթքի բառերուն մէջ տեսնենք ուղին՝ դէպի քրիստոնէական ինքնութիւն:

21 Փետրուար, 2016

Լոնտոն

ՄԵԾ ՄԱՐՏԻԿԸ

Սուրբ Գեորգ Զորավարի տօնը մեր ազգի կեանքին եւ Եկեղեցւոյ աւանդութեան մէջ ունի մասնայատուկ տեղ: Սուրբերու տօնը հոգեւոր սնունդ կը հաղորդէ բոլորիս, որովհետեւ անոնց սրբակենցաղ կեանքը կը խորհրդանշէ Քրիստոսանման կեանքի ճանապարհորդութիւնը:

Ովքե՞ր են սուրբերը: Սուրբերը այն մարդիկ չեն, ովքեր ծնունդով են սուրբ: Սուրբ են այն մարդիկ, ովքեր իրենց կեանքով են արդարացուցած սրբութիւնը: Դեռ օրեր առաջ Եկեղեցին իր Սուրբ Խորանէն ընթերցեց Մարկոսի Աւետարանի այն հատուածը, ուր Քրիստոս կը պատգամէ. «Թող տուէք մանկւոյնդ գալ ամի իս, եւ մի արգելուք զոոսա զի այդպիսեացոյ է արքայութիւն Աստուծոյ» (Մարկ. 10:13-14):

Ինչո՞ւ մանուկները մատնացոյց ըրաւ Յիսուս: Որովհետեւ անոնց հոգին իր մէջ կը կրէ Աստուծոյ պատկերը: Եւ սուրբ են այն մարդիկ, ովքեր իրենց կեանքի ընթացքը կը շրջեն դէպի «մանկութիւն», ապրելու համար դէպի Աստուած եւ աստուածգիտութեան լոյսը:

Քրիստոնէական եկեղեցւոյ կեանքի պատմութիւնը լեցուն է բազմաթիւ սուրբերու վարքագրութեամբ: Սուրբեր, ովքեր մերժած են կրակի պաշտամունքը եւ խոնարհած են միայն Աստուծոյ առջեւ: Սուրբեր, ովքեր իրենց կեանքը գոհաբերած են Աստուծոյ Սուրբ Սեղանին դառնալով վկաները Քրիստոսի:

Ինչպե՞ս պիտի տօնախմբենք սուրբերը մեր կեանքին մէջ: Պատասխանը պարզ է եւ յստակ: Կեանքն ապրելով իրենց ուղեգծած ճանապարհով «զԱստուած

սիրել հոգու ամբողջ զօրութեամբ եւ մեր ընկերը սիրել
մեր անձերուն նման»:

Ի զուր չէ, որ Եկեղեցին յայտարարած է. «Արիւն
մարտիրոսաց հիմն է եկեղեցւոյ»:

23 Սեպտեմբեր, 2016

ՀՐԱՇԱԿԵՐՏ ԵՒ ԶՕՐԵՂ ՓԱՅՏ ԽԱՉԻ

Խաչագգեստ կեանքի ընթացք մի պիտի ապրի քրիստոնեան: Խաչին խորհուրդը մեր մէջ առնել փաստօրէն կը նշանակէ մեր մէջ կրել Քրիստոսի ներկայութիւնը, կեանքի կոչել Քրիստոսի Աւետարանը եւ լուսաւորել նաեւ մարդկանց կեանքը:

Պօղոս Առաքեալի խօսքը ուղղուած Կորնթացիներուն օրուան հոգեւոր հացն է. «Խաչելութեան մասին խօսիլը յիմարութիւն է կորսուածներուն համար, իսկ մեզի փրկուածներուս համար Աստուծոյ զօրութիւնն է» (Ա. Կորնթ. 1:18):

Խաչին խորհուրդը պիտի իմաստաւորենք մեր հոգեւոր կեանքի մէջ երեք հիմնական քայլերով.

ա. Մեր մէջ պիտի մշակենք հաւատքը՝ Քրիստոս Աստուածորդու նկատմամբ: Սա տեղի պիտի ունենայ մեր կեանքի ճանապարհորդութեան սկիզբէն: Մեր մանուկ հասակին մէջ միտքն ու հոգին պիտի սնուցանենք Աստուծոյ սիրով ու իմաստութեամբ:

բ. Հաւատքը՝ Քրիստոսի Անձին նկատմամբ պիտի ունենայ նաեւ իր գործնական արտայայտութիւնը: Այլ խօսքով պիտի ապրինք Քրիստոսի նմանակցութեամբ:

գ. Վերջապէս, երրորդ քայլը պիտի ըլլայ մեր կողմէ յանձնառուած վկայութիւն տալու պարտականութիւնը եւ մեր կեանքի ընթացքով վկայութիւն տալու Քրիստոսի Անձին մասին, ներշնչելու մեր շուրջիները Քրիստոսի կեանքով:

Խաչին խորհուրդով ապրուած կեանքը լուսաւոր է եւ օրհնուած: Եթէ խաչին խորհուրդէն պարպուած է մարդը, ապա պարպուած է Աստուծոյ ներկայութենէն: Ծնողներ, դաստիարակներ, հոգեւորականներ եւ մար-

դիկ ինչպէս պիտի իմաստ ու նպատակ տային իրենց կեանքին, եթէ հետեւող չըլլային Քրիստոսի Խաչելութեան խորհուրդին, որն իր մէջ կը պարունակէ զոհողութեան իմաստը:

Ուրեմն, խաչը՝ աստուածային զօրութիւնն է մեր կեանքին մէջ: Խաչը՝ Աստուծոյ իմաստութիւնն է մեր կեանքին մէջ, որ մեր կեանքը կ'առաջնորդէ դէպի լոյս եւ առաւել կեանք:

23 Հոկտեմբեր, 2016

Պրրպէնք

ՆՄԱՆԻՆՔ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ

«Թող տուէք մանկտույդ գալ առի իս, եւ մի արգելուք զդոսա զի այդպիսեացդ է արքայութիւն Աստուծոյ»:

(Մարկ. 10:13-14)

Քրիստոսի այս խօսքերը առաջին հերթին ուղղուած են Իր առաքեալներուն, որոնք Իր երկրաւոր առաքելութեան ժամանակ ուղեկից ու գործակից էին Իրեն: Բայց աւելի խորքը թափանցենք Քրիստոսի այս խօսքին եւ այն ժամանակ պիտի լաւագոյնս ըմբռնենք, որ Քրիստոսի պատգամը ուղղուած էր բոլորիս անխտիր, որպէսզի ապրինք մանուկներուն նման, մաքուր սրտով ու հոգիով, քրիստոնեայի կեանքով, որպէսզի մուտք գործենք Աստուծոյ ներկայութենէն ներս:

Աւետարանական իմաստով մանուկը միայն տարիքով փոքրիկը չէ, այլեւ՝ մանուկ են բոլոր անոնք ովքեր իրենց ամբողջ կեանքով կ'ապրին մանուկի նման մաքուր հոգով ու սրտով: Եւ որպէսզի մանուկ ըլլանք մեր կեանքով, ապա մեր կեանքով պիտի ըլլանք ապրող Աւետարան: Ուրիշ խօսքով, Քրիստոսի Աւետարանը մեզ կը հաղորդէ այն բոլոր միջոցները, որոնք երբ կեանքի կը վերածենք, ապա կը մաքրենք ու կը սրբենք մեր ամբողջ էութիւնը եւ կ'ապրինք նոր ծնունդ մը, եւ այդ հոգեւոր ծնունդն է:

Երբ մանուկ է մարդը, կը նշանակէ նաեւ, որ իր կեանքը կ'ապրի Աստուծոյ հետ: Երբ մանուկ ենք մեր կեանքով, ապա գործնապէս մուտք ենք գործած Աստուծոյ թագաւորութենէն ներս եւ դարձած ենք առաքեալներ Քրիստոսի: Անհատն ու հաւաքականութիւնը պիտի մնան մանուկ իրենց հոգով ու սրտով, մանաւանդ այ-

սօրուայ աշխարհի կեանքին մէջ: Մանուկ է այն մարդը, որ կ'ապրի Քրիստոսանման կեանքով, խաղաղ կեանքով: Այն ժամանակ մենք ալ պիտի լսենք Քրիստոսի խօսքը, երբ կը յայտարարէ.

«Թող տուէք մանկտւոյդ գալ ամի իս, եւ մի արգելուք զդոսա զի այդպիսեացդ է արքայութիւն Աստուծոյ»:

17 Սեպտեմբեր, 2016

ՄԻԱՅՆ ՀԱԻԱՏԱՅ

«Մի վախնար, հաւատա՛ միայն, եւ ան պիտի ապրի»:

(Ղուկ. 8:50)

Յիսուսի այս խօսքերը կը վերաբերին Յայրոսի աղջկան, որուն մասին լուր էր հասած Յայրոսի թէ ինչո՞ւ համար ի գուր նեղութիւն կը պատճառէր Վարդապետին, որպէսզի Իր այցելութեամբ բժշկէր իր դստեր, որովհետեւ ան արդէն իսկ մեռած էր: Յիսուս ականատես եւ ականջալուր կ'ըլլայ կատարուածին եւ հանդարտութեամբ կը պատասխանէ. «Մի վախնար, հաւատա՛ միայն, եւ ան պիտի ապրի»:

Ի՞նչ կը տեսնենք այս պատկերին մէջ. երկու մարդկային կերպարներ, որոնցմէ մէկը՝ Յայրոս հաւատքով ու համոզումով կը դիմէ Վարդապետին, որպէսզի իր տունը գար եւ բժշկէր իր դուստրը, եւ միւսը՝ թերահաւատը որ ընդհուպ շտապ կ'ուզէր լուրը տիրոջը հասցնել: Բայց պատկերը մեզ կը պատգամէ յստակ ճշմարտութիւն մը, որ Աստուծոյ կամքը գերիշխող է: Եւ Յիսուսի խօսքերը ուղղուած աղջկայ ծնողներուն դիպուկ են. «Մի լաք, որովհետեւ մեռած չէ, այլ կը քնանայ»: Եւ Իր խօսքի աւարտին Ան Իր պատգամը կը յդէ Յայրոսի աղջկան ըսելով. «Ելի՛ր, կանգնե՛՛ ո՛վ մանուկ»:

Այս ամբողջ կատարուած պատկերին մէջ մենք մեզ կը տեսնենք: Մարդկային կեանքն է, հասարակութեան կեանքն է, եւ այսօր եկեղեցւոյ կեանքն է: Ժամանակի մը համար այսօր եկեղեցին իր բնականոն կեանքէն պիտի զրկուի, երբ վաղուրնէ շինարարական աշխատանաց հունին մէջ մտնէ: Բայց միշտ պիտի արձագանգէ

մեր ականջներուն մէջ Տիրոջ խօսքը. «Մի վախնար, հաւատա՛միայն, եւ ան պիտի ապրի»:

Այս Սուրբ Եկեղեցին իր առաքելութիւնը պիտի շարունակէ նոր կառոյցի տեսիլքով ու նոր հեռանկարներով: Մեծն Լոս Անճելըսի աշխարհագրական այս տարածքին պիտի ունենանք հայկական ճարտարապետութեան աւանդականն ու արդիականը համատեղուած ոճով եկեղեցի մը, որն անտարակոյս պատիւ պիտի բերէ եւ մեր Թեմին եւ ինչո՞ւ չէ նաեւ Լոս Անճելըսին:

Ձեր հոգեւոր կապը ամուր պահեցէք եկեղեցւոյ հետ: Մեր մտքերուն մէջ արթուն պահենք այն պատկերը, թէ ինչպէս մայրը մինչ իր գաւակի ծնունդը ինն ամիսներ շարունակ աղօթքով, համբերութեամբ ու խնամքով իր մէջ կը պահէ մանուկը եւ երբ մանուկը լոյս աշխարհ կու գայ ուրախութիւնը մեծ կ'ըլլայ:

Մեր պարտականութիւնը պիտի ըլլայ մեր հոգիներուն մէջ առնելու եւ պահպանելու նոր Եկեղեցւոյ պատկերը: Սա հրաշալի զգացողութիւն մըն է: Ինչպէս մայրը իր յղութեան ժամանակ իր մէջ կրելով երեխան կը սրբանայ, դուք ալ ձեր մէջ փայփայէք տեսիլքը նոր Եկեղեցւոյ, որպէսզի ապրիք սրբութեան զգացումը:

6 Նոյեմբեր, 2016

ԱՊՐԻՆՔ ԽՈՆԱՐՀ ԿԵԱՆՔՈՎ

«Զի որ փոքրիկն է յամենեսին ի ձեզ՝ նա եղիցի մեծ»:

(Դուկաս 9:48)

Քրիստոսի Աւետարանէն քաղուած դասերը մարդուն հոգեւոր կեանքը կը մշակեն եւ աւելին, երբ իւրաքանչիւր պատգամ կեանքի կը կոչենք, գործի կը վերածենք, ապա փաստօրէն մեր մէջ կը կրենք զԱստուած:

Քրիստոս այս խօսքը կ'արտասանէ այն պահուն, երբ կը նկատէ, որ Իր աշակերտներուն միջեւ վեճ մըն է ծագած եւ անյապաղ կը կարդայ անոնց միտքը, որոնք իրար մէջ կը վիճաբանէին թէ իրենց մէջ ո՞վ է մեծը, առաջինը: Եւ ահա այդ պահուն Յիսուս մանուկ մը վերցնելով ամբոյսին մէջէն բոլորի ուշադրութիւնը կը կեդրոնացնէ անոր վրայ ըսելով. «Որ որ ընկալցի զմանուկս զայս յանուն իմ՝ զիս ընդունի, եւ որ զիս ընդունիցի՝ ընդունի գառաքիչն իմ. զի որ փոքրիկն է յամենեսին ի ձեզ՝ նա եղիցի մեծ»:

Ինչքան մեծ խորհուրդ կը պարունակէ Քրիստոսի այս խօսքը իր մէջ, որուն միտք բանին խոնարհութեան պատգամն է: Եւ իրօք մարդկային կեանքի փոխյարաբերական կեանքի մէջ առանցքը պէտք է դառնայ այս պատգամը, որովհետեւ Աստուծոյ աչքին չկան մեծեր ու փոքրեր, քանզի բոլորս ալ հաւասար ենք: Մեծ են անոնք, ովքեր խոնարհ են սրտով ու հոգով եւ միայն այդպիսիք են, որոնք կը բարձրանան Աստուծոյ աչքին:

Ուրեմն, այս է օրուան Աւետարանի դասը, որ ապրինք խոնարհ կեանքով եւ մեր կեանքի ճշմարիտ օրինակով կարողանանք Աստուծոյ սէրը հաղորդել մեր նմաններուն: Որովհետեւ ինչպէս առաքեալներու կեան-

քին մէջ բաժանում ու վէճ ծագեց, երբ կը վիճէին թէ ո՞վ էր իրենց մէջ մեծը, ահա այդ է նաեւ գլխաւոր պատճառը յաճախ, երբ բարեկամներ ու հարազատներ իրարմէ կը բաժնուին, մոռնալով այն հանգամանքը, որ մեծութիւնը կը կայանայ խոնարհութեան մէջ:

Ամէն անգամ, երբ եկեղեցի կը յաճախենք ներկայ ըլլալու Սբ. Պատարագին, ապա պարտ ենք տրուած հոգեւոր սնունդը ըմբռնելու եւ զայն կեանքի կոչելու:

Որովհետեւ իւրաքանչիւր պատգամ, որ կը տրուի մեզի Աւետարանէն, մեր հոգեւոր կեանքը կը մշակէ, որպէսզի նմանինք Աստուծոյ: Ինչքան առանձնաշնորհեալ ենք հետեւաբար որպէս քրիստոնեաներ, որպէսզի ոչ միայն հետեւող ըլլանք Քրիստոսի, այլեւ՝ նմանող Աստուծոյ մեր կեանքով ու խօսքով:

15 Նոյեմբեր, 2015

ՄՐԲԱԼՈՅՍ ՄԻՒՌՆԸ

Մեր Սուրբ Եկեղեցւոյ կեանքին մէջ ամենէն նուիրական պահերէն մէկն է եղած Սրբալոյս Միւռնոյի ներկայութիւնը, որը կը խորհրդանշէ Սուրբ Հոգիին էջքը Երկինքէն Երկիր: Սրբալոյս Միւռնոյով կ'օծենք ու կը դրոշմենք մեր մանուկները Սուրբ Մկրտութեան աւարտին, մեր Սուրբ Եկեղեցւոյ քահանաներու ճակատն ու ձեռքերը կ'օծենք Սուրբ Միւռնոյով, նորակառոյց եկեղեցիներն ու խաչքարերը կ'օծենք ու կը նուիրագործենք Սուրբ Միւռնոյով, եկեղեցական սպասները կ'օծենք Սուրբ Միւռնոյով, եւ այսօր Սուրբ Միւռնոյով պիտի օրհնենք ջուրը, որպէսզի ան դառնայ կենդանարար ջուր: Այս բոլորը կը բացատրեն այն հիմնական միտքը, որ Սուրբ Միւռնոյի օգտագործմամբ մեր կեանքը կը լեցուի Սուրբ Հոգու շնորհներով ու աստուածային իմաստութեամբ, այնպէս ինչպէս արդէն կը բացատրեն շարականին տողերը, երբ կը խօսին Սուրբ Հոգւոյ մասին. «Սբ. Հոգին զօտեպնդեց Քրիստոսի առաքեալները՝ Աստուծոյ խօսքը տարածելու հաւատքի գիտակցութեամբ»: «Սբ. Հոգին՝ Աստուծոյ խորհուրդը կը ներշնչէ մեզ»: «Սբ. Հոգին երկրաւորը՝ դէպի Երկինք կ'առաջնորդէ»: Ահաւասիկ այս դերակատարութիւնն է, որ կ'իրականանայ, երբ Սբ. Միւռնոյի հեղումովը մեր հոգեւոր էութեանը մէջ կ'ապրինք աստուածայինին ներկայութիւնը:

Հայց. Առաքելական Եկեղեցւոյ կեանքին մէջ խոնարհումը Սուրբ Միւռնոյի նկատմամբ, որպէս Սբ. Հոգիին ներկայութիւնը ապահովագրող տեսանելի նիւթը, չափազանց խորն է: Սբ. Միւռնոյի ներկայութիւնը մեզի համար կը խորհրդանշէ հաւատքի նորոգութիւնը: Եւ այս գիտակցութիւնը եօթ տարին անգամ մը, դեռեւս

Լուսաւորչի օրերէն արմատացած է մեր հոգեւոր էութեանը մէջ: Սրբալոյս Միւռնի պատրաստութիւնն ու օրհնութիւնը կը խորհրդանշեն հաւատքի ճանապարհորդութիւնը, հոգեւոր պատրաստութեան շրջանը, որպէսզի ընդունինք Սբ. Հոգին եւ ապրինք աստուածայինին ներշնչումով: Սրբալոյս Միւռնի օրհնութեամբ տրուած ջուրը մեզի կը բերէ Աստուծոյ սէրը, Քրիստոսի Աւետարանին իմաստութիւնը: Սբ. Միւռնը՝ իր աստուածային ներուժով մեզ կը միացնէ, որպէսզի Եկեղեցին փառաւորութի Քրիստոսի Աւետարանին քարոզչութեամբ: Մենք ականատես դարձանք Սբ. Էջմիածին ուխտի այցելութեամբ, թէ ինչպիսի երկիւղածութեամբ հազարաւոր ժողովուրդ իրենց ներկայութեամբ Սբ. Էջմիածինը վերածած էին Վերնատան՝ սպասելով նուիրական այն պահուան, երբ Սբ. Միւռնին հեղումովը իրենց էութեանը մէջ պիտի ապրէինք Սբ. Հոգիին էջքը: Լուսաւորութեան պահին էր այդ բոլորիս համար: Հոգեւոր վերածնունդի պահին էր այդ, երբ Սբ. Հոգին կը ներգործէր մեր կեանքին մէջ, որպէսզի մեր կեանքն առաջնորդէր առ Աստուած: Մարդուն կեանքը մնայունօրէն պէտք է ունենայ աղօթքի այս ընթացքը, որպէսզի ապրինք Աստուածահաճոյ կեանքով, բարեգործ կեանքով:

Հետեւաբար, Սրբալոյս Միւռնի օրհնութիւնը մեր Ազգի ու Եկեղեցւոյ կեանքին մէջ կը խորհրդանշէ Հոգեգալուստը, աստուածային շնորհներով լեցուելու օրը, որպէսզի դէպի կեանք վերադառնանք մեր մէջ կրելով զԱստուած:

3 Հոկտեմբեր, 2015

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔԸ

«Հայր Մեր»-ը, որուն տիտղոսագրումն է «Տէրունական աղօթք»-ը, ողջ քրիստոնէութիւնը միաւորող գլխաւոր աղօթքն է՝ արտասանուած Քրիստոս Աստուածորդու կողմէ: Երբ առաքեալները Քրիստոսէ կը խնդրեն աղօթք մը, որպէսզի հետեւին Իրեն, անոնց կը տրուի «Հայր Մեր»-ը, եւ միակը՝ Վարդապետին կողմէ ուսուցանուած:

«Հեր Մեր»-ը թէւէ կարճ աղօթք մըն է, բայց եւ այնպէս իր մէջ կը պարփակէ ամենէն հիմնական տուեալները գորս պարտ ենք գիտնալ Աստուծոյ մասին եւ աւելին՝ մեր հոգեւոր կապի մասին Աստուծոյ եւ մարդկութեան հետ: Եւ եթէ նոյն այս աղօթքի ոգով կ'ապրինք կեանքը, ապա անտարակոյս նոյն կեանքը կը դառնայ ընծայում Աստուծոյ փառքին համար, որովհետեւ հետեւած ըլլալով քրիստոնէայի մը համար նախատեսուած նախադրեալներուն, փաստօրէն ձգտումը կը դրսեւորենք ապրելու Քրիստոսի նման կեանք մը, հասկնալով հանդերձ, որպէս մարդկային տկար արարածներ յաճախ պիտի ունենանք նաեւ փորձութեան եւ խարխաբումի պահեր:

«Հայր Մեր»-ը կամ «Տէրունական աղօթք»-ը, տեսակէտով մը խտացումն է Քրիստոսի Վարդապետութեան եւ ողջ աւետարաններուն: Քրիստոսի կողմէ ուսուցանուած այս աղօթքը մեզ կ'առաջնորդէ աղօթքի, մանուկն ու պատանին, երբ կ'արտասանեն այս աղօթքը անտարակոյս կ'ապրին Աստուծոյ ներկայութիւնն ու երկիւղած պահ մը: Այնուհետեւ, երիտասարդն ու չափահաս անձնաւորութիւնը աւելին է որ կ'զգան եւ հաւատքի գիտակցութեամբ իրենց կեանքը կ'առաջնորդեն

հոգեւոր վերածնունդի: Եւ ամէն անգամ, երբ կը կրկնենք «Տէրունական աղօթք»-ը, հոգեւոր կեանքի նոր մակարդակի մը վրայ կը գտնուինք եւ աւելի մօտեցած Աստուծոյ:

«Հայր Մեր»-ին նուիրուած անթիւ հրապարակումներ կան, որոնք ունին նաեւ գիտական մակարդակ: Մեր այս աշխատութիւնը պիտի ըլլայ համեստ մօտեցում մը ընթերցողին հետ բաժնելու համար առաւելաբար մեր հոգեւոր փորձառութիւնը եւ այն սնունդը, որն անընդհատ կը քաղենք, երբ Վարդապետին աղօթքը կը դարձնենք մեր սրտին աղօթքն ու հոգիին թրթռացումը: Գուցէ արդար պիտի ըլլայ արձանագրել այն գլխաւոր միտքը, որ «Հայր Մեր»-ը մեր առջեւ կը պարզէ նպատակը մեր Աստուածապարգեւ կեանքին կատարելապէս:

«Տէրունական Աղօթք»-ը կամ «Հայր Մեր»-ը նպատակը մեր կեանքին

«Տէրունական աղօթք»-ը մեզ կ'առաջնորդէ դէպի ճշմարիտ կեանք, ուր գլխաւորաբար վեր են հանուած այն հիմունքները, որոնք նկարագիր կու տան մեր հոգու էութեանը, որպէսզի կեանքն ապրինք որպէս քրիստոնէայ: Եւ որո՞նք են այդ ճշմարտութիւնները, Աստուծոյ թագաւորութիւնը, Աստուծոյ կամքը, ամէնօրեայ հացը, ներողամտութիւնը, փորձութիւնը, եւ այլն:

ա. Աստուծոյ Թագաւորութիւնը.

«Տէրունական աղօթք»-ը կը սկսինք Աստուծոյ ուղղուած դիմումով եւ այս անգամ որոշակի հոգեւոր կապի մը շեշտադրութեամբ.

«Հայր մեր, որ յերկինս ես, Սուրբ եղիցի անուն Քո: Եկեսցէ արքարութիւն Քո»:

Աղօթքի առաջին բառերը կը բացատրեն այն միտքը, որ աղօթողը կը պատկանի Հօր Աստուծոյ: Այդ հաստատումն է նաեւ ծնող եւ զաւակ յարաբերութեան: Այս հաստատումը մեզ կ'ամրապնդէ նաեւ հոգեւոր ճանապարհորդութեան ընթացքի մը մէջ, որը պիտի առաջնորդէ աղօթողը այն հիմնական մեկնակէտին, որ Աստուծոյ ներկայութիւնն է:

Իւրաքանչիւրս, անտարակոյս, մեր կեանքի տարբեր հանգրուաններուն կը դիմենք Աստուծոյ, որպէսզի մեզ առաջնորդէ աղօթքի: Այդ հոգեւոր զգացողութեամբ, երբ կ'արտասանենք «Հայր Մեր»-ի առաջին երեք նախադասութիւնները, ապա այն ժամանակ լայնօրէն բացած կ'ըլլանք մեր հոգիին դռները, ուր եւ կ'ապրինք Աստուծոյ ներկայութիւնը: Ահա այդ պահուն եւէջ կը սկսի երկխօսութիւն Աստուծոյ եւ աղօթողին միջեւ: Ծնող եւ զաւակ ջերմ կապը համարձակութիւնը կու տայ կատարելու յաջորդ հաստատումները. «Սուրբ Եղիցի անուն Քն: Եկեսցէ արքայութիւն Քն»:

Աղօթողը, անկասկած Աստուծոյ հետ իր երկխօսութեանը ընթացքին կ'ապրի նաեւ հոգեւոր կերպարանափոխութիւնը, իր հոգիին լուսաւորումը եւ ճանապարհորդութիւն մը Աստուծոյ հետ: Այս իմաստով ալ աղօթքը կը դառնայ նպատակը մեր կեանքին:

բ. Աստուծոյ կամքը

«Հայր Մեր»-ի մէջ արձանագրուած այս հաստատումը՝ «Եղիցին կամք Քն որպէս յերկինս եւ յերկրի» կը բացատրէ ամբողջական յանձնատուութիւն: Այլ խօսքով մեր կեանքը կը դնենք Աստուծոյ ձեռքերուն մէջ: Քանզի քաջ համոզումն ունինք, որ Աստուած է ապաւենը մեր կեանքին: Աստուծոյ կամքին արտայայտութիւնն է ստեղծագործութիւնը, Քրիստոսի մարդեղութիւնը եւ այն

բոլորը զորս կը գտնենք Աւետարաններով մեզի հաղորդուած:

Աստուծոյ կամքին ընդառաջ երթալու արտայայտութիւն պիտի տանք գործնապէս եւ զոհողութեամբ: Լաւագոյն օրինակը Քրիստոսի կեանքն է, Անոր պատարագումը խաչին վրայ: Որովհետեւ, ո՞ւր է իմաստը աղօթքին, երբ կը դիմենք Հօր Աստուծոյ եւ Անոր կամքը ի գործ դնելու դժկամութիւնը կ'ունենանք: Ուրիշ խօսքով, «Տէրունական աղօթք»-ը ամբողջութիւն մըն է, որը կարելի չէ որեւէ ձեւով ամփոփել: Իւրաքանչիւր հաստատում եւ բառ ունի իր ամբողջական իմաստը եւ զօրութիւնը՝ մարդուն հոգեւոր կեանքը պայծառակերպելու տեսանկիւնէն դիտուած:

գ. Ամենօրեայ հացը

«Ձեաց մեր հանապազորեայ Տուր մեզ այսօր»: «Տէրունական աղօթք»-ով արտայայտուած հացին խնդրանքը չպէտք է ըմբռնել միայն նիւթական առումով: Հացը՝ Աստուծոյ այն պարգեն է, որուն կարիքն ունինք եւ որը ըմբռնելով կը կերտենք այնպիսի կեանք, որ մեր մէջ կ'ապրեցնենք Աստուծոյ պատկերը: Ամենօրեայ կարիքն է հացը, որուն դիմումը կը կատարենք Աստուծոյ եւ այն գիտակցութեամբ որ առատօրէն պիտի ստանանք: Հացը, միաժամանակ կը խորհրդանշէ բոլոր կարիքները, որոնցով եւ կ'ապահովենք մեր եւ ֆիզիքական եւ հոգեւոր սննդառութիւնը: Եկեղեցւոյ հայրերը, երբ կը խօսին հացի մասին, անոնք կու տան այն մեկնաբանութիւնը, որ հացը խորհրդանշող բոլոր կարիքները կը նպաստեն, որ մեր մէջ մշակենք Աստուծոյ պատկերը: Այս է հիմնական միտքը «Տէրունական աղօթք»-ով արտայայտած ամենօրեայ հացին խնդրանքին: Հացը աստուածային պարգեն է եւ նոյն հացը՝

միջոցն է նաեւ մեր հոգեւոր էութեան մէջ արմատացնելու աստուածայինին պատկերը: Հացը՝ նաեւ հողն ու երկիրն է, որուն վրայ իշխանութեան պատիւը տուաւ Աստուած մեզի: Ուրեմն նաեւ գիտակից պիտի ըլլանք մեզի տրուած առաձնաշնորհումին եւ այն պահենք սրբութեամբ:

դ. Մեղք եւ թողութիւն

Մեղքի ընդհանրականութիւնը այս աղօթքին մէջ ակնյայտ կը դառնայ: Ողջ մարդկութիւնը, այս կամ այն պարագայի բերումով, կամայ թէ ակամայ, ինքզինք կը գտնէ ընթացքի մը մէջ, որը կարելի է բնորոշել սխալ, մեղք կամ բարոյականի բացակայութիւնը: Էական է, որ աղօթքի առաջնորդութեամբ անկեղծ փափաքն ունենանք մեր կեանքը հեռու պահելու մեղքի փորձութենէն, որուն համար թողութիւն կը խնդրենք: Բայց բաւական չէ, որ մենք մեր գործած մեղքին համար թողութիւն խնդրենք: Նոյն ոգին պէտք է արտայայտենք նաեւ մենք եւ ներողամիտ ըլլանք բոլոր անոնց նկատմամբ, որ խօսքով կամ այլապէս վիրաւորած են մեզ:

Ներողամտութեան մասին, երբ կը խօսինք պէտք է յստակեցնել, որ այդ օրինական ակտ մը չէ, որը աւելի բարձր է քան օրէնքը: Որովհետեւ օրէնքը չի կրնար մարդուն շնորհել այն ինչ ներողամտութիւնը կրնայ փոխանցել մեզ: Աստուծոյ կողմէ մեզի շնորհուած մեղքերու թողութիւնը յստակօրէն մեզի կը պարգեւէ հոգեւոր վերածնունդ: Եւ նոյնը կրնանք կատարել նաեւ մենք մեր մարդկային կարողականութեամբ, որով եւ արտայայտած կ'ըլլանք Աստուծոյ կամքը:

«Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց»: Ամէն անգամ երբ կ'արտա-

սանենք աղօթքի այս բառերը փաստօրէն կը նորոգենք մեր քրիստոնէական կոչումը:

Ե. Փորձութիւն

«Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէն»:

«Տէրունական աղօթք»-ի այս բառերուն մէջ մենք կ'ըմբռնենք այն հիմնական միտքը, որ Աստուած մարդուն շնորհած է նաեւ այն զօրութիւնը, որով եւ մենք կը կարողանանք մեր անձերը հեռու պահելու եւ փորձութենէն եւ չարէն: Բանականութեամբ հարուստ մարդը եւ աւելին՝ հաւատքի աստուածային շնորհով առաջնորդուած հոգեւոր անձը պարտ է յաղթելու չարին, որպէսզի մեր անձերը, որ տաճար են Աստուծոյ բնակութեան, չքանդուին չարին ներգործութեամբ:

Աղօթքի այս բառերը արտասանելով մենք մեզի լսելի կը դարձնենք այն պատգամը, որը արտացոլուած է նաեւ Քրիստոսի կեանքի այն հանգրուանին, երբ մկրտութենէ յետոյ Ան առաջնորդեց անապատ ուր եւ Ան սաստեց չարը: Ուրեմն, քրիստոնեան, որը իր կեանքով պիտի հետեւի Քրիստոսի կեանքի օրինակին, իր մէջ պիտի ունենայ քաջութիւնը՝ սաստելու չարն ու փորձութիւնը, որպէսզի լուսաւորեալ մտքով ու հոգով արտասանէ նաեւ Տէրունական աղօթքին վերջին տողերը.. «Զի Քո է կարողութիւն, եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

*

* *

Մեր յորդորն է, որ իւրաքանչիւր հայ քրիստոնեայ իրեն շնորհուած օրը սկսի «Տէրունական աղօթք»-ով: Որովհետեւ աղօթքով բացուած օրը մենք կը դարձնենք ու կը վերածենք բարութեան աղբիւրի: Աղօթքը, որ

կեանքը կը տանի դէպի Աստուած, փաստօրէն կը վերահսկէ մեր կեանքերուն վրայ, որպէսզի պահենք կեանքը մաքուր եւ օրհնեալ:

Մեծ Վարդապետին աղօթքը աւելի քան երկու հազարամեակ լուսաւորած է անթիւ հոգիներ: Անոր վարդապետած աղօթքը իւրացուցած մարդիկ իրենց մէջ գտած են ներուժը հոգեւոր վերածնունդի: Եւ այստեղ է որ կը կայանայ մարդուն կեանքին գերագոյն պահը. հոգիին պայծառակերպութիւնը, որը պէտք է համարել հրաշագործուած կեանք:

Ով իր աղօթքը կը դարձնէ Քրիստոսով մեզի աւանդուած «Տէրունական աղօթք»-ը, այդպիսին կը զինուորագրուի Քրիստոսի առաքելոց զօրքին:

1-9 Հոկտեմբեր, 2015

Լոնսոն

ՄԱՍՈՒԼԻ ԴԵՐՆ ՈՒ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Երկար ժամանակէ ի վեր կը մտածէի թէ ի՞նչ պէտք է հաղորդել հանրութեան եւ յատկապէս մամուլի պատասխանատուներուն, բացատրելու համար մամուլի դերն ու ազդեցութիւնը: Նոյն այս օրերուն ձեռքս անցաւ Պոլսոյ Պատրիարքարանէն լոյս ընծայուած սքանչելի հրատարակութիւն մը, որ տիտղոսագրուած է *«Անդրանիկ կոնդակներ – Մահմանադրականի Շրջանի Պատրիարքներու»*, աշխատասիրութեամբ Վաղարշակ Սրկ. Սերովբեանի: Հատորին մէջ լոյս ընծայուած Անդրանիկ կոնդակները հրաշալիօրէն կ'ուղեգծեն հայ քրիստոնեայէն սպասուած կեանքի ճանապարհը ամենալայնօրէն ըմբռնուած: Այս գրութեամբ կ'ուզենք ի մասնաւորի հայ մարդուն ուշադրութեանը յանձնել 1951 թուականին հրապարակուած Գարեգին Տրապիզոնցի (Խաչատուրեան) Պատրիարքի Անդրա նիկ կոնդակին մէջ տեղ գտած այն հատուածը, որը կը բացատրէ թէ ո՞րն է մամուլին դերն ու ազդեցութիւնը: Չենք ուզեր որեւէ մեկնաբանութիւն կատարել եւ բաւարարուիլ այսքանը ըսելով՝ միայն, որ հայ մամուլը ներկայացնող իւրաքանչիւր անհատի համար օգտաշատ գրութիւն է սա, որը հիմնական ուղղութիւն կը ներշնչէ բոլոր այն մարդկանց համար, որոնք պարտ են մամուլը դարձնելու սերունդներու դաստիարակելու բարի միջոցին: Հայ մամուլի ընտանիքին մէջ ունինք թերթեր, որոնք կը պատկանին ժողովուրդին, որովհետեւ մինչեւ իսկ իրենց արձանագրած բառերուն բարի պատասխանատուութեամբ:

Ստորեւ կարդալ Գարեգին Տրապիզոնցի (Խաչատուրեան) Պատրիարքի խօսքը.

«Մենք խօսք ունինք սրտագին նաեւ մեր մամուլին: Ճրագ մ'ալ ինքն է, լուսաւորելու այն ճամբան՝ ուսկից պարտի քալել ամէն ոք: Իւրը նուազ եւ պատրոյգը անբաւական ճրագին լոյսը պիտի ըլլայ աղօտ եւ պիտի խաւարի իսկ: Հասարակ լուրերը, յաճախ գիտակցօրէն թէ անգիտակցաբար խեղաթիւրուած եւ գլխիվայր շրջուած, կը պարպեն լոյսը ճրագին եւ բերելով խաւարը՝ կը թողուն որ անոր նայողներ խարխափեն անորոշութեան մէջ եւ մոլորին: Քննութիւնն ու քննադատութիւնը, որոնք մամուլին կոչումէն բխած առանձնաշնորհներ պարտին ըլլալ, կը կորսնցնեն իրենց արժէքն ու իրաւունքը, ինչպէս նաեւ աղդեցութիւնն ի բարին եւ ի ճշմարիտը, երբ չեն ներշնչուած թափանցրած բուն իրողութիւններէն, այլ առաջնորդուած են երեւակայութիւններէ, կանխակալ կարծիքներէ, սեւեռամտածումներէ եւ մերթ ալ անխոստովանելի նկատումներէ: Ասոնք ոչ միայն չեն շիներ, այլ եւ կը քանդեն: Կը տեսնուին գրիչներ, որոնք չեն խղճահարիր սուտն իսկ կաղապարել փորձելէ ամենօրեայ վարկաբեկումներու մէջ այս կամ այն հասցէին, հասարակական կեանքը վրդովելով եւ ընկերային չարիքներու լայն դուռ բանալով: Ահափոր է մամուլի պատասխանատւութիւնը, երբ գրիչը կը սանձարձակէ՝ մոլեգին հովի մը նման յարձակելու այս ու այն կողմ եւ բարոյական աւերներ գործելու:

Մենք ցաւով կը դիտենք այս տխուր երեւոյթը գրեթէ ամէն շրջաններու մէջ եւ մեր սիրտը կ'արիւնտտի: Թէեւ «խթանի դէմ աքացելու» բոլոր փորձերը ի վերջոյ կը գտնեն իրենց արդար վախճանը, բայց կը խոցեն պահ մը դիտողներուն եւ տեսնողներուն խղճմտանքը իր մաքրութեան մէջ:

Մամուլը, որ կոչուած է մատակարարելու լոյս եւ հոգեկան սնունդ, պարտի գիտակցիլ եւ անաչառ, անշահախնդիր եւ անկողմնակալ դատողութեամբ ծառայել այդ ազնուական կոչումին: Միտք, լեզու, գրիչ՝ այդ կոչումէն պարտին քաղել իրենց ներշնչումները, առաջինը՝ իր հասունութեամբ, երկրորդը՝ իր մաքրութեամբ եւ երրորդը՝ իր պատկառագոյլ լրջութեամբ: Երգիծանքն անգամ ունի իր շնորհը, որ իր ջերմիկ շունչը՝ կառնէ բարիին կամեցողութենէն, զգուշանալով միանգամայն ծիծաղելիութիւններէ: Արդարեւ, ինչ տգեղ եւ ողորմելի է այն երգիծանքը, երբ պարպուած է ոգիէ եւ բովանդակութենէ:

Կոչ կ'ընենք, սրտցաւորէն մեր մամուլի ծառայողներուն, որ ունենան պահանջելի զգուշաւորութիւն՝ չարձակելու սանձը քանդիչ Չարին, որպէսզի Բարին կատարէ իր շինարար ու շնորհաբեր դերը՝ ըղձալի խաղաղութեան մէջ: Մեր ժողովուրդը այդ բանին պէտք ունի:

Նոյն աստէն կը յորդորենք մեր սիրելի ժողովուրդն ալ ըլլալ արթուն՝ ընտրելու միշտ խաղաղութեան եւ շինութեան ապահով ճամբան, որ Աւետարանի լոյսով ցոյց կը տրուի իրեն, չազդուելով խափանարար իրադարձութիւններէն, եւ կարեկից իսկ ըլլալով անոնց հեղինակներուն հանդէպ: Աւետարանի լոյսը՝ ճշմարտութեան լոյսն է. Աստուծոյ լոյսն է: Աստուած իսկ է: Առաջնորդուիլ հարկ է այդ լոյսով: «Մի որ զձեզ խաբեսցէ բանիւք սնոտուվք, զի վասն այսորիկ իսկ գայ բարկութիւն Աստուծոյ ի վերայ որդւոցն անհաւանութեան: Մի այսուհետեւ լինիք բաժանորդք նոցա...: Իբրեւ զորդիս լուսոյ գնացէք: Զի պտուղ լուսոյ բարութեամբ եւ արդարութեամբ եւ ճշմարտութեամբ» (Եփես. 5: 6-9): Առաքեալի խօսքերն են ասոնք՝ զորս կը յիշեցնեմ մեր

*եկեղեցւոյ բոլոր զաւակներուն անխտիր, բոլոր անոնց՝
որոնք իբրեւ «լոյսի որդիներ», լոյսի զէնքն են հազաժ*
(Ա. Թեսաղ. 5: 5 եւ Հռովմ. 13:12):

Մամուլի առաքելութիւնն է դառնալ լոյսն ու օրհ-
նութիւնը հասարակական կեանքին մէջ:

4 Հոկտեմբեր, 2015

ՅՈՒՑԱԿ

Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանի Հրատարակած Աշխատասիրութիւններու

- Կոմիտաս Վարդապետ *Ս. Էջմիածին, 1988*
- Փունջ մը քարոզներ *Թորոնթօ, 1989*
- Հովուական աստուածաբանութեան
գործնական ձեռնարկ *Թորոնթօ, 1989*
- Ապրուած խոհեր, Բ. Հատոր *Մոնրէալ, 1991*
- Աւետարանական խոհեր *Մոնրէալ, 1991*
- Մեծ Պահքի հանգրուաններով *Մոնրէալ, 1991*
- The Lent Period *Montreal, 1991*
- Խօսող հոգիներ *Մոնրէալ, 1992*
- Հոգելից հանդիպումներ *Մոնրէալ, 1993*
- Հոգեներոգ յուշեր *Մոնրէալ, 1993*
- Հոգեշունչ մանրապատումներ, Ա. Հատոր *Մոնրէալ, 1994*
- Նորակնունք *Մոնրէալ, 1994*
- Փունջ մը քարոզներ, Ա. Հատոր *Մոնրէալ, 1994*
- Հոգիիս մկրտութիւնը *Մոնրէալ, 1994*
- Քարոզներ *Մոնրէալ, 1995*
- Մեծ Պահքի խորհրդածութիւններ, Ա. Հատոր *Մոնրէալ, 1995*
- Մտորումներ հոգելոյս Վազգէն Ա. Վեհափառի
շիրիմին առջեւ *Մոնրէալ, 1995*
- Առաջնորդի տեղեկագիր *Մոնրէալ, 1996*
- Մեծ Պահքի խորհրդածութիւններ, Բ. Հատոր *Մոնրէալ, 1997*
- Խոհեր *Մոնրէալ, 1997*

- Տաղաւար փարօզներ եւ ելոյթներ *Մոնրէալ, 1997*
- Նոր տարին կը ծնի մարդուն մէջ *Մոնրէալ, 1997*
- Սուրբ Պատարագ Հայաստանեայց
Առաքելական Եկեղեցւոյ *Մոնրէալ, 1997*
- Աւագ Շաբթուայ խոհեր *Մոնրէալ, 1998*
- Մեծ Պահփի խորհրդածութիւններ, Գ. Հատոր *Մոնրէալ, 1998*
- Հոգեւոր ճանապարհորդութիւն *Մոնրէալ, 1998*
- Հայաստանը առաքելութիւն է *Մոնրէալ, 1998*
- Մեծ Պահփի խորհրդածութիւններ, Դ. Հատոր *Մոնրէալ, 2000*
- Փունջ մը փարօզներ, Բ. Հատոր *Մոնրէալ, 2000*
- Հոգեշունչ մանրապատումներ, Բ. Հատոր *Մոնրէալ, 2000*
- Հայաստանեայց Եկեղեցին՝ կեանքի ճանապարհ *Մոնրէալ, 2000*
- Փունջ մը փարօզներ, Գ. հատոր *Մոնրէալ, 2002*
- Հոգեշունչ մանրապատումներ, Գ. Հատոր *Մոնրէալ, 2002*
- Reflections on the 1700 anniversary
of Christianity in Armenia *Montreal, 2002*
- The Christology of St. Nerses *Montreal, 2002*
- Խմորուինք աղօթքով *Մոնրէալ, 2003*
- Փունջ մը փարօզներ, Դ. Հատոր *Մոնրէալ, 2003*
- The Armenian Church, a Journey of Life *Montreal, 2003*
- Արարողութիւն Հայ Եկեղեցասէր Տիկնանց Օրուայ *Մոնրէալ, 2003*
- Հոգեշունչ մանրապատումներ, Դ. Հատոր *Գալիֆորնիա, 2003*
- Զֆոյս ի ֆոյոց... *Մոնրէալ, 2003*
- Spiritual Reflections *Los Angeles, 2004*

- Return to God *Los Angeles, 2004*
- Ծաղկափառ *Պրբպէնք, 2004*
- Փոնք մը քարոզներ, Ե. Հատոր *Պրբպէնք, 2005*
- Հոգեշունք մանրապատումներ *Պրբպէնք, 2005*
- Քսանհիքգամեակը ճանապարհ ոոր արշալոյսներու *Պրբպէնք, 2006*
- Հոգեշունք մանրապատումներ, Բ. Հատոր *Մոնրէալ, 2000*
- The Lenten Journey... Spiritual Reflections/
Հոգեւոր ճանապարհորդութիւն *Պրբպէնք, 2007*
- Փոնք մը քարոզներ, Զ. Հատոր *Պրբպէնք, 2007*
- Faith in Action *Burbank, 2007*
- Աւագ Շարքը՝ Դուռն Յարութեան *Պրբպէնք, 2007*
- Հոգեշունք մանրապատումներ *Պրբպէնք, 2008*
- Փոնք մը քարոզներ, Է. Հատոր *Պրբպէնք, 2008*
- Փոնք մը քարոզներ, Ը. Հատոր *Պրբպէնք, 2010*
- Ուղեցոյց Հովուական Կեանքի *Պրբպէնք, 2010*
- Քահանային 40-Օրեայ Ճանապարհը *Պրբպէնք, 2010*
- Միտքէն դէպի Սիրտ, Ասոյքներու ընտրանք *Ս. Էջմիածին, 2010*
- Փոնք մը քարոզներ, Թ. Հատոր *Պրբպէնք, 2010*
- «Հայր Մեր» Տէրունական Աղօթքի
Մեկնութիւն Մանուկներու համար *Պրբպէնք, 2010*
- Մանրապատումներ եւ խոհեր *Պրբպէնք, 2011*
- Մանրապատումներ եւ խոհեր, Դ. Հատոր *Պրբպէնք, 2012*
- Փոնք մը Քարոզներ, Ժ. Հատոր *Պրբպէնք, 2012*
- Նոր Կեանքի Դուռը *Պրբպէնք, 2012*
- Սրտէ Բիւսած Աղօթքներ *Պրբպէնք, 2012*
- úâúáé ÝÀ ü · ðÁÁáçð, Õ · óãð È ¶ *èÀð é Ááy, 2013*
- Nourish & Enrich your Spirituality *Burbank, 2013*
- , · ðâúÇç · á îçðÝçð *èÀð é Ááy, 2013*
- Ôâ»âú Õ · ÇËÍáçð · ÛÿÇ · »Ëöý *èÀð é Ááy, 2013*
- ¶ é ðâú · Ñ Õç · áýË Þâúãçð *èÀð é Ááy, 2013*
- Û · áð · é · óâúÝáçðâú Õ · ù · ý · Ñâß

ՅՈՒՑԱԿ

Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանի Հրատարակած Աշխատասիրութիւններու

- Կոմիտաս Վարդապետ *Ս. Էջմիածին, 1988*
- Փունջ մը քարոզներ *Թորոնթօ, 1989*
- Հովուական աստուածաբանութեան
գործնական ձեռնարկ *Թորոնթօ, 1989*
- Ապրուած խոհեր, Բ. Հատոր *Մոնրէալ, 1991*
- Աւետարանական խոհեր *Մոնրէալ, 1991*
- Մեծ Պահքի հանգրուաններով *Մոնրէալ, 1991*
- The Lent Period *Montreal, 1991*
- Խօսող հոգիներ *Մոնրէալ, 1992*
- Հոգելից հանդիպումներ *Մոնրէալ, 1993*
- Հոգեներոգ յուշեր *Մոնրէալ, 1993*
- Հոգեշունչ մանրապատումներ, Ա. Հատոր *Մոնրէալ, 1994*
- Նորակնունք *Մոնրէալ, 1994*
- Փունջ մը քարոզներ, Ա. Հատոր *Մոնրէալ, 1994*
- Հոգիիս մկրտութիւնը *Մոնրէալ, 1994*
- Քարոզներ *Մոնրէալ, 1995*
- Մեծ Պահքի խորհրդածութիւններ, Ա. Հատոր *Մոնրէալ, 1995*
- Մտորումներ հոգելոյս Վազգէն Ա. Վեհափառի
շիրիմին առջեւ *Մոնրէալ, 1995*
- Առաջնորդի տեղեկագիր *Մոնրէալ, 1996*
- Մեծ Պահքի խորհրդածութիւններ, Բ. Հատոր *Մոնրէալ, 1997*
- Խոհեր *Մոնրէալ, 1997*

- Տաղաւար փարօզներ եւ ելոյթներ *Մոնրէալ, 1997*
- Նոր տարին կը ծնի մարդուն մէջ *Մոնրէալ, 1997*
- Սուրբ Պատարագ Հայաստանեայց
Առաքելական Եկեղեցւոյ *Մոնրէալ, 1997*
- Աւագ Շաբթուայ խոհեր *Մոնրէալ, 1998*
- Մեծ Պահֆի խորհրդածութիւններ, Գ. Հատոր *Մոնրէալ, 1998*
- Հոգեւոր ճանապարհորդութիւն *Մոնրէալ, 1998*
- Հայաստանը առաքելութիւն է *Մոնրէալ, 1998*
- Մեծ Պահֆի խորհրդածութիւններ, Դ. Հատոր *Մոնրէալ, 2000*
- Փունջ մը փարօզներ, Բ. Հատոր *Մոնրէալ, 2000*
- Հոգեշունչ մանրապատումներ, Բ. Հատոր *Մոնրէալ, 2000*
- Հայաստանեայց Եկեղեցին՝ կեանքի ճանապարհ *Մոնրէալ, 2000*
- Փունջ մը փարօզներ, Գ. հատոր *Մոնրէալ, 2002*
- Հոգեշունչ մանրապատումներ, Գ. Հատոր *Մոնրէալ, 2002*
- Reflections on the 1700 anniversary
of Christianity in Armenia *Montreal, 2002*
- The Christology of St. Nerses *Montreal, 2002*
- Խմորուինք աղօթքով *Մոնրէալ, 2003*
- Փունջ մը փարօզներ, Դ. Հատոր *Մոնրէալ, 2003*
- The Armenian Church, a Journey of Life *Montreal, 2003*
- Արարողութիւն Հայ Եկեղեցասէր Տիկնանց Օրուայ *Մոնրէալ, 2003*
- Հոգեշունչ մանրապատումներ, Դ. Հատոր *Գալիֆորնիա, 2003*
- Զֆոյս ի ֆոյոց... *Մոնրէալ, 2003*
- Spiritual Reflections *Los Angeles, 2004*

- Return to God *Los Angeles, 2004*
- Ծաղկափառ *Պրբպէնք, 2004*
- Փոնք մը քարոզներ, Ե. Հատոր *Պրբպէնք, 2005*
- Հոգեշունք մանրապատումներ *Պրբպէնք, 2005*
- Քսանհիկգամեակը ճանապարհ ոոր արշալոյսներու *Պրբպէնք, 2006*
- Հոգեշունք մանրապատումներ, Բ. Հատոր *Մոնրէալ, 2000*
- The Lenten Journey... Spiritual Reflections/
Հոգեւոր ճանապարհորդութիւն *Պրբպէնք, 2007*
- Փոնք մը քարոզներ, Զ. Հատոր *Պրբպէնք, 2007*
- Faith in Action *Burbank, 2007*
- Աւագ Շարաքը՝ Դուռն Յարութեան *Պրբպէնք, 2007*
- Հոգեշունք մանրապատումներ *Պրբպէնք, 2008*
- Փոնք մը քարոզներ, Է. Հատոր *Պրբպէնք, 2008*
- Փոնք մը քարոզներ, Ը. Հատոր *Պրբպէնք, 2010*
- Ուղեցոյց Հովուական Կեանքի *Պրբպէնք, 2010*
- Քահանային 40-Օրեայ Ճանապարհը *Պրբպէնք, 2010*
- Միտքէն դէպի Սիրտ, Ասոյքներու ընտրանի *Ս. Էջմիածին, 2010*
- Փոնք մը քարոզներ, Թ. Հատոր *Պրբպէնք, 2010*
- «Հայր Մեր» Տէրունական Աղօթքի
Մեկնութիւն Մանուկներու համար *Պրբպէնք, 2010*
- Մանրապատումներ եւ խոհեր *Պրբպէնք, 2011*
- Մանրապատումներ եւ խոհեր, Դ. Հատոր *Պրբպէնք, 2012*
- Փոնք մը Քարոզներ, Ժ. Հատոր *Պրբպէնք, 2012*
- Նոր Կեանքի Դուռը *Պրբպէնք, 2012*
- Սրտէ Բիսած Աղօթքներ *Պրբպէնք, 2012*
- úâúáé ÝÅ ü · ðáÁáçð, Õ · óãð È ¶ *èÅð é Ááy, 2013*
- Nourish & Enrich your Spirituality *Burbank, 2013*
- , · ðâúÇç · á îçðÝçð *èÅð é Ááy, 2013*
- Ôâ»âú Õ · ÇËÍáçð · ÛÿÇ · »Ëöý *èÅð é Ááy, 2013*
- ¶ é ðâú · Ñ Õç · áýË Þâúãçð *èÅð é Ááy, 2013*
- Û · áð · é · óâúÝáçðâú Õ · ù · ý · Ñâß *èÅð é Ááy, 2013*

- . The Lenten Journey,
 Հանապարհորդութիւն Աստուծոյ Հետ *Պըրպլէնք, 2013*
- . Սրտէ Բիսած Աղօթքներ (Ա, Բ, Գ) (Հայ-Անգլ) *Պըրպլէնք, 2014*
- . Սրտէ Բիսած Աղօթքներ
 Հաւատով Խոստովանիմի ներշնչումով *Պըրպլէնք, 2014*
- . Faith in Action (2nd Ed) *Burbank, 2014*
- . Աղօթարան Հայ Մանուկին (Հայ-Անգլ) *Պըրպլէնք, 2014*
- . Աւագ Շաբթուան Հոգեւոր
 Հանապարհորդութիւն, (Հայ-Անգլ) *Պըրպլէնք, 2015*
- . Փունջ մը Քարոզներ ԺԲ *Պըրպլէնք, 2015*
- . Spiritual Reflections *Burbank, 2015*
- . The Lord's Prayer,
 Տէրունական Աղօթք (Booklet) *Պըրպլէնք, 2016*
- . Christian Identity,
 Քրիստոնէական Ինքնութիւն (Booklet) *Պըրպլէնք, 2016*
- . Towards a more fruitful Life,
 Դէպի Առաւել Կեանք (Booklet) *Պըրպլէնք, 2016*
- . Հրաւեր Աղօթքի *Պըրպլէնք, 2017*
- . Դէպի Նոր Կեանք *Պըրպլէնք, 2017*
- . The Life *Burbank, 2017*